





ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՍԲԼԵԱՅԻ

ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ



ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆԱԶ ԹՈՒՂԹ



ՎԱՆԱԶՈՐ

2022

Սույն փաստաթուղթը պատրաստվել է Հելսինկյան քաղաքացիական
ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից,
Ժողովրդավարության աջակցության ազգային ֆոնդի (NED) ֆինանսական
աջակցությամբ:

Փաստաթղթում արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու
եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն
ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ԳԼՈՒԽ 1.	7
Անվտանգության ապահովումը, կառավարումն ու վերահսկողությունը՝ ժողովրդավարական, քաղաքացիական հսկողության, իրավունքի գերակայության և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի շրջանակներում	7
ԱՌԱՋԱԲԱՆ	7
Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության	12
առանձնահատկությունները	12
Ռազմական օմբուդսմենի ինստիտուտը և զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության նորմերը	27
Անվտանգային ոլորտի նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը	32
Կանայք ՀՀ զինված ուժերում	49
Առաջարկություններ	56
ԳԼՈՒԽ 2.	61
Փոքր պետությունների պաշտպանական ռազմավարության առանձնահատկությունները և ռազմական սպառնալիքներին դիմակայելու ժամանակակից կարողությունները: Դասեր Հայաստանի համար	61
Պաշտպանական համակարգի և զինված ուժերի դինամիկ ադապտացիայի կարևորությունը	67
Հայաստանի զինված ուժերի ադապտացվելու անբավարար ունակությունների հիմնական պատճառները	76
ԶՈՒ նոր կառուցվածքի կոնցեպտուալ փիլիսոփայությունը	80
Կառավարում, վերահսկում և կապ որպես համալիր միասնական համակարգ	91
Տարածքային պաշտպանության համակարգի որդեգրում և իրագործարար մարտավարության սկզբունքների ներդրում	94
Համակարգերի, սպառազինությունների ձեռքբերման և արտադրության ռազմավարության տրամաբանություն	103
Ռազմագիտական համալիրի ստեղծում	107
Առաջարկություններ	109

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի Թավշյա հեղափոխությունից հետո ՀՀ նոր իշխանությունները հանձնառեցին իրականացնել համապարփակ ժողովրդավարական բարեփոխումներ, մինչդեռ, անվտանգային ողջ համակարգը շարունակեց մնալ հայ-ռուսական երկկողմանի եւ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) շրջանակներում:

2020 թ. հուլիսի 10-ին ընդունվեց ՀՀ անվտանգության նոր ռազմավարությունը¹, որը երկրորդն էր անկախության ողջ ժամանակահատվածում (առաջինն ընդունվել է 2007 թ-ին): Ռազմավարության ընդունումից ամիսներ անց, Ադրբեջանը, ոտնահարելով ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքը, լայնամասշտաբ պատերազմ սանձազերծեց Արցախի դեմ: 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ Ռուսաստան-Ադրբեջան-Հայաստան հայտարարության² արդյունքում դադարեցվեցին պատերազմական գործողությունները, սակայն հետպատերազմական ժամանակահատվածում Ադրբեջանը շարունակեց ռազմական ագրեսիան՝ ոչ միայն Լեռնային Ղարաբաղի բնակիչների, այլև Հայաստանի Հանրապետության նկատմամբ (2021 թ. մայիսին ադրբեջանական զորքերը օկուպացրեցին ՀՀ ինքնիշխան տարածքի առնվազն 41 քառակուսի կմ³):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատերազմի ծանր հետևանքները էականորեն փոխել են Հայաստանի Հանրապետության անվտանգային միջավայրը, ինչպես նաև առաջացրել են Հայաստանի անվտանգային ճարտարապետության խորը ճգնաժամ՝ անհրաժեշտ է վերանայել ներկայիս Ռազմավարությունը և Ռազմական դոկտրինը՝ նոր իրողություններից բխող՝ պետության ազգային անվտանգության քաղաքականության հիմնական տարրերին համահունչ:

ՀՀ կառավարությունը, թե՛ պատերազմական գործողությունների ավարտից հետո, թե՛ 2021 թ. արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո,

¹ https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf

² <https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/>

³ <https://www.primeminister.am/hy/press-release/item/2021/11/16/Nikol-Pashinyan-Security-Council-meeting/>

պարտավորություն վերցրեց բարեփոխելու զինված ուժերը, սակայն հանրությունը մինչ այժմ տեղեկացված չէ այդ բարեփոխումների ընթացքից: Ավելին, հայտնի չէ այդ բարեփոխումների իրականացման Հայեցակարգը: Այս ընթացքում զինված ուժերում շարունակվում են արձանագրվել զինճառայողների մարդու իրավունքների խախտումներ, և այդ փաստերը հիմնավորում են զինված ուժերում մարդու իրավունքների շարունակվող մտահոգիչ դրությունը⁴:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը (ՀՔԱ Վանաձորի գրասենյակ) նախաձեռնեց զինված ուժերի բարեփոխումների վերաբերյալ Հայեցակարգի մշակման աշխատանքները՝ փորձագետների ներգրավմամբ, որը ներկայացնում ենք սույն հրապարակմամբ:

Առաջին անգամ զինված ուժերի բարեփոխումների Հայեցակարգի հիմքում առաջարկում ենք «փոքր պետության» ռազմական ռազմավարության ադապտացիայի գիտատեսական մոտեցումը, որի հիման վրա ենք պատկերացնում նաև Հայաստանի Հանրապետության նոր անվտանգության ռազմավարության ձևավորումը և ռազմավարական տեսլականի ստեղծումը: Կարևոր ենք համարել անդրադառնալ Հայաստանի Հանրապետության՝ որպես փոքր պետություն, զինված ուժերի կառուցվածքի կոնցեպտուալ փիլիսոփայությանը, նրա պաշտպանական ռազմավարության առանձնահատկություններին և ռազմական սպառնալիքներին դիմակայելու ժամանակակից կարողություններին, պաշտպանական համակարգի և զինված ուժերի դինամիկ ադապտացիայի կարևորությանը՝ հաշվի առնելով միջազգային և տարածաշրջանային անվտանգության միջավայրը և հնարավոր սպառնալիքները:

Վերլուծությամբ առաջարկվում է, որ ՀՀ պաշտպանական դոկտրինը և ԶՈւ արդիականացումն ու բարեփոխումները հիմնված լինեն, կամ, առնվազն, մեծապես հաշվի առնեն վերը ներկայացված պաշտպանական լուծումներն ու փորձը՝ ցուցաբերելով համապատասխան համակարգային մոտեցում եւ անհրաժեշտ քաղաքական կամք՝ նկատի ունենալով, որ Հայաստանի աշխարհագրական

⁴ <https://hcav.am/2021-mahvan-depger/>

չափանիշները համեմատելի և նույնիսկ համադրելի են մի շարք փոքր պետությունների հետ, որոնք ունեն հաջողված անվտանգային հայեցակարգեր, և որոնց փորձը նույնպես ներկայացված է սույն աշխատանքում:

Սույն փաստաթուղթն անդրադառնում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի քաղաքացիական, ժողովրդավարական վերահսկողության առկա մեխանիզմներին, անվտանգային ոլորտի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության գործիքներին, արդյունավետ և նոր մեխանիզմների ձեռավորման անհրաժեշտությանը՝ ի նպաստ թափանցիկության եւ հաշվետվողականության սկզբունքների հնարավորինս արդյունավետ ապահովման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման:

Աշխատությունն առաջարկում է դիտարկել Հայաստանի Հանրապետության անվտանգային ոլորտի նկատմամբ արդյունավետ կառավարման սկզբունքների գնահատման գործընթացի իրականացումը՝ որպես պաշտպանական ոլորտի բարեփոխումների արդյունավետ պլանավորման և կիրարկման հրամայական: Կարևորվում է Ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ներդրումը, զինված ուժերում կանանց դերը, նրանց ներգրավման ու առաջխաղացման հնարավորությունները եւ խոչընդոտների հաղթահարումը, ինչպես նաև՝ զինված ուժերում ներգրավված անձանց կրթական խնդիրների հասցեագրումը:

Ակնկալում ենք ներկայացված Հայեցակարգի նախագծի շուրջ ակտիվ քննարկումներ ինչպես պաշտպանական գերատեսչության, այնպես էլ անվտանգային քաղաքականություն մշակող մարմինների, մասնավորապես՝ ՀՀ անվտանգության խորհրդի կողմից:

Նշենք, որ Փաստաթուղթը պետական մարմիններին ներկայացնելուց հետո ստացել ենք արձագանքներ, մասնավորապես՝ ՀՀ անվտանգության խորհրդի կողմից նախաձեռնվել է աշխատանքային քննարկում, իսկ ՀՀ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հանձնաժողովի նախագահի եւ ՀՀ պաշտպանության նախարարության գլխավոր քարտուղարի կողմից ստացել ենք գրավոր պատասխաններ, որոնք կից ներկայացվում են:

ԳԼՈՒԽ 1.

Անվտանգության ապահովումը, կառավարումն ու վերահսկողությունը՝ ժողովրդավարական, քաղաքացիական հսկողության, իրավունքի գերակայության և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի շրջանակներում



Հեղինակ՝ Արմինե Մարգարյան, ռազմաքաղաքական հարցերով փորձագետ:

Ա.Մարգարյանն աշխատանքային գործունեություն է ծավալել ՀՀ Անվտանգության խորհրդում, որպես գրասենյակի ղեկավար, իսկ մինչ այդ՝ որպես ԱԽ քարտուղարի խորհրդական, ՀՀ արտաքին գործերի նախարարության Սպառազինությունների վերահսկման և միջազգային անվտանգության վարչության փորձագետ, ԱՊՀ վարչության ռեֆերենտ:

Ա.Մարգարյանն ավարտել է Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության դիվանագիտական ակադեմիան, միջազգային հարաբերությունների մագիստրոսի կոչում է ստացել Երևանի Հրաչյա Աճառյան համալսարանում և մասնակցել է մասնագիտական փորձառության հարստացման ծրագրերի՝ Ժնևի անվտանգության քաղաքականության կենտրոնում, Ջորջ Մարշալի անվտանգային խնդիրների Եվրոպական կենտրոնում, ՆԱՏՕ-ի դպրոցում, Ջորգիայի համալսարանի Միջազգային անվտանգության և ռազմավարական նշանակության ապրանքների արտահանման վերահսկման կենտրոնում, Նիդերլանդների «Քլինգենդալ» միջազգային հարաբերությունների ինստիտուտում:

Ա.Մարգարյանը հանդես է գալիս հարցազրույցներով և բազմաթիվ հոդվածների հեղինակ է:

ԱՌԱՋԱԲԱՆ

Պաշտպանական ոլորտի բարեփոխումների արդյունավետ պլանավորման և կիրարկման անհրաժեշտ նախապայմաններից է Հայաստանի Հանրապետության

անվտանգային ոլորտի նկատմամբ արդյունավետ կառավարման սկզբունքների⁵ գնահատման գործընթացը: «Անվտանգային ոլորտի նկատմամբ արդյունավետ կառավարման սկզբունքների կիրառման ժամանակ պետությունը բնակչության անվտանգությունն ապահովում է արդյունավետ և հաշվետու կերպով՝ ժողովրդավարական քաղաքացիական հսկողության, իրավունքի գերակայության և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի շրջանակներում⁶»:

Անվտանգային ոլորտի նկատմամբ արդյունավետ կառավարման՝ **հաշվետվողականության** սկզբունքի իրականացումը ապահովվում է արտաքին վերահսկողական մարմինների գործառույթների միջոցով, որոնց թվում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում Ազգային ժողովի կողմից իրականացվող խորհրդարանական վերահսկողության մեխանիզմները, ժողովրդավարական և խորհրդարանական վերահսկողության ամրապնդման գործում քաղհասարակության կողմից իրականացվող գործառույթները և Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) և/կամ Ռազմական օմբուդսմենի ինստիտուտի (ՌՕԻ) վերահսկողական մեխանիզմները: Ոլորտի հաշվետվողականությունը պահանջում է նաև ներքին վերահսկողական մեխանիզմների կիրարկում, որն իր մեջ, որպես օրինակ, կարող է ներառել զինված ուժերի անդամների մարդու իրավունքների պաշտպանությանը միտված ներքին ընթացակարգեր՝ մարդու իրավունքների ոլորտում պետության կողմից ստանձնած պարտավորություններին համահունչ⁷:

Հաշվետվողականության սկզբունքն ունի առանցքային նշանակություն անվտանգային ոլորտի դերակատարների կողմից՝ իրենց գործառույթների արդյունավետ իրականացման, մարդկային անվտանգության և հանրության հետ վստահության և համագործակցային մթնոլորտի ձևավորման ապահովման համար:

⁵ Սույն աշխատությունը դիտարկում է հաշվետվողականության, թափանցիկության, արդյունավետության և մասնակցայնության սկզբունքները, որպես անվտանգային ոլորտի նկատմամբ արդյունավետ կառավարման սկզբունքներ:

⁶ Տես՝ «Անվտանգության ոլորտի կառավարում. Լավ կառավարման սկզբունքների կիրառման անվտանգության ոլորտի նկատմամբ», Անվտանգության ոլորտի կառավարման Ժնևի կենտրոն (DCAF), 5-րդ էջ:

⁷ 2020թ. ապրիլի 13-ից ամենօրյա ռեժիմով ծառայության է անցել ՊՆ ԳՇ-ում գործող «Վստահության գիծը», ինչը հնարավորություն է ընձեռում դիմումները, բողոքներն ու առաջարկները ներկայացնել անանուն:

Հաշվետվողականության խթանման առանցքային գործոնը *թափանցիկության* ապահովումն է: Թափանցիկության սկզբունքի կիրարկումը ենթադրում է, որ անվտանգային ոլորտին վերաբերող որոշումների հետևանքները կրող շրջանակներին, այսինքն՝ հասարակությանը, պետք է հասանելի լինի որոշումների, քաղաքականությունների վերաբերյալ տեղեկատվությունը, օրինակ՝ խորհրդարանական հանձաժողովների հաշվետվությունները, տարատեսակ ռազմավարական բնույթի փաստաթղթերը և այլն: Առհասարակ, անվտանգային ոլորտը համարվում է թափանցիկ այն դեպքում, երբ ոլորտի քաղաքականության մշակման և իրականացման գործընթացը հանրայնորեն հասանելի է շահագրգիռ բոլոր դերակատարներին՝ լրատվամիջոցներին, քաղաքացիական հասարակությանը, պատգամավորներին, հակառակ դեպքում առաջ են գալիս անվտանգային ոլորտի լեգիտիմության և մարդու իրավունքների ոտնահարման խնդիրներ: «Տեղեկատվության հասանելիությունը, որը ենթադրում է պետության գործունեության նկատմամբ հանրության վերահսկողության հնարավորություն, ոչ միայն երաշխիքներ է ստեղծում պետական պաշտոնյաների կողմից չարաշահումները կանխելու համար, այլև հնարավորություն է տալիս հասարակությանն իր դերակատարումն ունենալ պետության քաղաքականությունը որոշելու գործում և դրանով իսկ կազմում է արդյունավետ ազգային անվտանգության, ժողովրդավարական մասնակցության և ողջամիտ քաղաքականության ձևավորման կարևորագույն բաղադրիչը»⁸: Միննույն ժամանակ, որոշ դեպքերում, երբ տեղեկատվությունը պարունակում է պետական գաղտնիք և/կամ ազգային անվտանգության շահերին վնաս հասցնելու ռիսկ, իրականացվում են անհրաժեշտ սահմանափակումներ, որոնք որպես կանոն կարգավորվում են համապատասխան իրավական ակտերով: Այս համատեքստում, անհրաժեշտ է դիտարկել գաղտնի պահվող տեղեկատվության և գործընթացների նկատմամբ հատուկ վերահսկողական մեխանիզմի(ների) ներդրման

⁸Տես՝ «Ազգային անվտանգության և տեղեկատվության իրավունքի միջազգային սկզբունքներ» (Յվանեի սկզբունքներ): Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://archive.hcav.am/publications/the-tshwane-principles/>

նպատակահարմարությունը՝ խոչընդոտելու համար տեղեկատվության թափանցիկության սահմանափակումներին վերաբերող չարաշահումները⁹:

Արդյունավետ վերահսկողության, հաշվետվողականության և թափանցիկության բացակայությունը նպաստում է անվտանգային ոլորտում համակարգային կոռուպցիայի արմատավորմանը, կամայական քաղաքականությունների և նեղ անձնական շահերի ամրապնդմանը, կոռումպացված և անձնավորված կարիերային առաջխաղացումների դեպքերի ավելացմանը, ազգային անվտանգության և պաշտպանական կարողությունների և ներքին անվտանգության թուլացմանը:

Անվտանգային ոլորտի նկատմամբ լավ կառավարումը պահանջում է նաև *արդյունավետության* սկզբունքի առկայություն: Մասնավորապես՝ ոլորտի դերակատարները պետք է իրենց պարտականություններն ու առաքելություններն իրականացնեն բարձր արհեստավարժությամբ՝ հենվելով պետության կողմից մարդկային անվտանգության՝ հստակ ձևակերպված նպատակների և քաղաքականությունների վրա: Սա առաջին հերթին պահանջում է քաղաքական ղեկավարության և ռազմական ղեկավարարության միջև արդյունավետ հաղորդակցության առկայություն, գործառույթների հստակություն, հրապարակայնորեն հայտնի, անկողմնակալ կերպով կիրառվող և մարդու

⁹ 2013թ. հունիսի 12-ին հրապարակված «Ազգային անվտանգության և տեղեկատվության իրավունքի միջազգային սկզբունքները» (Ցվանեի սկզբունքներ) սահմանում են, որ տեղեկատվություն ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել ազգային անվտանգության հիմքով միայն այն դեպքում, եթե կառավարությունը կարողանա ապացուցել, որ սահմանափակումը նախատեսված է օրենքով, և անհրաժեշտ է ժողովրդավարական պետությունում ազգային անվտանգության օրինաչափ շահերը պաշտպանելու համար: Բացի այդ, օրենքով սահմանված պետք է լինեն պատշաճ երաշխիքներ չարաշահումների դեմ, այդ թվում՝ սահմանափակման հիմնավորվածության անհապաղ, լիարժեք, հասանելի և արդյունավետ ուսումնասիրություն անկախ վերահսկողական մարմնի կողմից և լիարժեք վերանայում դատարանների կողմից: Օրենքը պետք է լինի մատչելի և հստակ, որպեսզի անհատները կարողանան հասկանալ, թե ինչպիսի տեղեկատվություն կարող է չտրամադրվել, ինչպիսի տեղեկատվություն պետք է տարածել, իսկ տեղեկատվության տրամադրման հետ կապված ո՞ր գործողություններն են պատժելի: Տեղեկատվություն ստանալու իրավունքի՝ ազգային անվտանգության հիմքով սահմանափակվելը կարող է պայմանավորված լինել նաև ժողովրդավարական պետությունում անհրաժեշտության հանգամանքով: Այս դեպքում, տեղեկատվության բացահայտումը պետք է պարունակի ազգային անվտանգության օրինաչափ շահերի զգալի վնաս հասցնելու իրական և ճանաչելի ռիսկ, տեղեկատվության տրամադրման հետևանքով պատճառվելիք վնասի ռիսկը պետք է գերակայի տեղեկատվության բացահայտման ընդհանուր հանրային շահի նկատմամբ: Բացի այդ, սահմանափակման կիրառումը չպետք է խախտի տեղեկատվություն ստանալու իրավունքի բուն էությունը:

իրավունքների միջազգային և ազգային նորմերին համահունչ օրենքների առկայություն, գրագետ կադրային քաղաքականություն և այլն: Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության արդյունավետության համատեքստում առանցքային նշանակություն ունի քաղաքացիական փորձառության¹⁰ տարրի ինստիտուցիոնալացումը, երբ ներդրվում են պաշտպանական քաղաքականության նկատմամբ վերահսկողական գործառույթներ իրականացնող քաղաքացիական մարմինների՝ պաշտպանական ոլորտի գիտելիքների շարունակական կատարելագործման պահանջներ և մեխանիզմներ: Վերոգրյալի համատեքստում, որպես օրինակ, անհրաժեշտ է դիտարկել Ազգային ժողովի Անվտանգության և պաշտպանության մշտական հանձնաժողովի անդամների կողմից հաստատված պարբերականությամբ համապատասխան կրթական միջոցառումներին¹¹ մասնակցելու, ինչպես նաև անկախ տեղական և արտասահմանյան փորձագիտական շրջանակների հետ փոխգործակցային - խորհրդատվական ձևաչափեր ներդնելու հնարավորությունը՝ հարստացնելու համար իրենց պաշտպանական ոլորտի գիտելիքները և խորհրդարանական վերահսկողության կարողությունները:

Անվտանգային ոլորտի նկատմամբ արդյունավետ կառավարման հաջորդ սկզբունքը **մասնակցայնությունն** է, երբ տարբեր ծագում ունեցող անձինք, անկախ սեռային պատկանելիությունից, անմիջականորեն կամ իրավաչափ ներկայացուցչական ինստիտուտների միջոցով մասնակցում են ոլորտի որոշումների կայացմանը: Վերոնշյալ սկզբունքի կիրարկումը առավել արդյունավետ կարող է ապահովվել ՌՕԻ-ի միջոցով¹²:

Անվտանգային ոլորտի արդյունավետ կառավարման համատեքստում՝ պաշտպանական ոլորտի բարեփոխումների գործընթացը պետք է ներառի նաև պաշտպանական կարիքների և դրանց երկարաժամկետ բավարարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների համադրում: Հայաստանի Հանրապետության

¹⁰ Տես՝ «Զինված ուժերի քաղաքացիական վերահսկողություն» բաժնում:

¹¹ Որպես օրինակ, կարելի է դիտարկել Ազգային ժողովի Անվտանգության և պաշտպանության մշտական հանձնաժողովի անդամների համար Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում հատուկ դասընթացների ներդրումը:

¹² Տես՝ «Ռազմական օմբուդսմենի ինստիտուտ» բաժնում:

պարագայում այս գործընթացն առավել բարդանում է պատերազմական գործողություններից հետո, երբ հանրության սպասումները չեն համապատասխանում պաշտպանական ոլորտում պետական քաղաքականության կարողությունների հետ (դիվանագիտական, ֆինանսական և այլ միջոցներ)՝ առաջ բերելով ներքին և արտաքին անվտանգային ռիսկեր: Հետպատերազմյան Հայաստանի անվտանգային անբարենպաստ միջավայրը նպաստում է նաև զինված ուժերի բարեփոխման գործընթացում արտաքին ֆինանսական ռեսուրսներից կախվածության մեծացմանը, ինչը կարող է վտանգել արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացմանը միտված քաղաքականությունների իրականացմանը:

Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության առանձնահատկությունները

Անվտանգային ոլորտի բարեփոխումները պետության և մարդկային անվտանգության բարելավման քաղաքական և տեխնիկական գործընթաց է՝ ավելի արդյունավետ և հաշվետու դարձնելով անվտանգության ապահովումը, կառավարումը և վերահսկողությունը՝ ժողովրդավարական քաղաքացիական հսկողության, իրավունքի գերակայության և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի շրջանակներում¹³: Պաշտպանական համակարգի բարեփոխումների հիմքում պետք է ընկած լինի զինված ուժերի կողմից իրենց սահմանադրական առաքելության լավագույնս իրականացման ապահովումը՝ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության, իրավունքի գերակայության և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի շրջանակներում:

Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության համակարգի արդյունավետությունը բնութագրվում է մի շարք տարրերի առկայությամբ, որոնցից

¹³ Տե՛ս՝ Անվտանգության ոլորտի բարեփոխումների տեղեկագիր, 8-րդ էջ, Անվտանգության ոլորտի կառավարման Ժնևի կենտրոն (DCAF):

յուրաքանչյուրն ունի իր ուրույն դերակատարությունն ու նշանակությունը: Դրանցից թերևս ամենաառանցքայինը **քաղաքացիական վերահսկողությունն** է: Քաղաքացիական վերահսկողության պայմաններում քաղաքացիական իշխանությունները վերահսկում են զինված ուժերի գործողությունները, անձնակազմը, բյուջեն և սպառազինությունների ձեռք բերման քաղաքականությունը, ինչպես նաև որոշում և (կամ) ընդունում են երկրի ռազմական (պաշտպանական) քաղաքականությունը: Ռազմական իշխանություններն իրենց հերթին վայելում են նշանակալից գործառնական ինքնավարություն՝ որոշելու, թե որոնք են քաղաքացիական իշխանությունների կողմից սահմանված քաղաքականության սպասարկման համար անհրաժեշտ միջոցառումները:

«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ **Հայաստանի Հանրապետության պաշտպանության քաղաքականությունն իրականացնում է ՀՀ կառավարությունը**, որն իր մեջ, ի թիվս այլ գործառույթների, ներառում է ռազմական դրության հայտարարում, պատերազմ հայտարարելու կամ խաղաղություն հաստատելու մասին ՀՀ ազգային ժողովին առաջարկության ներկայացում¹⁴, Հանրապետության նախագահին՝ պաշտպանության ոլորտի միջազգային պայմանագրեր կնքելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում: **Անվտանգության խորհուրդը (ԱԽ) սահմանում է պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները**, իրականացնում է պաշտպանության ռազմավարական պլանավորումն ու վերանայումը, ինչպես նաև, ի թիվս այլ գործառույթների, հաստատում է զինված ուժերի և այլ զորքերի զարգացման պլանը, զինված ուժերի ծավալման, զորահավաքային և կիրառման պլանները, ՀՀ տարածքի պաշտպանության օպերատիվ սարքավորման պլանը և քաղաքացիական պաշտպանության հանրապետական պլանը¹⁵: ԱԽ նիստերը հրավիրում և վարում է վարչապետը: ԱԽ-ն լսում և ի գիտություն է ընդունում պաշտպանության նախարարի

¹⁴ Սույն հոդվածը նախատեսում է նաև, որ Պաշտպանության նախարարը, ԱԾ նիստ գումարելու անհնարինության դեպքում լուծում է պատերազմ հայտարարելու հարցը:

¹⁵ ԱԽ մասին տես նաև՝ «Անվտանգության խորհրդի կարգավորման և գործունեության մասին» ՀՀ օրենքը: Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.seco.am/about/legislation?lang=hy>

կիսամյակային զեկույցները պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունների կատարման վերաբերյալ: ԱԽ անդամներն իրավասու են առաջարկություններ ներկայացնելու նիստի օրակարգի և քննարկվելիք փաստաթղթերի վերաբերյալ: Քննարկված հարցերի և ընդունված որոշումների մասին վարչապետի հանձնարարությամբ կարող է տարածվել պաշտոնական հաղորդագրություն: Պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղություններին վերաբերող հարցերով որոշումներն ընդունվում են ԱԽ առնվազն յոթ անդամների ձայներով: Անվտանգության խորհրդի որոշումներն ստորագրում է վարչապետը: Անվտանգային ոլորտի թափանցիկ կառավարման համատեքստում հատկանշական է, որ Անվտանգության խորհրդի նիստերին, բացի ԱԽ անդամներից, վարչապետի կողմից հրավիրված անձանց մասնակցության դրույթն առավել հաճախակի է կիրարկվում¹⁶:

ՀՀ վարչապետն, ի թիվս այլ գործառույթների, համակարգում է պետական կառավարման մարմինների գործունեությունը պաշտպանության ոլորտում, Հայաստանի Հանրապետությանը սպառնացող անմիջական վտանգի և (կամ) զինված հարձակման դեպքում հրավիրում է Անվտանգության խորհրդի նիստ, կառավարության կողմից զինված ուժերի կիրառման մասին որոշում կայացնելու անհնարինության դեպքում Պաշտպանության նախարարի առաջարկությամբ կայացնում է որոշում զինված ուժերի կիրառման պլանը գործողության մեջ դնելու մասին՝ այդ մասին անհապաղ տեղեկացնելով Կառավարության անդամներին, ինչպես նաև պատերազմ հայտարարվելու դեպքում, որպես զինված ուժերի գերագույն հրամանատար, ընդունում է պատերազմական ժամանակի քաղաքական և ռազմական բնույթի որոշումներ: ՀՀ պաշտպանության նախարարն, ի թիվս այլ գործառույթների, պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունների շրջանակներում իրականացնում է պաշտպանության նախարարության և զինված

¹⁶ Արցախյան 44-օրյա պատերազմից հետո ԱԽ նիստերին առավել հաճախ մասնակցում են ՀՀ նախագահը, ԱԺ նախագահը, ԱԺ ոլորտային մշտական հանձնաժողովների նախագահները, Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման հատուկ բանագնացը և այլ պաշտոնյաներ:

ուժերի ղեկավարումը, ապահովում է Պաշտպանության նախարարության միջոցով զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը:

ՀՀ զինված ուժերի նպատակը ՀՀ պաշտպանության ռազմական բաղադրիչի ապահովումն է: Զինված ուժերի կողմից ռազմական սպառնալիքներին դիմակայման շրջանակներում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը և զինված ուժերի գլխավոր շտաբի պետը, ընդ որում, զինված ուժերի գլխավոր շտաբի պետը, նախապես ստանալով պաշտպանության նախարարի հաստատումը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հնարավորին չափ արագ իրազեկելով նրան կայացրած որոշման մասին, կարող են որոշում կայացնել զինված ուժերի սահմանափակ, անհետաձգելի, արագ արձագանքման և (կամ) հատուկ առաջադրանք կատարելու նպատակով առանձին ստորաբաժանումների և միջոցների օգտագործման վերաբերյալ¹⁷: «Անմիջական պատասխան գործողություններ ձեռնարկելու անհրաժեշտության, զինված հարձակումը կասեցնելու և (կամ) դիվերսիոն-հետախուզական խմբի ներթափանցումը կանխելու անհրաժեշտության դեպքում ստորաբաժանման գործողությունների մասին որոշումը կայացնում է տեղում գտնվող ամենաբարձրաստիճան հրամանատարը՝ նախապես համաձայնեցնելով այդպիսի որոշումներն ըստ վերադասության, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հնարավորին չափ սեղմ ժամկետում զեկուցելով վերադաս ղեկավարությանը կայացրած որոշման մասին¹⁸»:

Վերոնշյալ դրույթների դիտարկումը թույլ է տալիս արձանագրել, որ ՀՀ Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության համակարգում քաղաքացիական հսկողության տարրը բավարար չափով արտացոլված է «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում: Միևնույն ժամանակ, Զինված ուժերի քաղաքացիական վերահսկողության արդյունավետությունն անհրաժեշտ է դիտարկել համապարփակ՝ այդ թվում նաև

¹⁷ Այդպիսի որոշումների կայացման, ինչպես նաև դրանց արդյունքների վերաբերյալ Պաշտպանության նախարարը զեկուցում է Հանրապետության վարչապետին՝ վերջինիս սահմանած պարբերականությամբ և կարգով:

¹⁸ Տես՝ 15-րդ հոդված, 7-րդ մաս:

խորհրդարանական վերահսկողական մեխանիզմների արդյունավետ կիրարկման համատեքստում¹⁹:

Ջինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության համակարգի արդյունավետությունը բնորոշող հաջորդ տարը *ժողովրդավարական կառավարումն է*, երբ խորհրդարանը, դատական հաստատությունները, գործուն քաղաքացիական հասարակությունն ու անկախ լրատվամիջոցները վերահսկում են զինված ուժերի գործունեությունը՝ ապահովելով զինված ուժերի հաշվետվողականությունը ժողովրդին և կառավարությանը, ինչպես նաև նպաստելով ՁՈՒ-երի գործունեության և որոշումների թափանցիկությանը: Ժողովրդավարական վերահսկողության ակտորներից յուրաքանչյուրը (օրենսդիր, գործադիր, դատական մարմինները, լրատվամիջոցները, քաղաքացիական հասարակությունը և զինված ուժերը), ունեն իրենց դերերը և գործառույթները: Սույն վերլուծությունը դիտարկում է խորհրդարանի և քաղաքացիական հասարակության դերն ու գործառույթները: Անվտանգային ոլորտում քաղաքացիական հասարակության (հասարակական կազմակերպություններ, հետազոտական ինստիտուտներ, ուղեղային կենտրոններ, անկախ փորձագետներ և այլն) հիմնական ներդրումը ոլորտի թափանցիկության և հաշվետվողականության ապահովումն է: Անկախ կամ կառավարության հետ առնչվող հետազոտական, վերլուծական և ուղեղային կենտրոնները, հասարակական կազմակերպությունները սովորաբար ստեղծվում են ներկայացնելու հստակ թեմաների վերաբերյալ քաղաքացիական հետաքրքրություններն ու նկրտումները: Ըստ այդմ, քաղհասարակությունը համապատասխան գործառույթների կիրարկմամբ կարող է նպաստել անվտանգային ոլորտի ժողովրդավարական և խորհրդարանական վերահսկողության ամրապնդմանը: Վերոնշյալ գործառույթների շրջանակը ներառում է անվտանգային ոլորտին վերաբերող անկախ վերլուծությունների և տեղեկատվության տարածում, անվտանգային հարցերին վերաբերող քաղաքական օրակարգերի վերլուծություն և լուսաբանում, զինված ուժերում մարդու իրավունքների և օրենքի գերակայության խրախուսում և մոնիտորինգի իրականացում,

¹⁹ Տես՝ «Անվտանգային ոլորտի նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը» բաժնում:

խորհրդարանական կարողությունների ամրապնդմանը միտված դասընթացների և սեմինարների անցկացում, ազգային անվտանգության քաղաքականությանը վերաբերող որոշումների և դրանց կատարման որակի վերաբերյալ կարծիքների տրամադրում, հանրային ոլորտում այլընտրանքային դիսկուրսի գեներացում և անվտանգային հարցերի վերաբերյալ հանրությանը կրթելու տարատեսակ միջոցների կիրարկում:

Որքան ավելի բարձր է պետության ժողովրդավարության մակարդակը, այնքան ավելի տեսանելի և բովանդակալից է կառավարության շահագրգռվածությունը՝ նպաստելու անվտանգային ոլորտի ժողովրդավարական և խորհրդարանական վերահսկողության ամրապնդման գործում քաղհասարակության գործառույթների արդյունավետ իրականացմանը: ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության համաձայն՝ «Հայաստանի հիմնարար ազգային շահերից են ժողովրդավարությունը, մարդու իրավունքների և իրավունքի գերակայության ապահովումը՝ որպես արդյունավետ պետական կառավարման համակարգի և երկրի ներքին դիմակայության զարգացման երաշխիք»: Հայաստանի Հանրապետության պետական պատկան մարմինները պետք է առավելագույնս խրախուսեն քաղհասարակության ակտիվ հատվածի մասնակցությունը զինված ուժերի բարեփոխումների գործընթացում՝ համապատասխան փոխգործակցային ինստիտուցիոնալ ձևաչափերի ներդրման և ապահովման միջոցով²⁰:

Զինված ուժերի Ժողովրդավարական վերահսկողության արդյունավետությունը պայմանավորված է նաև ***քաղաքացիական փորձառության*** տարրի առկայությամբ, երբ պաշտպանական քաղաքականություն և վերահսկողական գործառույթներ իրականացնող քաղաքացիական մարմինները շարունակաբար կատարելագործում են պաշտպանական ոլորտի իրենց գիտելիքները՝ միևնույն ժամանակ դրսևորելով հարգանք պաշտպանական ոլորտում զինված ուժերի պրոֆեսիոնալ հմտությունների նկատմամբ:

²⁰ Այս համատեքստում խիստ մտահոգիչ է, որ ցայսօր, պետական պատկան մարմինների կողմից չեն իրականացվել համապատասխան միջոցառումներ՝ զինված ուժերի բարեփոխումների գործընթացում քաղհասարակության մասնակցությունը հավուր պատշաճի ապահովելու համար:

Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողությունը ներառում է նաև Զինված ուժերի՝ **գաղափարական չեզոքության և ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը**: Գաղափարական չեզոքության հիմքում ընկած է այն մոտեցումը, որ զինված ուժերի միակ գաղափարախոսությունը երկրի հանդեպ իր հավատարմությունն է, ինչն իր տրամաբանական շարունակությունն է ստանում զինված ուժերի քաղաքական չեզոքության պահպանման համատեքստում: «Անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտների ԵԱՀԿ վարքագծի կանոնները»²¹ սահմանում է, որ «մասնակից պետություններից յուրաքանչյուրն առանձին ծառայության անդամի կողմից իր քաղաքացիական իրավունքները կյանքի կոչելու համար միջոցներ ձեռնարկելու հետ մեկտեղ ապահովում է իր զինված ուժերի, որպես այդպիսիք, քաղաքական չեզոքությունը»:

ՀՀ զինված ուժերի՝ քաղաքական հարցերում չեզոքություն պահպանելու դրույթը ամրագրված է ՀՀ սահմանադրությամբ²²: Մինևույն ժամանակ, Ադրբեյջանի կողմից սանձազերծած Արցախյան 44-օրյա պատերազմին հաջորդիվ, ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբը հանդես էր եկել հայտարարությամբ՝ պահանջելով կառավարության և վարչապետի հրաժարականը²³: Վերոնշյալ հայտարարությունը հանդիսանում է զինված ուժերի՝ քաղաքական չեզոքության սկզբունքի խաթարման դրսևորում՝ վտանգելով զինված ուժերի քաղաքացիական վերահսկողության հիմքերը:

Հաշվի առնելով պարտադիր զինվորական ծառայության հատուկ ռեժիմն ու զինված ուժերի՝ փակ հաստատության կարգավիճակը՝ ժողովրդավարական վերահսկողության համակարգում առանցքային նշանակություն ունի **զինված ուժերում մարդու իրավունքների երաշխիքների ապահովումը**: Թեպետ զինված ուժերում անհատի շահերը ստորադասվում են զինվորական պարտքի պահանջներին՝ զինված ուժերի անդամները շարունակում են մնալ քաղաքացիներ, որոնք կրում են զինվորական համազգեստ և առանց զինվորական կարգապահությանը վնասելու

²¹Փաստաթուղթն ընդունվել է 1994 թ.-ին: Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.osce.org/fsc/41355>

²²Սահմանադրության 14-րդ հոդված, 2-րդ կետ: Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://parliament.am/parliament.php?id=constitution&lang=arm>

²³ Հայտարարությունը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://armenpress.am/arm/news/1044470.html>

պետք է օժտված լինեն այն նույն իրավունքներով, ինչ ունեն քաղաքացիական անձինք²⁴: Այլ կերպ ասած՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքների նկատմամբ հարգանքը չպետք է կանգ առնի զորանոցների դարպասների շեմին:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ)՝ Զինճառայողների մարդու իրավունքների վերաբերյալ թիվ 1742 (2006) հանձնարարականի²⁵ համաձայն՝ զինված ուժերի անդամների հիմնարար իրավունքների և ազատությունների շրջանակը ներառում է կյանքի իրավունքը (հաշվի առնելով զինվորական մասնագիտությանը բնորոշ վտանգները), խոշտանգումներից և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքից կամ պատժից պաշտպանվելու իրավունքը, մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքը, առողջության պահպանման իրավունքը, բժշկական սպասարկման և բուժօգնության մատչելիության իրավունք: Հանձնարարականը արգելում է խտրականությունը, ստրկությունը, ճորտությունը, այնպիսի առաջադրանքների իրականացումը, որոնք համատեղելի չեն ազգային պաշտպանության ծառայության, նրանց հանձնարարությունների հետ, ինչպես նաև՝ հարկադիր կամ պարտադիր աշխատանքը: Ընդգծվում է զինված ուժերի անդամների՝ իրավական պաշտպանության իրավունքը, այդ թվում նաև՝ նրանց իրավունքների խախտման դեպքում, ազատության և անվտանգության իրավունքը, անկախ դատարանների կողմից արդար դատական վարույթի իրավունքն ու բողոքարկման իրավունքը:

«Անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտների ԵԱՀԿ վարքագծի կանոնների» համաձայն՝ մասնակից պետություններից յուրաքանչյուրն ապահովում է, որ իր ռազմական, ռազմականացված և անվտանգության ուժերում ծառայող անձնակազմի հավաքագրումն ու զինակոչը համահունչ լինեն մարդու իրավունքների

²⁴ Parliamentary Assembly of the Council of Europe “Human rights of members of the armed forces”, Doc.10861: Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://assembly.coe.int/nw/xml/ERef/ERef-XML2HTML-en.asp?fileid=17424&lang=en>

²⁵ Տես՝ նույն տեղում:

և հիմնարար ազատությունների ոլորտում իր կողմից ստանձնած պարտավորություններին²⁶: ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը սահմանում է. «Մարդը Հայաստանում բարձրագույն արժեք է: Մենք հետամուտ ենք Հայաստանում բնակվող յուրաքանչյուր անձի իրավունքների և ազատությունների լիարժեք պաշտպանությանը»: «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի²⁷ 7-րդ հոդվածը սահմանում է. «Զինծառայողները Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են: Նրանք օգտվում են հանրապետության քաղաքացիների համար սահմանված իրավունքներից և ազատություններից, հաշվի առնելով գործող օրենսդրությամբ սահմանված զինվորական ծառայության պայմաններից բխող սահմանափակումները (...):»:

Զինվորական մասնագիտությունը կարող է պահպանել մարդու արժանապատվությունն ու արհեստավարժությունը միայն այն դեպքում, երբ հարգվեն զինվորների մարդու իրավունքները: Դաժանությունը, ինստիտուցիոնալ ճնշումները, բռնությունները, վատ վերաբերմունքը և խոշտանգումները զինծառայողների իրավունքների ծանր խախտումներ են, որոնք չեն կարող արդարացվել հանգամանքների բերումով կամ ավանդույթով²⁸: Զինծառայողների՝ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի չենթարկվելու իրավունքը նշանակում է, որ զինծառայողները չպետք է տառապեն նսեմացնող կամ նվաստացուցիչ վերաբերմունքից, չպետք է ենթարկվեն խոշտանգումների և դաժանության այլ դրսևորումների, որոնք կարող են դիտվել որպես անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք: Ստրկության կամ դրան նմանվող հարկադիր աշխատանքի արգելքը նշանակում է, որ նորակոչիկները պարտավոր չեն կատարելու այնպիսի հանձնարարություններ, որոնք համատեղելի չեն իրենց պարտականությունների հետ, և պարտավոր չեն կատարել հարկադիր կամ պարտադիր աշխատանք: Այս իրավունքները հաստատված են «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ

²⁶ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.osce.org/hy/forum-for-security-cooperation/74974>, 27-րդ հոդված:

²⁷ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=364>

²⁸ «Զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» ձեռնարկ, ԵԱՀԿ, DCAF

նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայում», ինչպես նաև «Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիայում»:

Սույն աշխատության շրջանակներում իրականացված հարցազրույցների համաձայն՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ զինված ուժերի առջև ծառայած հիմնական խնդիրներից մեկը շարունակում է մնալ **զինծառայողների նկատմամբ ֆիզիկական և հոգեբանական բռնության դեպքերը**: 2021 թ. ընթացքում ՀՀ զինված ուժերում ոչ մարտական պայմաններում մահվան դեպքերի 35 %-ը, իսկ 2020 թ.՝ 27 %-ը սպանության և ինքնասպանության հետևանք է²⁹: Ոչ համատարած, այնուամենայնիվ շարունակում է գոյություն ունենալ բացահայտ ճնշումների միջոցով նորակոչիկների ձեռնադրման տարբեր փորձությունների ենթարկելու ավանդույթը: Ձեռնադրման ծեսերի միջոցով տեղի է ունենում այսպես կոչված քաղաքացիականից զինվորական կյանքի անցնելու հավաստման գործընթաց: Մեծ մասամբ դրանք կազմակերպվում են ծառայակիցների կողմից և առավել հաճախ՝ հրամանատարների հսկողությունից դուրս: Սույն ավանդույթը հաճախ իր մեջ ներառում է սեփական ուժի ցուցադրում, անմարդկային վերաբերմունքի դրսևորումներ, մասնավորապես՝ դիտավորությամբ ֆիզիկական կամ հոգեբանական տառապանքների պատճառում: Մինչդեռ, զինվորական ծառայության կատարման սկզբում զինծառայողը կարիք ունի հատուկ ուշադրության: Հրամանատարների (պետերի) խիստ վերահսկողությունը և նրանց անձնական օրինակը օգնում են զինծառայողին արագորեն ընկալելու ներքին ծառայության կանոնները³⁰:

Հոգեբանական բռնության տարածված դրսևորումներից է նաև զինծառայողների՝ այդ թվում նաև սպայական անձնակազմի՝ քաղաքացիական կյանքի որոշ «պատժելի» դրվագների վերհանումն ու ըստ դրա ծառայակիցների և ենթակաների շրջանում նրա նկատմամբ սուբյեկտիվ վերաբերմունքի ձևավորումն ու

²⁹ Հասանելի է հետևյալ հղումներով՝ <https://hcav.am/2021-mahvan-depger/>
<https://hcav.am/death-cases-2020/>

³⁰ ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրք, 3-րդ հոդված:

վատ վերաբերմունքի արժանացնելը: Սպա-շարքային փոխհարաբերություններում սա առաջացնում է այնպիսի խնդիրների, երբ շարքայինը չի ենթարկվում ենթակայության կանոններին և հրամանատարի արձակած հրամաններին՝ խաթարելով զինվորական կարգապահության հիմքերը:

Ենթադրյալ վատ վերաբերմունքի դեպքերի քննությունը, որոշ դեպքերում, իրականացվում է հրամանատար սպաների կողմից, մինչդեռ, նույն այդ հրամանատարները կարող են լինել գանգատների հիմքում ընկած հանգամանքների պատճառը, հետևաբար շահագրգռված լինեն կոծկել վատ վերաբերմունքի դեպքերը:

Վատ վերաբերմունքի, ոչ կանոնադրային հարաբերությունների և չարաշահումների դեպքերը, անպատժելիության պայմաններում, զինված ուժերի ներսում ստեղծում են վախի և անվստահության մթնոլորտ, խաթարում են հասարակության վստահությունն ու հարգանքը զինված ուժերի նկատմամբ, վնասում են զինվորական ծառայության գրավչությանը, նպաստում են գորակոչից խուսափելու դեպքերի ավելացմանը և այլն:

Վերոնշյալ խնդիրները հասցեագրելու համար առանցքային նշանակություն ունի զինված ուժերում ժողովրդավարական վերահսկողության նորմերի կիրառմանը միտված մեխանիզմների (իրավական շրջանակ, ինստիտուցիոնալ մեխանիզմներ և կրթական միջոցներ) արդյունավետ կիրարկումը: Սույն վերլուծությունը դիտարկում է Ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ներդրման առավելությունները՝ որպես զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության սկզբունքների ապահովմանը միտված ինստիտուցիոնալ մեխանիզմ: Միննույն ժամանակ, հատկանշական է, որ Ռազմական օմբուդսմենի ինստիտուտի գործունեությունը կարող է լինել բավարարաչափ արդյունավետ, եթե այն փոխլրացվում է զինված ուժերի խորհրդարանական վերահսկողության մեխանիզմների, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության մշտադիտարկում իրականացնող այլ արտաքին անկախ մարմինների գործունեության և զինված ուժերի ներսում համապատասխան ծրագրային միջոցառումների և կրթական մեխանիզմների արդյունավետ իրագործմամբ:

Զինված ուժերում ժողովրդավարական վերահսկողության սկզբունքների կիրարկմանը միտված ծրագրային միջոցառումների և կրթական մեխանիզմների շրջանակը կարող է ներառել՝

- սպայական և սերժանտական կազմի բոլոր մակարդակներում բանիմաց հրամանատարների առկայության ապահովումը,
- զինձառայողների՝ իրենց իրավունքների մասին տեղեկացվածության ապահովումը,
- զինված ուժերում մարդու իրավունքների վերաբերյալ պարտադիր դասընթացների կազմակերպումը ավագ դպրոցներում՝ պարտադիր զինձառայության ենթակա քաղաքացիների համար,
- հրամանատար սպաների համապատասխան ուսուցում և վերապատրաստում, որը նրանց հնարավորություն կտա իրացնելու իրենց իշխանությունը՝ միաժամանակ ենթակաների իրավունքները հարգելով,
- Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում և Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանում զինված ուժերում ժողովրդավարական արժեքների, մարդու իրավունքների, միջազգային մարդասիրական իրավունքի և զինված ուժերում ժողովրդավարական վերահսկողության նորմերի վերաբերյալ ուսուցողական ծրագրերի ներառումը՝ արտասահմանյան ոլորտային հեղինակավոր հաստատությունների ներգարվմամբ,
- Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանի և Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի համապատասխան մասնագետների վերապատրաստման դասընթացների ապահովում՝ արտասահմանյան ոլորտային հեղինակավոր հաստատություններում:

Անհարդու ժողականության դրսևորման պատճառները, դրանց նպաստող գործոնները վերհանելու և դրանց արդյունավետ հաղթահարման ուղիները նախանշելու համար առանցքային նշանակություն ունի արտաքին և ներքին վերահսկողական մարմինների համատեղ ջանքերով ուսումնասիրությունների

կազմակերպումը, բողոքների քննության արդյունքում երևան եկած հանգամանքների համակարգային վերլուծությունը, անձնական տվյալների չհրապարակման սկզբունքով պայմանագրային և ժամկետային զինծառայողների շրջանում սոցիոլոգիական հարցումների անցկացումը, դրանց անկախ և անաչառ վերլուծությունը, ինչպես նաև սպա-հոգեբանների ինստիտուտի ամրապնդումը³¹:

Զինծառայողների իրավունքների իրացմանը խոչընդոտող գործոնները չեզոքացնելու, բողոքներին ու առաջարկներին օպերատիվ արձագանքելու, իրավիճակին տիրապետելու և անհրաժեշտ որոշումներ կայացնելու, ինչպես նաև հրամանատար-զինվոր փոխվստահությունն ամրապնդելու նպատակով 2020թ. ապրիլի 13-ից ամենօրյա ռեժիմով ծառայության է անցել ՊՆ Գլխավոր շտաբում գործող «Վստահության գիծը»: Այն հնարավորություն է ընձեռում դիմումները, բողոքներն ու առաջարկները ներկայացնել անանուն: Ըստ անհրաժեշտության, բարձրացված հարցերի առնչությամբ ցուցաբերվում է իրավական և խորհրդատվական աջակցություն: ՀՀ պաշտպանության նախարարությունը երաշխավորվում է զանգերի գաղտնիությունը և սահմանվում է խիստ վերահսկողություն «Վստահության գիծ» դիմած զինծառայողների նկատմամբ՝ խտրական վերաբերմունքն ու նրանց հետապնդումը բացառելու համար:

Մարդու իրավունքների և բարեվարքության ամրապնդման ապահովման նպատակով ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում գործում է ՀՀ ՊՆ Մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնը: Կենտրոնը համակարգում և համադրում է ՀՀ պաշտպանության նախարարության և Զինված ուժերի գլխավոր շտաբի տարբեր ստորաբաժանումներում մարդու իրավունքների և բարեվարքության ամրապնդման գործընթացը, վերահսկողություն է իրականացնում մարդու իրավունքների և բարեվարքության ամրապնդման ոլորտում պարտավորությունների

³¹ Կառավարության հնգամյա ծրագիրը նախատեսում է խթանել զինված ուժերի կարգապահությունը, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունը, ինչպես նաև իրականացնել ծրագրեր՝ միտված բարձրացնելու զինծառայողի և զինվորի անհրաժեշտ բարոյական հատկությունները, ամրապնդելու հոգեբանական կայունությունը, կատարելագործելու զինվորական հոգեբանների ինստիտուտի կատարելագործումը, ինչպես նաև բարելավել բանակում տեղեկատվական, մշակութային և ժամանցային միջոցառումների բնույթը:

կատարման նկատմամբ, մշակում է նոր կառավարման մեթոդների վերաբերյալ առաջարկություններ, որոնք հենվում են մարդու իրավունքների և բարեվարքության ամրապնդման արժեհամակարգերի վրա, ինչպես նաև՝ պաշտպանության նախարարությանն ուղղված դիմումների և բողոքների քննության, «թեժ գծի» գործունեության ապահովման և վերլուծությունների իրականացման միջոցով աշխատանքներ է տանում զինված ուժերի հաշվետվողականության և թափանցիկության ուղղությամբ՝ միտված հասարակության և բանակի միջև կապի ամրապնդմանը: Կենտրոնի 2021թ. տարեկան հաշվետվության մեջ զետեղված «թեժ գծի» խնդրի բովանդակությամբ զանգերի դասակարգման գծապատկերի համաձայն՝ ոչ կանոնադրային հարաբերությունների վերաբերյալ հարցերը կազմել են ընդամենը 0.2%-ը, զանգատները՝ 7%, ապօրինի գործունեության վերաբերյալ հարցերը՝ 0.5%: Ընդ որում՝ ոչ կանոնադրային հարաբերություններին վերաբերող հարցերից առաջատարը ծեծի դեպքերն են (35%), այնուհետ, ըստ հերթականության՝ այլ-24%, վիրավորանք՝ 17%, շահագործում՝ 15%, վիճաբանության դեպքեր՝ 9%: 2019 և 2020 թթ. հաշվետվությունների համաձայն՝ «իրավախախտման տարրեր պարունակող զանգերը կազմել են պատասխանած զանգերի ընդհանուր թվի ընդամենը 2%-ը, սակայն գրանցվել են նաև դեպքեր, երբ իրավախախտման վերաբերյալ կասկածներն առաջացել են թեժ գծի օպերատորների կողմից գործի ընթացքավորումից հետո»:

Խնդրի բովանդակությունը ներկայացնող ստացված զանգերի դասակարգման 2019 և 2020 թթ. գծապատկերները չեն ներկայացնում ոչ կանոնադրային հարաբերությունների և զանգատների վերաբերյալ տոկոսային տեղեկատվություն: Մինչդեռ, ընդգծվում է, որ «համեմատության համար՝ կադրային սպաների (2019թ.՝ 4%, 2020թ.՝ 1%) և պայմանագրային ծառայողների (2019թ.՝ 7%, 2020թ.՝ 8%) /սպայական, ենթասպայական և շարքային կազմ/ վերաբերյալ ստացված հարցերն ու բողոքները համեմատաբար ավելի քիչ են և վերաբերում են արձակուրդի, տեղափոխումների և ծառայությունից արձակվելու վերաբերյալ հարցերին և խնդիրներին»: Կենտրոնի գործունեության վերաբերյալ այլ տեղեկատվություն բաց ռեսուրսներից հասանելի չէ: Միևնույն ժամանակ, մտահոգիչ է կանոնադրային հարաբերություններին վերաբերող

հարցերի քիչ տոկոսը: Հետևաբար, առաջարկում ենք այն դիտարկել ոչ թե նմանատիպ դեպքերի քիչ քանակով, այլն՝ Կենտրոնի գործունեության նկատմամբ վստահության ոչ բավարար մակարդակով: Սույն մոտեցումը թույլ կտա միջոցներ ձեռնարկել ոլորտի թափանցիկության և հաշվետվողականության ամրապնդման արդյունավետ ուղիների որոնման և միջոցների ներդրման համար:

Զինված ուժերի ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության ներքին և արտաքին մեխանիզմների ամրապնդման համատեքստում առանցքային նշանակություն ունի ՆԱՏՕ-ի հետ քաղաքական և պաշտպանական համագործակցության ամրապնդումը, մասնավորապես՝ ՆԱՏՕ-ի Բարեվարքության ամրապնդում (Building Integrity), ծրագրի³² շրջանակներում իրականացվող և նախատեսվող միջոցառումները: Հիմնական կոռուպցիոն ռիսկերն ախտորոշելու և դրանց կանխարգելմանն ուղղված գործիքներ ու մեխանիզմները մշակելու նպատակով, Ծրագրի շրջանակներում պաշտպանության նախարարությունն անցել է ինքնագնահատում: 2020 թվականին ինքնագնահատման զեկույցի և ՆԱՏՕ-ի առաջարկությունների հիման վրա մշակվել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ոլորտում հակակոռուպցիոն ռազմավարության ազգային գործողությունների ծրագրի նախագիծը և դրա իրականացման ժամանակացույցը, որի քննարկումը հետաձգվել է՝ համավարակով և ռազմական գործողություններով պայմանավորված³³:

³² Հայաստանի Հանրապետությունը ծրագրին միացել է 2013 թվականին:

³³ ՀՀ ՊՆ տեղեկատվության համաձայն՝ Պաշտպանության նախարարության հակակոռուպցիոն ռազմավարությունը ներկայումս գտնվում է լրամշակման փուլում: Ստեղծված աշխատանքային խմբի կողմից գործընթացի շրջանակներում ուսումնասիրվել են գործող հսկողական համակարգերը, դրանց փոփոխման հնարավորությունները իրականացվող բարեփոխումների շրջանակներում, նախանշվել են որոշակի ռիսկեր և ռազմավարական խնդիրներ:

Ռազմական օմբուդսմենի ինստիտուտը և զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության նորմերը

ՀՀ գործող ազգային անվտանգության ռազմավարությունը սահմանում է. «Մենք հետամուտ ենք *պաշտպանական ոլորտում ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմների ընդլայնմանը*՝ ուղղված զինված ուժերի արդյունավետ ղեկավարման, քաղաքական չեզոքության, զինծառայողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, զինված ուժերի գործունեության թափանցիկության ապահովմանն ու զինված ուժերի՝ որպես իրավական պետության անբաժանելի տարրի զարգացմանը»³⁴: «Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը կազմակերպվում և իրականացվում է օրինականության, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների հարգման, զինված ուժերի գործունեության նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության, ... սկզբունքների հիման վրա»³⁵:

Հայաստանի Հանրապետությունում գործող ներկայիս ռազմական օմբուդսմենի ինստիտուտի մոդելը³⁶ պայմանականորեն կարելի է վերագրել ընդհանուր բնույթի օմբուդսմենի ինստիտուտներին, երբ զինված ուժերի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է լիազորությունների ավելի լայն շրջանակ ունեցող քաղաքացիական վերահսկողության ինստիտուտի կողմից, որի լիազորությունների մեջ են մտնում

³⁴ 20-րդ էջ , 4.21-րդ կետ: Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf

³⁵ Տես՝ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված: Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150214>

³⁶ Գոյություն ունեն ռազմական օմբուդսմենի ինստիտուտների զանազան մոդելներ՝ Ձինված ուժերի կազմում ընդգրկված ինստիտուտներ, ընդհանուր իրավասություն ունեցող ռազմական ինստիտուտներ, ինչպես նաև ՁՈւ-երի նկատմամբ վերահսկողության բացառիկ իրավասություն ունեցող ինստիտուտներ: Սովորաբար, Ձինված ուժերը նախապատվությունը տալիս են Ձինված ուժերի կազմում ընդգրկված ինստիտուտներին (օրինակ՝ Գլխավոր ռազմական տեսուչ), քանի որ դրանք հիմնականում լինում են ՁՈւ-ի ծառայողներ և կազմում են հրամանատարության մաս, հետևաբար կարող են ավելի արագ արձագանքել հրամանատարությանը և վերահսկողությանն առնչվող խնդիրներին: Բացի այդ, տիրապետելով զինվորական կյանքին վերաբերող մասնագիտական գիտելիքների՝ նրանք առավել խորքային և համապարփակ են իրազեկված ՁՈւ-երի խնդիրներին: Միևնույն ժամանակ, հատկանշական է, որ, Գլխավոր ռազմական տեսուչների զբաղեցրած դիրքը զինված ուժերում կարող է թույլ չտալ ՁՈւ-երի կառավարման շահերին հակասող քննություններ իրականացնել և (կամ) խնդիրներ լուծել, ինչն էլ իր հերթին նպաստավոր պայմաններ է ստեղծում այս ինստիտուտի ոչ բավարար անկախ լինելու համար:

հասարակության բոլոր անդամների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը և կառավարության տարբեր ոլորտներին առնչվող բողոքների և խնդիրների հասցեագրումը: ՀՀ սահմանադրության 191-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը»³⁷: «Զինված ուժերում մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը հետևելը Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առաջնահերթություններից է: Որպես զինված ուժերի նկատմամբ արտաքին վերահսկողություն իրականացնող սահմանադրական հաստատություն՝ Պաշտպանի նպատակներից է ապահովել բանակում մարդու իրավունքների պաշտպանությունը և խթանումը: Այս նպատակին հասնելու համար Պաշտպանը նպաստում է իրավունքի գերակայության ապահովմանը, ինչը դրական ազդեցություն է ունենում զինծառայողների արժանապատվության, կյանքի որակի, նրանց մարտական ոգու բարձրացման վրա»³⁸:

2017 թ.-ից Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի կազմում գործում է Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժինը, որը զբաղվում է քաղաքացիների զինապարտությանն առնչվող իրավունքների պաշտպանությամբ՝ բոլոր փուլերում³⁹: «Առանձին բաժնի ստեղծումը պայմանավորված էր ինչպես

³⁷ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.ombuds.am/am/site/AboutConstitution/78>

³⁸ Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույց «Իրավունքի գերակայության վրա հիմնված կարգապահությունը որպես զինված ուժերում մարդու իրավունքների երաշխիք»:

³⁹ Զինվորական հաշվառում և գորակոչ, զինվորական ծառայության բուն ընթացք և պահեստագոր:

Պաշտպանին հասցեագրվող բողոքների շարունակական աճով, այնպես էլ համակարգային ուսումնասիրությունների և 871 ոլորտում առկա օրենսդրական խնդիրները լուծելու համար առաջարկություններ ներկայացնելու պահանջով»⁴⁰:

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանին աջակցող հաջորդ մարմինը 2019թ. ձևավորված Պաշտպանին առընթեր Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհուրդն է, որը բաղկացած է մարդու իրավունքների բնագավառում փորձառություն և գիտելիքներ ունեցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից: Խորհրդի նիստերին կարող են մասնակցել նաև զինվորական ծառայություն անցնող կամ պահեստագործում հաշվառված զինծառայողները կամ զինծառայողների ընտանիքների անդամները, իրավասու պետական մարմինները: Խորհուրդն աջակցում է Պաշտպանին վեր հանել զինված ուժերում և այլ գործերում մարդու իրավունքների պաշտպանությանը, ներառյալ՝ զինծառայողների և այլ զինապարտների, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանությանն առնչվող խնդիրները և ներկայացնելու դրանց լուծմանն ուղղված առաջարկներ: Խորհուրդը նաև նպաստում է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավվածությանն ու իրազեկվածության բարձրացմանը՝ զինծառայողների իրավունքների պաշտպանության ոլորտում Պաշտպանի գործունեությանը, ինչպես նաև մասնագիտական կարծիք և փորձագիտական գնահատական է տրամադրում Պաշտպանին՝ զինվորական իրավահարաբերությունների կարգավորման միջազգային փորձի ուսումնասիրության և զինապարտության, զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի հետ կապված օրենսդրության ուսումնասիրությունների և վերլուծությունների միջոցով:

Միջազգային պրակտիկայում, անհրաժեշտության պարագայում, օմբուդսմենի գրասենյակի ներսում ստեղծվում են մասնագիտացված ստորաբաժանումներ՝ ապահովելու զինված ուժերի ոլորտում օմբուդսմենի պատշաճ գործառույթների

⁴⁰ «ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» 2020 թ. տարեկան հաղորդում:

իրականացմանը: Օրինակ՝ այս մոտեցումը կիրառվել է Ֆիլիպիններում և Շվեդիայում, որտեղ օմբուդսմենի գրասենյակի աշխատանքը բաժանված է պատասխանատվության որոշակի շրջանակ ունեցող մի քանի ենթաբաժինների, այդ թվում նաև՝ զինված ուժերի, այլընտրանքային ծառայության և պաշտպանության նախարարությանն առնչվող այլ հարցերի քննության⁴¹: Թեպետ Հայաստանի ՄԻՊ աշխատակազմի Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժնի և Պաշտպանին առնչվող Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհուրդի գործունեությունը նպաստում է զինված ուժերի ոլորտում ՄԻՊ գործառույթների իրականացմանը՝ անհրաժեշտ է դիտարկել բացառիկ իրավասություն ունեցող օմբուդսմենի ինստիտուտի (Հայաստանի ռազմական օմբուդսմենի ինստիտուտ) ներդրման հարցը՝ ներքոնշյալ հանգամանքներով պայմանավորված՝

- զինված ուժերի քաղաքացիական վերհասկողության առկա մեխանիզմների շարունակական կատարելագործումը և նոր մեխանիզմների ներդրումը կարող է ամուր հիմք ստեղծել Զինված ուժերում մարդու իրավունքների և բարեվարքության (այդ թվում նաև՝ հակակոռուպցիոն գործունեության) ամրապնդման համար,
- զինված ուժերի արդիականացման/վերակառուցման գործընթացում առանձնահատուկ ուշադրության են արժանի զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության՝ ժողովրդավարական կառավարման, քաղաքացիական փորձառության և զինված ուժերի անդամների մարդու իրավունքների պաշտպանության բաղադրիչների ամրապնդումը,
- զբաղվելով բացառապես զինվորական գործերով՝ այս ինստիտուտը կկարողանա շարունակաբար մասնագիտանալ ոլորտում, ինչպես նաև պատշաճ ժամանակ տրամադրել զինված ուժերի խնդիրներին,
- մի կողմից անկախ բնույթը, մյուս կողմից զինված ուժերի խնդիրներով մասնագիտացված լինելը կնպաստի ինստիտուտի նկատմամբ վստահության

⁴¹ «Զինված ուժերի օմբուդսմենի ինստիտուտները» ձեռնարկ, 39-րդ էջ:

մակարդակի բարձրացմանը ոչ միայն բողոքաբերների, այլև՝ օրենսդիր մարմնի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից,

- հրապարակային զեկույցների միջոցով ՌՕԻ-ն կնպաստի զինված ուժերի անդամների մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում քաղաքացիական հասարակության իրազեկվածության բարձրացմանը, կապահովի անվտանգային ոլորտի արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ մասնակցայնության սկզբունքի կիրարկումը, ինչպես նաև կխթանի ոլորտի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողություն իրականացնող այլ սուբյեկտների (խորհրդարան, քաղհասարակություն, մամուլ) կարողությունները և գործունեությունը՝ նպաստելով զինված ուժերի թափանցիկությանն ու հաշվետվողականությանը,
- զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության, կառավարման ոլորտի չարաշահումները, միջազգային մարդասիրական իրավունքների նորմերի խախտումներին վերաբերող բողոքների արհեստավարժ, ժամանակին, գաղտնի և անկողմնակալ քննությունը, քննության արդյունքում կատարված եզրակացությունների հիման վրա զեկույցների և առաջարկությունների մշակումն ու անհրաժեշտ միջոցառումների իրականացումը կնպաստեն վերհանված խնդիրների համարժեք արձագանքելուն ու ապագայում նման խնդրի առաջացումը կանխելուն,
- հաշվի առնելով այն հանգամանքը, որ բողոքների քննության արդյունքում ներկայացվող առաջարկությունների նպատակը բողոքի պատճառ հանդիսացող օրենքի, որոշման կամ քաղաքականության վերանայումն է, բարեփոխումը կամ չեղարկումը՝ ՌՕ-ի գործունեությունը կնպաստի զինված ուժերի համակարգային խնդիրների վերհանմանը և զինված ուժերի մարտունակությանը խոչընդոտող հանգամանքների վերացմանը:

Հայաստանի Ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ներդրման գործընթացը պետք է ներգրավի հնարավոր բոլոր շահառուների շահերը և կարիքները, մասնավորապես՝ զինված ուժերի հրամանատարության, ՀՀ անվտանգության

խորհրդի, ՀՀ Ազգային ժողովի, Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի, քաղաքացիական հասարակության ինստիտուտների և վերահսկողություն իրականացնող այլ անկախ մարմինների: ՌՕԻ կարգավիճակը պետք է ամրագրված լինի ՀՀ սահմանադրությամբ՝ շեշտելու համար դրա կարևորությունն ու մշտական բնույթը:

Անվտանգային ոլորտի նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը

Ժողովրդավարական կառավարումը հանդիսանում է Ջինված ուժերի Ժողովրդավարական վերահսկողության համակարգի առանցքային բաղադրիչներից մեկը: Ժողովրդավարական կառավարման պայմաններում անվտանգային ոլորտի նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը առանցքային դերակատարություն է ստանձնում զինված ուժերի հաշվետվողականության և պաշտպանական քաղաքականությանը վերաբերող որոշումների թափանցիկության ապահովման առումով:

Խորհրդարանական վերահսկողության միջոցով Ազգային ժողովը, որպես ժողովրդի կողմից առաջնային քվե ստացած մարմին, վերահսկողություն է իրականացնում իր իսկ կողմից կազմավորված կառավարության վարվող քաղաքականության և իրականացվող ծրագրերի նկատմամբ՝ ի նպաստ կառավարության գործունեության թափանցիկության և պատասխանատվության բարձրացման: Անվտանգային ոլորտի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության առկայությունն ու մակարդակը, կիրարկվող մեխանիզմների արդյունավետությունը հայելային կերպով արտացոլվում են պետության ժողովրդավարության մակարդակի վրա: Խորհրդարանն ու կառավարությունը ստանձնելով տարբեր դերեր անվտանգային հարցերում՝ հավասարաչափ կիսում են նաև անվտանգային ոլորտի արդյունավետ կենսագործունեության համար պատասխանատվությունը:

Անվտանգային ոլորտի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության միջազգայնորեն համաձայնեցված չափանիշներ չկան, քանի որ անվտանգությունն ու պաշտպանությունը սերտաճած են ազգային սուվերենության հետ: Միննույն ժամանակ, առկա են որոշ տարածաշրջանային չափանիշներ: Օրինակ՝ ԵԱՀԿ վարքի կանոնակարգը, ի թիվս այլ սկզբունքների, սահմանում է, որ կառավարությունը հաշվետու է խորհրդարանին՝ անվտանգային և պաշտպանական քաղաքականության զարգացման, իրականացման և վերանայման համար:

2015 թ. խմբագրության ՀՀ սահմանադրությունը էականորեն զարգացրել է Ազգային ժողովի վերահսկողական լիազորությունների շրջանակն ու գործիքակազմը, իսկ դրանց իրականացման մանրամասները կարգավորված են «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով և «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին» Ազգային ժողովի որոշմամբ⁴²: Որքան ավելի արդյունավետ է Խորհրդարանական վերահսկողությունը, այնքան ավելի բարձր է կառավարության կողմից իրականացվող ծրագրերի որակը: Միննույն ժամանակ, խորհրդարանական վերահսկողության գործիքակազմի կիրարկման արդյունավետության համատեքստում էական ազդեցություն ունի օրենսդիր և գործադիր մարմինների միջև փոխհարաբերությունների բնույթը և քաղաքական ուժերի հարաբերակցությունը: Կայուն խորհրդարանական մեծամասնության պայմաններում խորհրդարանի և կառավարության միջև առկա է սերտ կապ, ինչը կարող է նպաստավոր պայմաններ ստեղծել իշխանության երկու ճյուղերի միաձուլման համար: Հայաստանում խորհրդարանական վերահսկողության արդյունավետությունն ու գործադիր իշխանության հավասարակշռումը մեծապես կախված է խորհրդարանական ընդդիմության վարքագծից՝ հասկապես որ խորհրդարանական վերահսկողության որոշ գործիքներ իրենց բնույթով նախատեսված են հենց որպես Ազգային ժողովի փոքրամասնության գործիքներ:

⁴² Տես՝ «Խորհրդարանական վերահսկողություն. գործիքակազմն ու մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում», Նորա Մարգարյան, Համլետ Ավետիսյան, Հովհաննես Օդաբաշյան, ընդհանուր խմբագրությամբ՝ Դավիթ Հարությունյանի, Երևան, «Լույս» հիմնադրամ, 2020 թ.

Խորհրդարանական կառավարման համակարգում օրենսդիրի կողմից գործադիրի նկատմամբ վերահսկողության առանցքային ուղղություններից մեկը բյուջեի ընդունումն ու դրա կատարման նկատմամբ վերահսկողությունն է, ինչը միջազգային պրակտիկայում անվանվում է **«դրամապանակի իշխանություն»**: Դրամապանակի իշխանությունը խորհրդարանի համար գործուն միջոց է ընդլայնելու իր ազդեցությունը գործադիր իշխանության նկատմամբ և ազդելու կառավարության քաղաքականությունների վրա: ***Արդյունավետ բյուջետավորումը մեծապես կախված է բյուջեի ընդունման ողջ գործընթացի հաշվետվողականությունից և թափանցիկությունից:***

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, բյուջետային տարին սկսելուց (հունվարի 1) առնվազն 90 օր առաջ Ազգային ժողովին է ներկայացնում պետական բյուջեի նախագիծը: Նախագծի նախնական քննարկման ժամանակ քննարկումներ են տեղի ունենում գլխադասային (ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական) հանձնաժողովում, մնացած մշտական հանձնաժողովներում և դրանց համատեղ նիստերում: Ներկայացվում են նաև գրավոր առաջարկներ: Քննարկումներին կարող են մասնակցել նաև Կառավարության ներկայացուցիչները և վարչապետի լիազորած անձինք: Բյուջեի նախագծի պետական եւ ծառայողական գաղտնիք պարունակող ծախսային հոդվածներին վերաբերող օրենսդրությամբ նախատեսվող փակ ծրարի նյութերը քննարկվում են պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի ու ֆինանսավարկային և բյուջետային ոլորտների մշտական հանձնաժողովների համատեղ դոնփակ նիստում, որին կարող են մասնակցել պատգամավորները, Վերահսկիչ պալատի նախագահը, ինչպես նաև վարչապետի լիազորած անձինք:⁴³ Ըստ այդմ, փակ նիստում քննարկվում է բյուջեի պաշտպանության ոլորտին վերաբերող փակ մասը, ներառյալ՝ պաշտպանական կարողությունների համար անհրաժեշտ գնվելիք զինատեսակները, դրանց գնման անհրաժեշտությունը, հատկացվելիք միջոցները և այլն: Նախագծի վերջնականացման

⁴³ ԱԺ կանոնակարգ, 88-րդ հոդված, 6-րդ մաս:

փուլում Կառավարությունը, ստացված առաջարկների հիման վրա, նախագիծը լրամշակում է, կամ՝ ներկայացնում առանց փոփոխության:

Բյուջեի պաշտպանական ոլորտին վերաբերող հողվածների նկատմամբ թափանցիկության և հաշվետվողականության սկրունքների ապահովումը անվտանգային ոլորտի նկատմամբ արդյունավետ խորհրդարանական վերահսկողության պարտադիր պայմաններից է: Միջազգային պրակտիկայում, առաջադեմ ժողովրդավարություններն առանձահատուկ ուշադրություն են դարձնում սպառազինությունների գնումների գործընթացի թափանցիկությանն ու հաշվետվողականությանը: Այս նպատակով, տարածված մոտեցում է գլխադասային հանձնաժողովին կից սպառազինությունների ձեռքբերման հարցերով ենթահանձնաժողովների հիմնումը: Թափանցիկ, խորհրդարանին հաշվետու գնումների գործընթացը հնարավորություն է ընձեռում խուսափել կոռուպցիոն դրսևորումներից, հանրային միջոցների վատնումից և չարաշահումից:

ՀՀ Ազգային ժողովի նիստում Բյուջեի նախագծի քննարկման փուլը ներառում է կանոնակարգով սահմանված ելույթներ, մտքերի փոխանակում, որից հետո տեղի է ունենում ընդմիջում՝ առնվազն չորս օրով⁴⁴: Ընդմիջումը հնարավորություն է ընձեռում պատգամավորներին և խմբակցություններին գրավոր առաջարկներ ներկայացնել, որոնք ներառվում են նախագծի վերջնական տարբերակի ամփոփաթերթիկում: Նախագծի քննարկման վերսկսումը ներառում է նախագծի վերջնական տարբերակի ներկայացում, հարց ու պատասխան, 10-ական բույե տևողությամբ ելույթներ և վարչապետի կամ իրավասու նախարի կողմից եզրափակիչ ելույթ, որից հետո տեղի է ունենում քվերակությունը: Թափանցիկության և հաշվետվողականության առումով այս գործընթացը կարելի է որակել արդյունավետ, քանի որ պատգամավորները բավարար ժամանակ են ունենում վերլուծելու ելույթների ու մտքերի փոխանակման արդյունքում բարձրացված հարցերը, կարող են գրավոր ներկայացնելու իրենց առաջարկները, ինչպես նաև դրանք ներառվում են նախագծի վերջնական տարբերակի ամփոփաթերթիկում:

⁴⁴ ԱԺ կանոնակարգ, 90-րդ հոդված, 6-րդ մաս:

Պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողությունը խորհրդարանի կողմից իրականացվում է պետական բյուջեի կատարման ընթացքի մասին տեղեկանքների քննարկման և տարեկան հաշվետվությունների քննարկման և ընդունման միջոցով: Մասնավորապես՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո՝ 40 օրվա ընթացքում, Կառավարության կողմից Ազգային ժողով է ներկայացվում պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկանք, որը քննարկվում է իրավասու մշտական հանձնաժողովի նիստում⁴⁵: Հատկանշական է, որ Պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության պետական և ծառայողական գաղտնիք պարունակող ծախսային հոդվածները, բացված տեսքով, ներկայացվում են Ազգային ժողով՝ առանձին փակ ծրարով⁴⁶, իսկ Պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության պետական և ծառայողական գաղտնիք պարունակող ծախսային հոդվածներին վերաբերող նյութերը քննարկվում են իրավասու մշտական հանձնաժողովների համատեղ փակ նիստում, որին կարող են մասնակցել պատգամավորները, Հաշվեքննիչ պալատի նախագահը և Կառավարության լիազորած անձինք⁴⁷:

Առանձնակի ուշադրության են արժանի «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի այն դրույթները, որոնք միտված են որոշ դեպքերում կառավարության ճկուն գործելու ապահովմանը: Մասնավորապես՝ Կառավարությունը, պետբյուջեի կատարման ընթացքում, իր սահմանված կարգով կարող է տվյալ բյուջետային տարվա պետական բյուջեի մասին օրենքով հաստատված հատկացումների ընդհանուր գումարի 3%-ի սահմաններում վերաբաշխել բյուջեի մասին օրենքով սահմանված ծախսային ծրագրերի միջև հատկացումների գումարները⁴⁸: Օրենքը նախատեսում է նաև Կառավարության պահուստային ֆոնդ, որը «տվյալ տարվա պետական բյուջեում նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորման, պետական բյուջեում չկանխատեսված ելքերի, ինչպես նաև

⁴⁵ ԱԺ կանոնակարգ, 114-րդ հոդված:

⁴⁶ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, 25-րդ հոդված, 3-րդ մաս:

⁴⁷ ԱԺ կանոնակարգ, 117-րդ հոդված, 6-րդ մաս:

⁴⁸ Օրենքի 23-րդ հոդված, 3-րդ կետ:

բյուջետային երաշխիքների ապահովման ելքերի ֆինանսավորման աղբյուրն է»: Միննույն ժամանակ, Կառավարության պահուստային ֆոնդի մեծությունը չի կարող գերազանցել⁴⁹ տվյալ տարվա պետական բյուջեի մասին՝ օրենքով նախատեսված ծախսերի 5%-ը: Թեպետ սույն կարգավորումները միտված են ապահովելու Կառավարության՝ որոշակի իրավիճակներում ճկուն գործելու հնարավորությունը, վերոնշյալ դրույթը չպետք է հիմք հանդիսանա ԱԺ վերահսկողական գործառույթների ստորադասմանը: Հետևաբար, սկզբունքային նշանակություն ունի բյուջեի տնօրինման հարցերում Կառավարությանը վերապահված ճկունության և բյուջեի նկատմամբ ԱԺ վերահսկողական գործառույթների միջև հավասարակշռումը⁵⁰:

Մշտական հանձնաժողովները պառլամենտարիզմի կարևոր հենասյուներից են, քանի որ, օրենսդիր մարմինն իր խորհրդարանական վերահսկողության գործառույթները հիմնականում իրականացնում է դրանց միջոցով: Հանձնաժողովները սովորաբար ստեղծվում են ըստ թեմատիկ ոլորտների, հետևաբար, հանձնաժողովի գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է դրանցում համապատասխան ոլորտում մասնագիտացում և փորձառություն ունեցող պատգամավորների ներառմամբ: Բացի այդ, հանձնաժողովներն իրենց աշխատանքներում պետք է ներգրավեն նաև մասնագիտական կարողություններ և փորձառություն ունեցող փորձագետների: Հանձնաժողովի անդամներն իրենց ոլորտային փորձառությունը պետք է ներդնեն նաև այլ պատգամավորների մասնագիտական կարողությունների ամրապնդմանը՝ ի նպաստ օրենսդիր մարմնի գործունեության արդյունավետության բարձրացմանը: Հանձնաժողովի աշխատանքային ձևաչափերը՝ աշխատանքային քննարկումները, հանրային

⁴⁹ Օրենքի 19-րդ հոդված, 2-րդ մաս:

⁵⁰ Այս առումով, հատկանշական է, որ 2020թ. ապրիլի 29-ին Ազգային ժողովն ընդունեց Կառավարության կողմից նախաձեռնված «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը: Դրանով Կառավարությանը հնարավորություն է տրվում սեփական որոշումների միջոցով գերազանցել նշված 3 %-ի և 5 %-ի սահմանաչափերը: Կառավարությունը նման նախագծի անհրաժեշտությունը պայմանավորել էր կորոնավիրուսային վարակի դեմ պայքարի, հիվանդության հետևանքների չեզոքացման և վերացմանն ուղղված ծրագրերի ու միջոցառումների իրականացման նպատակով: Սահմանաչափերը գերազանցելու հարցում Կառավարությանը վերապահված լայն ազատությունը կարող է խնդրահարույց լինել Ազգային ժողովի վերահսկողական գործառույթների տեսանկյունից:

լսումները, նպաստում են առաջացող խնդիրների օպերատիվ լուծմանը: Առանցքային նշանակություն ունի նաև Հանձնաժողովների անդամների կողմից տարատեսակ սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծությունը՝ գնահատելու համար թե, որքանով են կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունները համահունչ հանրային ակնկալիքներին:

ՀՀ Ազգային ժողովում պաշտպանական ոլորտի գլխադասային հանձնաժողովը Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովն է, որի գործունեության ոլորտների շրջանակը ներառում է պաշտպանությունը, ազգային անվտանգությունը, ոստիկանությունը, արտակարգ իրավիճակները, ռազմաարդյունաբերական համալիրը, զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայությունը և այդ ոլորտները կարգավորող օրենքները⁵¹: Առհասարակ, Հանձնաժողովի գործունեության արդյունավետությունը պայմանավորված է հանձնաժողովի անդամների արհեստավարժության մակարդակով, ինչպես նաև աշխատանքային ձևաչափերի հետևողական կիրարկմամբ: Հաշվի առնելով Հանձնաժողովի գործունեության ոլորտները՝ Հանձնաժողովի գործունեության արդյունավետությունը պայմանավորված է նաև Արտաքին հարաբերությունների, Եվրոպական ինտեգրման հարցերի, Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի, Պետական-իրավական հարցերի, Տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովների հետ համակարգային փոխգործակցության մակարդակից:

Մշտական հանձնաժողովի նիստերը հրապարակային են⁵²՝ խթանելու համար հանրության և Խորհրդարանի միջև կապը և ապահովելու հանձնաժողովի գործունեության թափանցիկությունը: Միննույն ժամանակ, հանձնաժողովների աշխատանքի թափանցիկությունը ենթակա է ողջամիտ սահմանափակումների՝ անվտանգության, պետական և մասնավոր շահերի պաշտպանության

⁵¹ Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.parliament.am/committees.php?do=members&ID=111204&lang=arm>

⁵² ԱԺ կանոնակարգ, 14-րդ հոդվածի 4-րդ մաս:

նկատառումներից ելնելով: Մշտական հանձնաժողովի փակ նիստն անցկացվում է պետական բյուջեի մասին օրենքի նախագծի պետական և ծառայողական գաղտնիք պարունակող ծախսային հոդվածներին վերաբերող նյութերի, համաներման մասին օրենքի նախագծի, պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության պետական և ծառայողական գաղտնիք պարունակող ծախսային հոդվածներին վերաբերող նյութերի քննարկման դեպքում: Փակ նիստեր կարող են անցկացվել նաև հանձնաժողովի որոշմամբ՝ պետական, ծառայողական, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիքի ապահովման նպատակով: Միննույն ժամանակ, հանձնաժողովի գործունեության թափանցիկության նկատառումներից ելնելով՝ փակ նիստում քվեարկությունն արգելվում է⁵³: Մշտական հանձնաժողովի փակ նիստում, հանձնաժողովի անդամներից և հարցը զեկուցողից բացի, կարող են ներկա լինել Հանրապետության նախագահը կամ նրա ներկայացուցիչը, վարչապետը կամ Կառավարության ներկայացուցիչը, Աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալները, հանձնաժողովի որոշմամբ, ինչպես նաև հանձնաժողովի նախագահի կողմից հրավիրված անձինք:

Անվտանգային ոլորտի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության գործառույթների արդյունավետ կատարման տեսանկյունից առանցքային նշանակություն ունի Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը և (կամ) Ռազմական օմբուդսմենի ինստիտուտը, որն իր գործունեության մասին տարեկան հաղորդում ներկայացնելով Ազգային ժողովին նպաստում է զինված ուժերի հաշվետվողականության, գործունեության և որոշումների թափանցիկության ապահովմանը միտված խորհրդարանական վերահսկողությանը:

Պաշտպանության և անվտանգության մշտական հանձնաժողովի իրավասության շրջանակում խորհրդարանական վերահսկողության թեման, ինչպես նաև դրա առնչությամբ իրականացվելիք միջոցառումները սահմանվում են հանձնաժողովի որոշմամբ⁵⁴: Հանձնաժողովի անդամներից բացի, խորհրդարանական

⁵³ Տես՝ նույն տեղում:

⁵⁴ ԱԺ կանոնակարգ, 122-րդ հոդված, 2-րդ մաս:

վերահսկողության թեմայի, ինչպես նաև ձեռնարկվելիք միջոցառումների վերաբերյալ առաջարկ ներկայացնելու իրավունք ունեն Ազգային ժողովի նախագահը, մշտական հանձնաժողովները և խմբակցությունները: Պարզաբանումների նպատակով հանձնաժողովը կարող է իր որոշմամբ հանձնաժողով հրավիրել իրավասու պաշտոնատար անձանց: Պետական, ծառայողական, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունները հանձնաժողովի հարցմամբ նրան են տրամադրվում, իսկ հանձնաժողովի անդամներն այդ տեղեկություններին կարող են ծանոթանալ օրենքով սահմանված կարգով, այդ թվում նաև՝ դրանց գտնվելու վայրում: Խորհրդարանական վերահսկողության արդյունքում Հանձնաժողովը կարող է ընդունել գրավոր եզրակացություն և ուղարկել այն Ազգային ժողովի մյուս մարմիններ, ինչպես նաև իրավասու մարմիններ և պաշտոնատար անձանց:

ԱԺ պաշտոնական կայքէջը չի ներկայացնում տեղեկատվություն պարզելու՝ թե Պաշտպանության և անվտանգության մշտական հանձնաժողովի կողմից խորհրդարանական վերահսկողության ինչպիսի թեմաների վերաբերյալ են ընդունվել որոշումներ, դրանց առնչությամբ ինչպիսի միջոցառումներ են իրականացվել և ինչպիսի գրավոր եզրակացություններ են ընդունվել: Հաշվի առնելով Հանձնաժողովի իրավասության ոլորտների զգայունությունը՝ տրամաբանական է, որ վերոնշյալ հարցերի վերաբերյալ աշխատանքները տարվում են գաղտնի նիստերի շրջանակներում: Միննույն ժամանակ, անհրաժեշտ է դիտարկել խորհրդարանական վերահսկողության ընտրված թեմաների, իրականացված միջոցառումների ու ընդունված եզրակացությունների վերաբերյալ ԱԺ պաշտոնական կայքէջում հրապարակման ենթակա տեղեկատվության/հաղորդագրության տարածման նպատակահարմարությունը՝ մի շարք հանգամանքներով պայմանավորված: Մասնավորապես՝ դա կնպաստի Ազգային ժողովի գործունեության, խորհրդարանական վերահսկողության նկատմամբ հանրության իրազեկվածության և վստահության մակարդակի բարձրացմանը, լրատվական դաշտի կողմից անվտանգային քաղաքականություններին վերաբերող որակյալ և հավաստի

տեղեկության տիրապետմանն ու տարածմանը, քաղաքացիական հասարակության կողմից զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության, ժողովրդավարական կառավարման դերակատարման արդյունավետ իրականացմանը, ինչպես նաև անվտանգային ոլորտի արդյունավետ կառավարման՝ թափանցիկության, արդյունավետության և մասնակցության սկզբունքների ապահովմանը:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ պետական, ծառայողական, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունները հանձնաժողովի հարցմամբ նրան են տրամադրվում, իսկ հանձնաժողովի անդամներն այդ տեղեկություններին կարող են ծանոթանալ օրենքով սահմանված կարգով⁵⁵: «(...) նշված կարգավորումից բխում է, սակայն, որ գաղտնիք հանդիսացող տեղեկությունները տրամադրվում են միայն օրենքով սահմանված կարգով: Այնուամենայնիվ, օրենսդրությամբ նման կարգավորումներ, հստակ ընթացակարգեր սահմանված չեն»⁵⁶: Մասնավորապես՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքը⁵⁷ չի հստակեցնում, թե երբ և ինչպես պետք է Ազգային ժողովի հանձնաժողովի պահանջով նրան տրամադրվեն պետական գաղտնիք պարունակող տեղեկությունները:

Անվտանգային ոլորտի խորհրդարանական վերահսկողության կարևորագույն գործիքներից են ***քննիչ հանձնաժողովները***, որոնք, պաշտպանությանը և անվտանգությանը վերաբերող, հանրային հետաքրքրություն ներկայացնող առանձին հարցերի ուսումնասիրություն իրականացնելու, փաստեր պարզելու և դրանք խորհրդարանական քննարկման առարկա դարձնելու շնորհիվ նպաստում են անվտանգային ոլորտի նկատմամբ արդյունավետ կառավարման սկզբունքների իրականացմանը: Այն դեպքում երբ քննիչ հանձնաժողովը ստեղծվում է պաշտպանության և անվտանգության բնագավառում գործունեություն իրականացնելու համար՝ Հանձնաժողովի լիազորությունները կարող է իրականացնել

⁵⁵ ԱԺ Կանոնակարգ, 122-րդ հոդված, 5-րդ մաս:

⁵⁶ Տես՝ «Խորհրդարանական վերահսկողություն. գործիքակազմն ու մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում», Նորա Մարգարյան, Համլետ Ավետիսյան, Հովհաննես Օդաբաշյան, ընդհանուր խմբագրությամբ՝ Դավիթ Հարությունյանի, Երևան, «Լույս» հիմնադրամ, 2020թ. 53-րդ էջ:

⁵⁷ Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1654&lang=arm>

միայն ԱԺ իրավասու մշտական հանձնաժողովը⁵⁸: Քննիչ հանձնաժողովների գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է խորհրդարանական ընդդիմության վարքագծից, քանի որ քննիչ հանձնաժողովներն առաջին հերթին հանդես են գալիս որպես խորհրդարանական փոքրամասնության վերահսկողական գործիք: Այս համատեքստում խիստ մտահոգիչ է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորների նախաձեռնությամբ ՀՀ Ազգային ժողովում ստեղծված 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի աշխատանքներին խորհրդարանական ընդդիմության՝ «Հայաստան» և «Պատիվ ունեն» խմբակցությունների, չմասնակցելը: Քննիչ հանձնաժողովների քննության օբյեկտը հենց հանրային հետքորթություն ներկայացնող հարցերն են, որոնք սկզբունորեն պետք է լինեն խորհրդարանական ընդդիմության քաղաքական օրակարգում և ընդդիմության գործունեությունը դարձնեն բովանդակալից: Ըստ այդմ, չմասնակցելով վերոնշյալ հանձնաժողովի աշխատանքներին՝ ընդդիմությունը զրկվում է 44-օրյա պատերազմի վերաբերյալ փաստեր պարզելու և ապացույցներ ձեռք բերելու⁵⁹ հնարավորությունից, հետևաբար, նաև՝ իրեն վստահության քվե տված քաղաքացիների շահերն ու ակնկալիքները սպասարկելուց:

Քննիչ հանձնաժողովն իր գործունեության արդյունքով Ազգային ժողովի նախագահին ներկայացնում է զեկույց, որը ներառում է հանձնաժողովի ստեղծման համար հիմք հանդիսացած հարցի վերաբերյալ պարզված փաստերը, ինչպես նաև դրանց առնչությամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ հանձնաժողովի եզրահանգումները⁶⁰: Չեկույցն Ազգային ժողովի նախագահին ներկայացվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, քննարկվում է Ազգային ժողովի հերթական նիստում⁶¹: Չեկույցի քննարկումն ավարտվելուց հետո, զեկույցը, հատուկ կարծիք լինելու դեպքում նաև դա, ուղարկվում է զեկույցում նշված պետական և տեղական ինքնակառավարման

⁵⁸ Սահմանադրություն, 108-րդ հոդված, 4-րդ մաս

⁵⁹ Քննիչ հանձնաժողովի քննության առարկան վերաբերում է փաստեր պարզելուն, հետևաբար Հանձնաժողովի առանցքային գործառնություններից է ապացույցներ ձեռք բերելը:

⁶⁰ ԱԺ կանոնակարգ, 25-րդ հոդվածի 1-ին մաս:

⁶¹ ԱԺ կանոնակարգ, 25-րդ հոդվածի 4-րդ մաս:

մարմիններ ու պաշտոնատար անձանց, որոնք կարող են զեկույցի վերաբերյալ իրենց գրավոր պատասխանն Ազգային ժողովի նախագահին ուղարկել մեկամսյա ժամկետում: Պատասխանները տեղադրվում են Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում⁶²:

Քննիչ հանձնաժողովի նիստերը սկզբունքորեն հրապարակային են: Միննույն ժամանակ, երբ քննիչ հանձնաժողովը ստեղծվել է պաշտպանության և անվտանգության բնագավառներում՝ պետական, ծառայողական, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիքի ապահովման նպատակով կարող են անցկացվել փակ նիստեր: Այս համատեքստում խնդրահարույց է հրապարակայնության սահմանադրական սկզբունքի և պաշտպանության ենթակա շահերի միջև հավասարակշռումը: Օրինակ՝ 2016 թ. քառօրյա պատերազմի վերաբերյալ հանձնաժողովի զեկույցը խորհրդարանը քննարկել է փակ ռեժիմով, քանի որ դրանում պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ կան: Խորհրդարանում պահվող փաստաթղթին ծանոթանալու իրավունք են ստացել այն պաշտոնյաները, որոնք գաղտնի և հույժ գաղտնի փաստաթղթերի հասանելիություն են ունեցել, ինչպես նաև նրանք, ում Ազգային անվտանգության ծառայությունը հատուկ թույլտվություն է տվել: Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի հարցազրույցներից տեղեկանում ենք, որ հանձնաժողովն ուսումնասիրել է զինված ուժերի ապահովման, թիկունքային սպառազինության, մարտական պատրաստության, զորքերի համալրման, հետախուզության վիճակը, հրամանատարական որոշումների օպերատիվությունը և որ հայկական կողմը պատերազմի ժամանակ ունեցել է կառավարման խնդիր, որը ժամանակի սղության պատճառով շտկել չի հաջողվել նաև 44-օրյա պատերազմի ընթացքում: Ջեկույցը չհանրայնացնելը կարող է լինել տրամաբանական և արդարացված՝ մասնավորապես պայմանավորված արտաքին անվտանգային ռիսկերով: Մյուս կողմից, հատկանշական է, որ Ազգային ժողովը, հաստատելով քննիչ հանձնաժողովի կողմից պարզաբանված փաստերն, առաջին հերթին իր հեղինակությամբ բարձրաձայնում է

⁶² ԱԺ կանոնակարգ, 25-րդ հոդվածի 5-րդ մաս:

դրանցում տեղ գտած խնդիրները: Հետևաբար, անհրաժեշտ է դիտարկել առնվազն զեկույցի հրապարակման ենթակա բաժինների հանրայնացումը՝ դրանցում տեղ գտած խնդիրների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացման, զինված ուժերի ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության ամրապնդման, ինչպես նաև անվտանգային ոլորտի արդյունավետ կառավարման սկզբունքների ամրապնդման համար:

Խորհրդարանական վերահսկողության հաջորդ կարևոր գործիքը կառավարության անդամներին բանավոր և գրավոր հարցերով դիմելու պատգամավորների իրավունքն է, որը ամրագրված է սահմանադրական մակարդակով⁶³ և հանդիսանում է կառավարության գործունեության մասին տեղեկատվության ստացման կարևոր միջոց: Այս ինստիտուտի տրամաբանության ելակետն այն է, որ կառավարության գործունեության նկատմամբ խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար խորհրդարանը պետք է տիրապետի համապատասխան տեղեկատվության: Կառավարության անդամների հետ բանավոր հարց ու պատասխանի նիստերը հեռարձակվում են ուղիղ եթերով՝ ինչը հնարավորություն է ընձեռում հասարակությանը հետևել դրանց: Միննույն ժամանակ, գրավոր հարցերի մասով, թեպետ առանձին պատգամավորներ, օգտագործելով սոցիալական հարթակները, հանրությանն իրազեկում են իրենց կողմից ներկայացված գրավոր հարցերի մասին՝ Ազգային ժողովի պաշտոնական կայքն այս մասով որևէ տեղեկատվություն չի ներկայացնում: Սա խնդրահարույց է մի շարք տեսանկյունից, մասնավորապես՝

- ✓ հանրությունը զրկված է համապարփակ տեղեկատվություն ստանալու հնարավորությունից, առ այն, թե օրինակ եռամսյակային կտրվածքով որ ոլորտներն են եղել պատգամավորների ուշադրության կենտրոնում և ինչքանով են իրենց մտահոգությունների և հետաքրքրությունների շրջանակը վերաբերում պատգամավորների կողմից բարձրացրած ոլորտներին և հարցերին,

⁶³ ՀՀ Սահմանադրություն, 112-րդ հոդված:

- ✓ ինչ բարեխղճությամբ և որակի են գործադիր մարմնի անդամները տրամադրում պահանջվող տեղեկատվությունը և ինչքանով է խորհրդարանը հետևողական իր բարձրացրած հարցերի, խնդիրների լուծման հարցում,
- ✓ ինչքանով են գործադիր մարմնի անդամները համապատասխանում անվտանգային ոլորտի լավ կառավարման՝ արդյունավետության սկզբունքի պահանջներին,
- ✓ խաթարվում է հանրության և ժողովրդի կողմից առաջնային մանդատ ստացած իշխանության միջև կապը և Ազգային ժողովի գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

Խորհրդարանական վերահսկողության գործիքների թվում են հրատապ թեմաներով քննարկումներն ու խորհրդարանական լուումները: Հրատապ թեմաներով քննարկումների ինստիտուտի հիմքում ընկած է թեմայի վերաբերյալ հասարակական հետաքրքրության և հրատապության հանգամանքը: Ինչ վերաբերում է խորհրդարանական լուումներին, ապա, այն առաջին հերթին բխում է ժողովրդավարական և թափանցիկ քաղաքական գործընթացների պահանջից: Այս ինստիտուտի միջոցով Խորհրդարանը մասնակից է դարձնում հասարակության լայն շերտերին՝ հանրային նշանակության հարցերի քննարկման, տեղեկությունների հավաքման և տարածման գործընթացներում: Բացի այդ, այս ինստիտուտի միջոցով շոշափվում են հանրային տրամադրությունները, վերհանվում են մասնագիտական կարծիքները՝ ի նպաստ անվտանգային ոլորտում քաղաքականության մշակման և կիրարկման: Արդյունքում, խորհրդարանական լուումները նպաստում են պետության և հասարակության միջև կառուցողական երկխոսությանը, համապատասխան ոլորտներում գիտելիք և փորձառություն ունեցող մասնագետների կարծիքները և այլ շահառուների դիրքորոշումները լսելի դարձնելուն:

Խորհրդարանական վերահսկողության գործիքակազմում հասարակության մասնակցությունը ապահովող գործիքների թվում առանձնահատուկ նշանակություն ունի հանրագրերի ինստիտուտը: Ի տարբերություն լուումների, այս դեպքում նախաձեռնող կողմը հանրությունն է: Միջազգային պրակտիկայում հանրագրերի

ինստիտուտի կիրարկումը միտված է լուծելու ժողովրդավարական գործընթացներում հանրության ներգրավման խնդիրը, քանի որ հանրագրերն ապահովում են քաղաքացու և օրենսդիրի միջև կապը, հնարավորություն են ընձեռում քաղաքացուն լսելի դարձնել իր խնդիրները՝ խուսափելով բյուրոկրատական բարդություններից: Գործընթացի տրամաբանական ավարտը կարող է լինել հանրագրերի ինստիտուտի միջոցով բարձրացված հարցի վերաբերյալ տարվող քաղաքականության վերանայումն ու շտկումը: «Հանրագրերի մասին» օրենքի համաձայն՝ ՀՀ խորհրդարանում հանրագրերի քննարկման ընթացակարգերի կարգավորումը վերապահված է ԱԺ կանոնակարգին: Ազգային ժողովի նախագահը հանրագիրն ուղարկում է իրավասու մշտական հանձնաժողովին/ հանձնաժողովներին, այն տեղադրում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում: «Մշտական հանձնաժողովի նախագահը հանրագիրը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, հանրագիրն ուղարկում է հանձնաժողովի անդամներին, որոնք կարող են հանրագիրը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, ներկայացնել հանրագրի պատասխանի նախագիծ: Եթե սահմանված ժամկետում հանրագրի պատասխանի նախագիծ չի ներկայացվում, ապա հանրագրի պատասխանի նախագիծը մեկ շաբաթվա ընթացքում մշակում և հանձնաժողովի քննարկմանն է ներկայացնում հանձնաժողովի նախագահը: Հանձնաժողովի նախագահը կարող է հանրագրի պատասխանի նախագիծ մշակել նաև հանձնաժողովի այլ անդամի կողմից հանրագրի պատասխանի նախագիծ ներկայացվելու դեպքում»⁶⁴: Վերոնշյալ ընթացակարգը խնդրահարույց է մի շարք հանգամանքներից ելնելով, մասնավորապես՝

- ✓ այն չի նպաստում հանձնաժողովի ներսում հանրագրի ուսումնասիրության ու պատասխանի ձևավորման համար կոլեկտիվ գործունեություն իրականացնելուն,
- ✓ հանրագրին պատասխանելու ողջ պատասխանատվությունը բաժին է ընկնում հանձնաժողովի նախագահին:

⁶⁴ ԱԺ կանոնակարգ, հոդված 123.1, մաս 4

Վերոնշյալի համատեքստում անհրաժեշտ է դիտարկել Ազգային ժողովում հանրագրեր քննող հանձնաժողովի ձևավորման նպատակահարմարությունը՝ միտված ամրապնդելու խորհրդարանական վերահսկողության սույն գործիքը⁶⁵: Հանրագրերի ինստիտուտի արդյունավետ կիրարկումը կարող է ամրապնդել քաղաքացիների և խորհրդարանի միջև կապը, ինչպես նաև նպաստավոր պայմաններ ստեղծել Խորհրդարանի կողմից կառավարության ծրագրի կատարման և կառավարության գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողական գործառույթներում հանրության տարբեր շերտերին հուզող խնդիրների, տեսակետների և առաջարկների վերհանման, հավաքագրման և արձագանքման համար:

Անվտանգային ոլորտի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության տեսանկյունից խնդրահարույց է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) խաղաղապահ ուժերի կազմում Ղազախստանի Հանրապետություն զինծառայողներ գործուղելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության որոշումը: 2022թ. հունվարի 7-ին, Կառավարությունն ընդունեց որոշում, որով թույլատրեց ՀԱՊԿ անդամ պետությունների խաղաղապահ գործախմբերում ընդգրկված Հայաստանի զինված ուժերի ստորաբաժանմանը՝ ՀԱՊԿ հավաքական խաղաղապահ ուժերի կազմում մասնակցելու Ղազախստանում իրականացվող խաղաղապահ գործողություններին: Պաշտպանության նախարարին հանձնարարվեց՝ ապահովել ՀԱՊԿ անդամ պետությունների խաղաղապահ գործախմբերում ընդգրկված Հայաստանի զինված ուժերի ստորաբաժանման՝ Ղազախստանի Հանրապետություն մեկնելու գործընթացը՝ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության հավաքական անվտանգության խորհրդի 2022 թվականի հունվարի 6-ի N 1/ՀԱՊԿ որոշման համաձայն:

⁶⁵ Որոշ էրկրներում հանրագրերի քննարկման համար գործում են հատուկ դրա համար ստեղծված հանձնաժողովներ, օրինակ՝ Մեծ Բրիտանիայում, Ավստրալիայում, Նիդերլանդներում, Սինգապուրում, Գերմանիայում, Իսրայելում և այլն:

ՀՀ պաշտպանության նախարարության տարածած հաղորդագրությունն, իր հերթին, սահմանում է՝ «հիմք ընդունելով ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի՝ Հավաքական անվտանգության պայմանագրի⁶⁶ 4-րդ հոդվածի համաձայն սահմանափակ ժամանակահատվածով Ղազախստանի Հանրապետություն ՀԱՊԿ հավաքական խաղաղապահ ուժեր ուղարկելու վերաբերյալ որոշումը, «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության խաղաղապահ գործունեության մասին» պայմանագրի⁶⁷ դրույթներին համաձայն, ՀՀ զինված ուժերը ՀԱՊԿ խաղաղապահ ուժերի կազմում Ղազախստանի Հանրապետություն են գործուղել խաղաղապահ ստորաբաժանում (100 զինծառայող)»: Մի կողմից վերոնշյալ երկու փաստաթղթերն էլ հանդիսանում են միջազգային պայմանագրեր, իսկ «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ուժի մեջ մտած միջազգային պայմանագիրը ենթակա է անվերապահ կատարման⁶⁸: Բացի այդ, ՀՀ սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը: Մյուս կողմից, աներկբա է, որ հայկական խաղաղապահ ստորաբաժանումը Ղազախստան գործուղվեց առանց անվտանգային ոլորտի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության մեխանիզմների կիրարկման: Հետևաբար, անհրաժեշտ է դիտարկել խնդրո հարցի շուրջ փորձագիտական և պետական պատկան մարմինների մասնակցությամբ աշխատանքային քննարկումներ անցկացնելու նպատակահարմարությունը՝ միտված նմանատիպ իրավիճակներում անվտանգային ոլորտի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության մեխանիզմների կիրարկման հնարավորությունների վերհանմանը, ներդրմանն ու ապահովմանը:

⁶⁶ Հասանելի է հետևյալ հղումով՝ https://odkb-csto.org/documents/documents/dogovor_o_kollektivnoy_bezopasnosti/#loaded

⁶⁷ Հասանելի է հետևյալ հղումով՝ https://odkb-csto.org/documents/documents/soglashenie_o_mirotvorcheskoy_deyatelnosti_organizatsii_dogovora_o_kollektivnoy_bezopasnosti/#loaded

⁶⁸ Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=61853>

Կանայք ՀՀ զինված ուժերում

Ներկայում, գենդերային հավասարության թեման անվտանգային հարցերի օրակարգի կարևորագույն բաղկացուցիչներից է: Սա ոչ միայն պայմանավորված է նրանով, որ զինված հակամարտություններից տուժած անձանց ճնշող մեծամասնությունը կանայք և երեխաներ են, այլև նրանով, որ կանայք, կազմելով աշխարհի բնակչության կեսը, տիրապետում են հավասար իրավունքներ տղամարդկանց հետ, հետևաբար, կարող են մեծ ներդրում ունենալ անվտանգային խնդիրների լուծման գործում: Ավելին՝ կանանց յուրահատուկ կարողությունների և պատկերացումների դիտարկումը և թիրախային կիրարկումը կարող է հանգեցնել անվտանգային մարտահրավերների հաղթահարմանը՝ միտված մարդակենտրոն, մարդկային անվտանգության հետ համահունչ լուծումների:

«Կանայք, խաղաղությունը և անվտանգությունը» ՄԱԿ-ի ԱԽ 2000 թ. թիվ 1325 բանաձևը⁶⁹, կարևորելով կանանց դերը հակամարտությունների կանխարգելման և կարգավորման, ինչպես նաև խաղաղաշինության գործում, պետություններին կոչ է անում ապահովել կանանց առավել գործուն մասնակցությունը հակամարտությունների կանխարգելման, կարգավորման և հանգուցալուծման ազգային, տարածաշրջանային և միջազգային ինստիտուտների և մեխանիզմների շրջանակներում որոշումների ընդունմանը բոլոր մակարդակներում:

Զինված ուժերում կանանց լիարժեք ներգրավվածության կարևորությունն ընդգծող միջազգային իրավական փաստաթղթերի շարքում իր ուրույն տեղն է զբաղեցնում նաև Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի «Կանայք զինված ուժերում. Հավասարության խթանում, գենդերային հիմքով բռնության վերացում» թիվ 2120 (2016) բանաձևը⁷⁰, որի համաձայն «(...) անձնակազմում ավելի մեծ թվով կանանց ներգրավելն ու պահելը դարձել է զինված ուժերի կարևորագույն

⁶⁹ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://peacemaker.un.org/node/105>

⁷⁰ Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=22939&lang=en>

խնդիրներից մեկը: Սակայն, չնայած այն փաստին, որ վերջին տասնամյակների ընթացքում Եվրոպայի բանակներն աստիճանաբար ավելի դրական են վերաբերվում զինված ուժերը կանանցով համալրելու հարցին՝ կանայք զինված ուժերում և հատկապես հրամանատարական բարձր կոչումներ ունեցող անձանց շարքերում դեռևս շարունակում են փոքրամասնություն կազմել: Զինված ուժերին միացող կանայք հայտնվում են տղամարդկանց կողմից և հենց նրանց համար մշակված միջավայրում: Նրանք ենթարկվում են տարատեսակ խտրականությունների, բախվում են կոշտ աշխատանքային ռեժիմով աշխատելու և կարծր մտածելակերպի խնդիրներին, որոնք դեռևս արմատացած են զինված ուժերին բնորոշ «տղամարդկային մոտեցումներում»: Հաշվի առնելով վերոնշյալը՝ Վեհաժողովը կոչ է անում ԵԽ անդամ պետություններին ԶՈւ անդամների համալրման և կարիերայի կառավարման գործընթացը դարձնել այնպիսին, որ «վերանան կարծրատիպերը, և ԶՈւ-երում ներգրավվեն ավելի մեծ թվով կանայք, ընդ որում՝ նաև գործառնական դերում»: Համալրման և կարիերայի կառավարման քաղաքականության համատեքստում կարևորվում է այնպիսի հմտությունների բացահայտումը, որոնք անհրաժեշտ են այսօրվա ԶՈւ-երի ստանձնած առաքելություններն իրականացնելու համար: Վեհաժողովը ընդգծում է ԶՈւ-երի բոլոր տեսակի գորքերում բոլոր պաշտոնները կանանց համար հասանելի դարձնելու անհրաժեշտությունը, ինչպես նաև կոչ է անում անդամ պետություններին «զարկ տալ ակտիվ քաղաքականությանը՝ կանանց հավաքագրելու և նրանց ներգրավելու այն դերերում, որոնցից նրանք նախկինում դուրս են թողնվել, դիտարկել այս մասնագիտությունների համալրման ժամանակ կիրառված ֆիզիկական չափանիշները և փորձնական ծրագրերի նպատակահարմարությունը՝ այդ մասնագիտություններում կանանց համալրումը խթանելու նպատակով, (...) հետազոտություն անցկացնել զինվորական պաշտոններում ավելի մեծ թվով կանանց համալրման խոչընդոտների պատճառների վերաբերյալ, ինչպես նաև այն պատճառների, թե ինչու կանանց զինվորական կարիերան հաճախ ավելի կարճ է, քան իրենց տղամարդ գործընկերներինը և թե ինչու են կանայք ու տղամարդիկ լքում ԶՈւ-երը նախքան կենսաթոշակի տարիքի հասնելը կամ պայմանագրի ավարտը»:

«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ «Կոնվենցիայի մասնակից պետությունները դատապարտում են կանանց նկատմամբ խտրականությունն իր բոլոր ձևերով, համաձայնում են բոլոր համապատասխան միջոցներով և առանց հապաղելու վարել կանանց նկատմամբ խտրականության վերացման քաղաքականություն (...)⁷¹: Նույն Կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցները՝ վերացնելու կանանց նկատմամբ խտրականությունը երկրի քաղաքական, հասարակական կյանքում: Մասնավորապես՝ պետությունները պարտավորվում են կանանց համար, տղամարդկանց հետ հավասար պայմաններով, ապահովել հետևյալ իրավունքները. «(...) մասնակցել կառավարության քաղաքականության ձևավորմանն ու իրականացմանը և կառավարման բոլոր մակարդակներում զբաղեցնել պետական պաշտոններ և իրականացնել բոլոր պետական գործառույթները (...):»:

ՀՀ սահմանադրության 30-րդ հոդվածը սահմանում է. «Կանայք և տղամարդիկ իրավահավասար են»:

ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թթ. ռազմավարությունն, իր հերթին, սահմանում է գենդերային քաղաքականության առաջնահերթ ուղղությունները և ուղղված է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների իրացման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը՝ հաշվի առնելով նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունները⁷²:

ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության համաձայն՝ «Հասարակական և քաղաքական կյանքի տարբեր բնագավառներում և հատկապես պետական կառավարման գործընթացներում կանանց ներգրավվածության ցածր մակարդակը թույլ չի տալիս լիովին օգտագործել մարդկային կապիտալն ազգային անվտանգության ապահովման և կայուն զարգացման ուղղություններով: Պետությունը հետամուտ է

⁷¹ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=60505>

⁷² Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=151906>

լինելու ինչպես կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովմանը, այնպես էլ հավասար հնարավորությունների և պայմանների ստեղծմանն ու քաղաքական որոշումների ընդունման գործընթացներում կանանց ընդգրկուն մասնակցության խթանմանը»:

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» 2013թ. ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ուղղակի կամ անուղղակի գենդերային խտրականությունն արգելվում է»⁷³:

ՀՀ կառավարության 2018թ. նոյմբերի 8-ի թիվ 1269-Ն որոշման համաձայն՝ զինվորական հաշվառման վերցվում են նաև 18 տարին լրացած և զինվորական մասնագիտություն ստացած կամ պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու համար դիմած, ինչպես նաև զինվորական հաշվառման ենթական մասնագիտություններ ունեցող իգական սեռի քաղաքացիները⁷⁴: 2013 թ.-ից իգական սեռի քաղաքացիներին հնարավորություն է ընձեռվել ծառայելու, սովորելու ՀՀ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում, իսկ 2020 թ.-ից իգական սեռի ներկայացուցիչների ընդունելության մեկնարկ է տրվել նաև Մոնթե Մելքոնյան անվան ռազմամարզական վարժարանում: 2019 թ. զինված ուժերի բարոյահոգեբանական ապահովման վարչության կազմում ձևավորվել է կին զինծառայողների հետ տարվող աշխատանքի բաժանմունք⁷⁵, որի գործունեության նպատակն է Զինված ուժերում կանանց զինծառայության կազմակերպման և հավասար հնարավորությունների ապահովման վերաբերյալ ուսումնասիրությունների անցկացումն ու վերլուծումը, բարձրացված հարցերի ու խնդիրների լուծման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը: Զինված ուժերում կանանց իրավունքների պաշտպանությունը, նրանց ներգրավվածությունն ու առաջխաղացման խթանումը և հավասար

⁷³ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=83841>

⁷⁴ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126601>

⁷⁵ Տե՛ս՝ <https://mil.am/hy/news/7013>

հնարավորությունների ապահովումն առաջնահերթություն է հանդիսանում նաև Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության մեջ:

ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի «Պաշտպանության ոլորտ. Զինված ուժերի բարեփոխումներ» բաժնում անվտանգային ոլորտում կանանց ներգրավման վերաբերյալ առկա միակ ձևակերպումը հետևյալն է. **«Զինված ուժերում կանանց ներգրավվածությունը շարունակաբար կաճի»:** 2021 թ. օգոստոսի 24-ին Կառավարության հնգամյա ծրագիրը ՀՀ ԱԺ-ում ներկայացնելիս ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշեց. «կանանց ներգրավվածության մասին թեզը չունի որևէ գաղափարախոսական կամ հակագաղափարախոսական հենք, այլ պայմանավորված է բացառապես պրագմատիկ հաշվարկով. կանայք Հայաստանի բնակչության մեծամասնությունն են, նրանց ռեսուրսի թերներգրավվածությունը որևէ ոլորտում նշանակում է մեր երկրի զարգացման պոտենցիալի աղճատում: Ասվածը չի նշանակում, թե կանայք զինված ուժերում պետք է նույնքան ներգրավված լինեն, որքան տղամարդիկ: Խոսքը պոտենցիալի հնարավորինս լիարժեք օգտագործման մասին է, որը դեռ պետք է բացահայտվի»: Վերոնշյալ ձևակերպումները հատկանշական են մի շարք հանգամանքներով: *Մասնավորապես՝ ժամանակակից աշխարհում զինված ուժերում կանանց ներգրավվածության թեզի գաղափարախոսական հենքը շարունակաբար ամրապնդվում և ընդլայնվում է՝ կանանց ներգրավվածության հարցը դիտարկելով ոչ միայն պոտենցիալի շարունակական բացահայտման և հնարավորինս լիարժեք օգտագործման տեսանկյունից, այլ նաև առաջարկելով ավանդական պաշտպանությունից դեպի մարդկային անվտանգության տիրույթ անցնելու հնարավորություններ և օրակարգ բերելով անվտանգության ոլորտում գեներով պայմանավորված խնդիրների համապարփակ դիտարկման, հասցեագրման հրամայական:* Այս համատեքստում հատկանշական է, որ զինված ուժերը, ինչպես ցանկացած գործունեություն կամ ոլորտ, նույնպես հակված են հայտնվելու սոցիալական զարգացումների ազդեցության ներքո՝ դառնալով առավել զգայուն գեներային հավասարության կոնցեպտի նկատմամբ:

Չնայած նորմատիվ-իրավական ամուր բազայի առկայությանը՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանական համակարգում, մասնավորապես՝ զինծառայության մեջ կանանց արդյունավետ ներգրավման, հավասար պայմանների ապահովման և առաջխաղացման փաստացի խոչընդոտների շարքը բազմազան է: Ոլորտի խնդիրները գույքագրելու և դրանց արձագանքմանը միտված համակարգային լուծումներ նախանշելու համար առանցքային նշանակություն ունի Ձինված ուժերի բարեփոխումների գործընթացում կանանց ներգրավման հարցի՝ առանձին, խորքային և համապարփակ դիտարկումը:

Բարեփոխումների օրակարգը պետք է միտված լինի զինված ուժերում կանանց ծառայության վերաբերյալ մոտեցումների և կարծրատիպերի վերաձևավորմանը, «քանակից անցում դեպի որակ» քաղաքականության որդեգրելուն, արդյունավետ ներգրավման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների և պայմանների ապահովմանը, որոշումների կայացման բոլոր մակարդակներում կանանց մասնակցության խթանմանը, ինչպես նաև սոցիալական ապահովության երաշխիքների արդյունավետ ներդրմանը:

Սույն աշխատության շրջանակներում կին զինծառայողների հետ անցկացված բոլոր հարցազրույցներն ու քննարկումները մատնանշում են, որ ՀՀ զինված ուժերում կանանց ծառայության վերաբերյալ առկա մոտեցումների և կարծրատիպերի հիմքում ընկած է սեռով պայմանավորված խտրականության «ավանդույթը», ինչը նպաստավոր պայմաններ է ստեղծում կանանց պրոֆեսիոնալ-զինվորական կարողությունները ստորադասելու, հետևաբար նաև մասնագիտական առաջխաղացումը խաթարելու համար: Օրինակ՝ կանանց կարող է հանձնարարվել այնպիսի աշխատանք (գործառույթ), որը «ավանդաբար» ընկալվում է որպես «կանացի գործ»: Այստեղ խնդիրն ամենևին կանանց կարողությունների սահմանափակության կամ չբացահայտվածության տիրույթում չէ, այլ՝ այդ կարողությունների վերաբերյալ արական սեռի վերադասների ճնշող մեծամասնության նախապաշարմունքների: Արդյուքնում, կանանց մեծ մասը կարող է հանգել այն եզրահանգման, որ զինված ուժերում իր կարիերայի առաջխաղացման գրավականը ոչ այնքան ծառայության

որակն է, որքան՝ ճիշտ պահին և ճիշտ տեղում «սեռով պայմանավորված խաղաքարտից» օգտվելը: Նման մոտեցումը բացասաբար է ազդում կին զինվորականների մարտունակության մակարդակի վրա, նպաստավոր պայմաններ է ստեղծում ծառայության նկատմամբ դեմորալիզացիայի, կանանց յուրահաստուկ կարողությունների լիարժեք չբացահայտման և ոչ արդյունավետ օգտագործման համար:

Զինված ուժերում կանանց լիարժեք ներգրավման, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների պաշտպանության և հավասար հնարավորությունների ապահովման, խտրականության բացառման, ինչպես նաև պրոֆեսիոնալ զարգացման ապահովմանը միտված պետական քաղաքականության կիրարկման նպատակով անհրաժեշտ է ոչ միայն ձևավորել համապատասխան արժեքների և սկզբունքների համակարգ, այլև ներդնել արտաքին մշտադիտարկման գործուն մեխանիզմներ: Այս համատեքստում, առանցքային նշանակություն ունի զինված ուժերից անկախ, Ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ներդրումը: Ինստիտուտի համակարգում զինված ուժերում կանանց խնդիրներով զբաղվող և մասնագիտացված հատուկ ստորաբաժանումը լավագույնս կկարողանա արձանագրել առկա խնդիրները, վերլուծել դրանց պատճառները, հրապարակային զեկույցների միջոցով խթանել կանանց խնդիրների նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը և նպաստել համապատասխան քաղաքականությունների մշակմանն ու կիրարկմանը:

«Քանակից անցում դեպի որակ» քաղաքականության հիմքում պետք է ընկած լինի զինված ուժերում կանանց ներգրավվածության իմիտացիոն չափորոշիչների և սկզբունքների վերացումը՝ ի օգուտ որակական չափանիշների: Մասնավորապես՝ որակակական մակարդակի բարձրացման նպատակով անհրաժեշտ է պայմանագրային կին զինծառայողների ընտրությունը կատարել առնվազն 3 ամիսների ընթացքում՝ կիրառելով հստակ ֆիզիկական, մոտիվացիոն, հոգեբանական չափորոշիչներ: Բացի այդ, պրոֆեսիոնալ կին զինծառայողների պատրաստման գործընթացքում, որակի բարձրացման նպատակով անհրաժեշտ է հենվել բազմակողմանի գիտելիքահեն մոտեցման վրա՝ մասնագիտացված կրթությունը

համեմելով բազմակողմանի զարգացվածությունն ապահովող առարկաների դասավանդմամբ:

Մեռով պայմանավորված խտրականությունը բացառելու և առկա կարծրատիպերը կոտրելու համար գործուն մեխանիզմ կարող է հանդիսանալ նաև կանանց՝ առանձին ստորաբաժանումներում ծառայելու քաղաքականության ներդրումը: Ընդ որում, առանցքային է վերոնշյալ ստորաբաժանումներում բացառապես կանանց ներկայությունը և, որպես ներքին մշտադիտարկման մեխանիզմ՝ մեկ պաշտոնյային ուղիղ ենթարկվելը (օրինակ՝ ՊՆ նախարարի կանանց հարցերով խորհրդական): Մույն առաջարկը կարելի է դիտարկել որպես պիլոտային ծրագիր, ստեղծել մեկ ստորաբաժանում, և, ըստ արդյունքների, դիտարկվել նաև ծրագրի առավել մասշտաբային ներդրումը զինված ուժերում:

Առաջարկություններ

- Դիտարկել գաղտնի պահվող տեղեկությունների և գործընթացների նկատմամբ հատուկ վերահսկողական մեխանիզմի/մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը՝ կանխարգելելու համար տեղեկատվության թափանցիկության սահմանափակումներին վերաբերող չարաշահումները:
- Դիտարկել ազգային անվտանգության հիմքով տեղեկություն ստանալու իրավունքի սահմանափակման լոկալ կարգավորումների վերանայման անհրաժեշտությունը՝ համաձայն «Ազգային անվտանգության և տեղեկատվության իրավունքի միջազգային սկզբունքների (Ցվանեի սկզբունքներ)» դրույթների:
- Հարստացնել Ազգային ժողովի Անվտանգության և պաշտպանության մշտական հանձնաժողովի անդամների պաշտպանական ոլորտի գիտելիքները և խորհրդարանական վերահսկողության կարողությունները՝ ներդնելով հանձնաժողովի անդամների համար համապատասխան կրթական միջոցառումներ, ինչպես նաև անկախ լոկալ և արտասահմանյան

փորձագիտական շրջանակների հետ փոխգործակցային - խորհրդատվական ձևաչափեր:

- Կազմակերպել զինված ուժերի բարեփոխումների գործընթացում քաղհասարակությանը մասնակից դարձնելուն միտված գործուն, համակարգված և ինստիտուցիոնալ ձևաչափերով միջոցառումներ՝ խթանելու համար անվտանգային ոլորտի ժողովրդավարական և խորհրդարանական վերահսկողության ամրապնդմանը միտված քաղհասարակության գործառույթների արդյունավետ իրականացմանը:
- Սահմանադրական բարեփոխումների համատեքստում դիտարկել Հայաստանի Ռազմական օմբուդսմենի ինստիտուտի հիմնումը՝ որպես զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության սկզբունքների ապահովմանը միտված ինստիտուցիոնալ մեխանիզմ:
- Ձինված ուժերում ժողովրդավարական վերահսկողության սկզբունքների ապահովման նպատակով զինված ուժերի ներսում ներդնել հավելյալ, գործուն ծրագրային միջոցառումներ և կրթական մեխանիզմներ: Մասնավորապես՝
 - 1) սպայական և սերժանտական կազմի բոլոր մակարդակներում բանիմաց հրամանատարների առկայության ապահովում,
 - 2) զինճառայողների՝ իրենց իրավունքների մասին տեղեկացվածության ապահովում,
 - 3) ավագ դպրոցներում զինված ուժերում մարդու իրավունքների վերաբերյալ պարտադիր դասընթացների կազմակերպում՝ պարտադիր զինճառայության ենթակա քաղաքացիների համար,
 - 4) հրամանատար սպաների համապատասխան ուսուցում և վերապատրաստում, որը նրանց հնարավորություն կտա իրացնելու իրենց իշխանությունը՝ միաժամանակ հարգելով ենթակաների իրավունքները,
 - 5) արտասահմանյան ոլորտային հեղինակավոր հաստատությունների ներգարվամբ հարստացնել Վազգեն Սարգսյանի անվան ռազմական

համալսարանի և Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի ուսուցողական ծրագրերը՝ միտված զինված ուժերում ժողովրդավարական արժեքների, մարդու իրավունքների, միջազգային մարդասիրական իրավունքի և զինված ուժերում ժողովրդավարական վերահսկողության նորմերի պատշաճ իրագրելմանն ու դասավանդմանը,

- 6) ապահովել Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանի և Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի համապատասխան մասնագետների վերապատրաստումը՝ արտասահմանյան ոլորտային հեղինակավոր հաստատություններում:
- Զինված ուժերում անհանդուրժողականության դրսևորման պատճառները, դրանց նպաստող գործոնները վերհանելու և դրանց արդյունավետ հաղթահարման ուղիները նախանշելու նպատակով՝
 - 1) Ինստիտուցիոնալ հիմքով կազմակերպել արտաքին և ներքին վերահսկողական մարմինների համատեղ ուսումնասիրություններ,
 - 2) Պայմանագրային և ժամկետային զինծառայողների շրջանում անցկացնել եռամսյակային պարբերականությամբ սոցիոլոգիական հարցումներ՝ անձնական տվյալների չհրապարակման սկզբունքով,
 - 3) Ամրապնդել սպա-հոգեբանների ինստիտուտը: Ներդնել սպա-հոգեբանների ինստիտուտի և Հայաստանի Ռազմական օմբուդսմենի ինստիտուտի միջև ինստիտուցիոնալ փոխգործակցային ձևաչափեր՝ ի նպաստ զինված ուժերում մարդու իրավունքների ամրապնդմանը միտված ներքին և արտաքին վերահսկողական մեխանիզմների և միջոցների արդյունավետ կիրարկման:
- Ապահովել ՆԱՏՕ-ի Բարեկարքության ամրապնդում (Building Integrity) ծրագրի շրջանակներում իրականացված 2020թ. ինքնագնահատման զեկույցի և ՆԱՏՕ-ի առաջարկությունների հիման վրա մշակված Հայաստանի Հանրապետության պաշտպանության ոլորտում հակակոռուպցիոն ռազմավարության լրամշակման աշխատանքների իրականացումը:

- Ազգային ժողովի պաշտոնական կայքէջում տեղադրել Պաշտպանության և անվտանգության մշտական հանձնաժողովի կողմից խորհրդարանական վերահսկողության ընտրված թեմաների, իրականացված միջոցառումների ու ընդունված եզրակացությունների վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկություն/հաղորդագրություն՝ ապահովելու համար անվտանգային ոլորտի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության վերաբերյալ հանրության իրազեկվածությունը և վստահության մակարդակի բարձրացումը, մեղիադաշտի կողմից անվտանգային քաղաքականություններին վերաբերող որակյալ և հավաստի տեղեկության տիրապետումն ու տարածումը, քաղաքացիական հասարակության կողմից զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության ժողովրդավարական կառավարման դերակատարման արդյունավետ իրականացումը, ինչպես նաև անվտանգային ոլորտի արդյունավետ կառավարման՝ թափանցիկության, արդյունավետության և մասնակցության սկզբունքների կիրարկումը:
- Դիտարկել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի դրույթների վերանայման նպատակահարմարությունը՝ հստակեցնելու համար Ազգային ժողովի հանձնաժողովի պահանջով հանձնաժողովին պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների տրամադրման ընթացակարգերը:
- Դիտարկել Քառօրյա պատերազմի վերաբերյալ զեկույցի հրապարակման ենթակա բաժինների հանրայնացման հնարավորությունը՝ դրանցում տեղ գտած խնդիրների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացման, զինված ուժերի ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության ամրապնդման, ինչպես նաև անվտանգային ոլորտի արդյունավետ կառավարման սկզբունքների ամրապնդման նպատակով:
- ՀՀ ԱԺ պաշտոնական կայքէջում տեղադրել պատգամավորների՝ Կառավարության անդամներին գրավոր հարցերով դիմելու մասին տեղեկություն՝ ի նպաստ հանրության համապարփակ տեղեկություն ստանալու

ապահովմանը և Ազգային ժողովի գործունեության թափանցիկության ու հաշվետվողականության ամրապնդմանը:

- Դիտարկել ԱԺ հանրագրեր քննող հանձնաժողովի ձևավորման նպատակահարմարությունը՝ ամրապնդելու համար քաղաքացիների և խորհրդարանի միջև կապը և նպաստելու համար կառավարության ծրագրի կատարման և կառավարության գործունեության նկատմամբ Խորհրդարանի կողմից իրականացվող ընթացիկ վերահսկողական գործառույթներում հանրության տարբեր շերտերին հուզող խնդիրների, տեսակետների և առաջարկների արդյունավետ վերհանմանը, հավաքագրմանը և արձագանքմանը:
- Ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ներդրման համատեքստում դիտարկել Ինստիտուտի կառուցվածքում ԶՈւ-երում կանանց խնդիրներով զբաղվող և մասնագիտացված հատուկ ստորաբաժանման հիմնումը՝ առկա խնդիրները արձանագրելու, դրանց պատճառները վերլուծելու, հրապարակային զեկույցների միջոցով կանանց խնդիրների նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը խթանելու և համապատասխան քաղաքականությունների մշակումն ու կիրարկումը նպաստելու համար:
- Դիտարկել «Քանակից անցում դեպի որակ» քաղաքականության իրականացումը, որի հիմքում պետք է ընկած լինի զինված ուժերում կանանց ներգրավվածության իմիտացիոն չափորոշիչների և սկզբունքների վերացումը՝ ի օգուտ որակական չափանիշների:
- Դիտարկել կանանց՝ առանձին, բացառապես կանանց ներկայացվածությամբ ստորաբաժանումներում ծառայելու և մեկ պաշտոնյային ուղիղ ենթարկվելու հնարավորությունը (օրինակ՝ կանանց հարցերով ՊՆ նախարարի խորհրդական):

ԳԼՈՒԽ 2.

*Պատերազմը չարիք է, ինչում էս վստահ եմ:
Բայց աշխարհն ավելի չար կլիներ անգե՛ն երազողների համար,
եթե չար մարդիկ ժամանակ առ ժամանակ չսպանվեին:
Ռեդյարդ Կիպլինգ
(Անգլիացի գրող և արձակագիր, 1865-1936թթ.)*

Փոքր պետությունների պաշտպանական ռազմավարության առանձնահատկությունները և ռազմական սպառնալիքներին դիմակայելու ժամանակակից կարողությունները: Դասեր Հայաստանի համար



Հեղինակ՝ Էդուարդ Աբրահամյան, պ.գ.թ., բրիտանական Լեսթերի Համալսարանի դոկտորանտ և դասախոս: Մասնագիտական ոլորտը. փոքր պետությունների արտաքին քաղաքականություն և ռազմավարական ադապտացիա: Մասնավորապես՝ փոքր պետությունների ասիմետրիկ փոխհարաբերությունները միջին և մեծ պետությունների հետ և այդ փոխհարաբերությունների արտացոլումն ու ազդեցությունը միջազգային հարաբերությունների բևեռայնացման վրա:

Twitter: @abrahamyan13 ; email: ea269@le.ac.uk

Փոքր պետությունները ներկայիս միջազգային հարաբերությունների ճարտարապետության պայմաններում կարող են լինել տնտեսապես առաջատար, ռազմապես հզոր, համակարգային առումով դիմակայուն ու քաղաքական առումով ազդեցիկ: Դիմակայուն և առավել կայացած փոքր պետությունները, որոնք հաջողությամբ կարողանում են ազդեցություն ունենալ իրենց անմիջական միջավայրում կամ նմանատիպ հավակնություններ ունեն իրենց միջավայրից դուրս, գտնվում են տարածաշրջանային ու գլոբալ սպառնալիքների, ինչպես նաև

ռազմաքաղաքական տենդենցների մշտական վերագնահատման գործընթացի մեջ: Այն հնարավորություն է տալիս ձևավորել մեխանիզմներ, որոնք «կապահովեն պաշտպանական համակարգերի ու ռազմական ռազմավարությունների շարունակական ու ճկուն ադապտացիան»⁷⁶: Այդպիսի փոքր պետություններից են Շվեյցարիան, Իսրայելը, Ֆինլանդիան, Ավստրիան, Արաբական Միացյալ Էմիրություններ (ԱՄԷ), Սինգապուրը, Էստոնիան եւ Նորվեգիան:

Այս փոքր պետությունների ընտրությունը պատահական չէ: Վերջիններս ռազմական ռազմավարության տեսանկյունից ունեն հինգ առանցքային ընդհանրություն. 1) բոլորի պաշտպանական հայեցակարգերը խարսխված են հնարավոր ասիմետրիկ ռազմական սպառնալիքը նախ և առաջ սեփական միջոցներով կոնվենցիոն զսպման (conventional deterrence)⁷⁷ սկզբունքայնության վրա, 2) այս երկրների գերակշիռ մասի ռազմական ռազմավարությունները կառուցված են կոնվենցիոն ասիմետրիկ սպառնալիքը ոչ կոնվենցիոն մարտ վարելու (unconventional warfare) ունակությունների համակարգայնացման⁷⁸ վրա՝ այն է ՋՈւ հետ ներդաշնակեցված համընդհանուր պաշտպանության/դիմադրության (total defence) դոկտրինի, կամ առնվազն ակտիվ ռեզերվի/տարածքային պաշտպանության (territorial defence) կոնցեպտի համակարգերի արդյունավետ համադրման շնորհիվ ասիմետրիկ սպառնալիքների չեզոքացման վրա; 3) տվյալ փոքր պետությունների մեծ մասն արդյունավետ համադրել է պարտադիր զորակոչը կամավորական/պրոֆեսիոնալ

⁷⁶ Edström H., Gyllensporre D., Westberg J., 2019, *Military Strategy of Small States: Responding to Exteral Shocks of the 21st Century*. (Routledge) pp. 8-9.

⁷⁷ Ռազմագիտական և միջազգային հարաբերությունների դասական տեսությունների համաձայն՝ կոնվենցիոն զսպումն ուղիղ կապ ունի տվյալ երկրի ռազմական ռազմավարության տեսակի և բնույթի հետ: Տեսականորեն, կոնվենցիոն զսպումն, ինչպես հայտնի է, ունի երկու հիմնական դրսևորում. զսպում բացասման միջոցով (deter through denial), որը ենթադրում է վարել այնպիսի ռազմական ռազմավարություն, որը «կհամոզի հակառակորդին, որ նա չի կարող հասնել իր ռազմաքաղաքական նպատակներին պատերազմի միջոցով» հավանական մեծաքանակ մարտական կորուստների պատճառով այդ երկրի տարածքում, և զսպում պատժի կամ հատուցման միջոցով (deter through punishment/retaliation), ինչը ենթադրում է ունենալ այնպիսի ռազմական ռազմավարություն, որը կհամոզի հակառակորդին, որ իր իսկ հրահրած պատերազմի դեպքում կստանա երաշխավորված հակահարված իր իսկ տարածքի խորքում՝ կրելով լուրջ տնտեսական, ռազմական կամ ենթակառուցվածքային վնասներ ագրեսիայի ենթարկված երկրի կողմից իր ռազմավարական կամ օպերատիվ օբյեկտների թիրախավորման հետևանքով (Mearsheimer 1985:15):

⁷⁸ Salum, K. 2018, *Small State UW Doctrine: Feasibility and Application for National Defense*, in Resistance Views: Tartu Resistance Seminar Essays on Unconventional Warfare and Small State Resistance, pp. 47-67.

ծառայություն և ակտիվ ռեզերվի սեզմենտների հետ, արդյունքում ստեղծել մարդկային ռեսուրսի օպերատիվ կառավարման և կիրառման էֆեկտիվ և խելամիտ համակարգ; 4) այս ամենի հետ մեկտեղ վերոնշյալ փոքր պետություններն իրենց անվտանգային համակարգը կառուցել են «խելամիտ բանակ»-ի կոնցեպտի վրա⁷⁹ ամեն մեկն իր ուրույն նորարար լուծումների տարբերակներով: Ստեղծել են նորարար տեխնոլոգիական լուծումների, այդ թվում՝ արհեստական բանակակության (ԱԲ) բաղադրիչներ պարունակող համակարգերի վրա կառուցված ցանցակենտրոն (network-centric/network enabled operations and defence)⁸⁰ ինֆոկոմունիկացիոն միասնական կառավարման և մարտի կառավարման համալիր գիտելիքահեն (Integrated knowledge-based) կոնցեպտների⁸¹ վրա կառուցված համապարփակ պաշտպանական⁸² (comprehensive defence) համակարգեր; 5) քաղաքական տեսանկյունից այս երկրներին միավորում է հավակնությունն աշխարհաքաղաքական մակարդակի վրա՝ ազդեցություն ունենալ իրենց անմիջական միջավայրում և դրանից անդին, այդ թվում՝ ուժի միջոցով⁸³:

Հատկանշական է, որ փոքր պետությունների համատեքստում ուժ երևույթի նշանակությունը պետք է հասկանալ որպես «հնարավորություն՝ ներազդելու և ձևավորելու այլ (հարևան) պետության վարքագիծը՝ միևնույն ժամանակ հնարավորինս կանխելով վերջինիս ազդեցությունը սեփական վարքագծի վրա»⁸⁴: Ավելին՝ ի տարբերություն մեծ պետությունների ուժի ավանդական չափման միավորի, որը ենթադրում է նախ և առաջ քանակական վերլուծություն, թե ինչ ռազմական

⁷⁹ Raska, M. 2014, Singapore's smart army, East Asia Forum. [Online] <https://www.eastasiaforum.org/2014/05/01/singapores-smart-army/>; Էստոնիայի Կառավարություն 2016, Riigikaitse Arengukava 2017-2026. [Online] https://kaitseministeerium.ee/sites/default/files/elfinder/article_files/rkak_2017_2026_avalik_osa.pdf

⁸⁰ Ցանցակենտրոն պատերազմների և օպերացիաների մասին տես՝ Report for Congress (2007) Network Centric Operations: Background and Oversight Issues for Congress. [Online] <https://sgp.fas.org/crs/natsec/RL32411.pdf>

⁸¹ Սինգապուրի ՊՆ 2004, *Realising Integrated Knowledge-based Command and Control: Transforming the SAF*. [Online] <https://www.mindef.gov.sg/oms/imindef/publications/pointer/monographs/mono2.html>

⁸² Szymański P., 2020, New ideas for total defence: Comprehensive security in Finland and Estonia. OSW Report. [Online] <http://aei.pitt.edu/103309/>; Salminen P., 2011, Finland's Comprehensive and Military Defence doctrines responding to Emerging threats and new technologies (OSCE Report). [Online] <https://www.osce.org/files/f/documents/0/3/78104.pdf>.

⁸³ Prasad N., (2013), Small but Smart: Small States in the Global System, in Cooper A. & Shaw T., the Diplomacies of Small States. pp. 41-47.

⁸⁴ Goetschel L.(eds), 1998, Small States Inside and Outside the European Union: Intrests and Policies (Kluwer Academic Publishers), Pp.14-15.

հնարավորությունների է այն տիրապետում կամ ինչ քանակությամբ անձնակազմ կամ ժամանակակից ռազմական տեխնիկա ունի, փոքր պետությունների պարագայում ուժի չափման սանդղակն այլ է: Հաշվի առնելով փոքր պետությունների նյութական և մարդկային ռեսուրսների սակավությունը՝ տարածքի առումով ռազմավարական խորքի գրեթե բացակայության պայմաններում, վերջիններս բնականաբար՝ ունեն ուժի միջոցով ազդեցություն ունենալու սահմանափակ հնարավորություններ:

Ուստի, գիտափորձագիտական քննության առարկա է դառնում նախ տվյալ փոքր պետության կողմից իր համար առավել արդյունավետ անվտանգային քաղաքականություն և պաշտպանական համակարգ որդեգրելու կարողությունը, այնուհետև տվյալ փոքր պետության հմտությունները՝ իր իսկ տիրապետության տակ գտնվող գեներացված նյութական ու ոչ նյութական ուժի ոչ թե ստատիկ առկայությունը, այլ դրա արդյունավետ կիրառման ունակությունը⁸⁵: Այլ կերպ ասած, փոքր պետությունների ուժի չափման ցուցիչը բնավ նյութական կամ մարդկային ուժի զուտ քանակական տվյալները չեն, այլ, այն թե ինչքանով է վերջինս կարողանում այն հմտորեն կիրառել ոչ միայն սեփական պաշտպանական կարիքները հոգալու, այլ «կապիտալիզացնելով այն որպես գիտելիք և փորձ՝ օգտագործում որպես արտաքին քաղաքականության հավելյալ գործիք»⁸⁶: Այս մոտեցման համադրումը «ռազմական նորարարական տեխնոլոգիաների հետ շեշտակի բարձրացնում է տվյալ փոքր պետության պաշտպանունակությունը՝ բարձրացնելով այդ պետության կշիռն ու դերը միջազգային հարաբերություններում ու տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության մեջ»⁸⁷, և հետևաբար՝ տալով ազդեցություն պրոյեկտելու հնարավորություններ:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ նշենք, որ փոքր պետությունների համար անվտանգության երկրնտրանքը որպես պետական առաջնահերթություն եղել և մնում

⁸⁵ Wivel A., Balies A.JK., Archer C., 2014, *Setting the Scene: Small States and International Security* (Routledge). p.9.

⁸⁶ Wivel A., Steinmetz R., 2010, *Small States in Europe: Challenges and Opportunities* (Ashgate).P.7.

⁸⁷ Raska M., 2016, *Military Innovation in Small States: Creating a Reverse Asymmetry* (Routledge).p. 3-5.

է վերջիններիս տարբերակող հատկանիշներից մեկը⁸⁸. Մի շարք փոքր պետությունների համակարգային հրատապություն պահանջող խնդիրներից է մասնավորապես գտնել լուծումներ՝ անվտանգության համար սպառնալիք հանդիսացող առավել ուժեղ հակառակորդի հետ ուժային ասիմետրիան կրճատելու ուղղությամբ՝ առավելապես հիմնվելով սեփական նյութական ու մտավոր կարողությունների վրա: Անվտանգային երկրնորանքի այս տարբերակը փոքր պետությունների մասնագիտական գրականության մեջ հայտնի է «Դավիթ և Գողիաթ» կոնցեպտուալ հասկացությամբ⁸⁹: Այն ենթադրում է բոլոր կարողությունների, այդ թվում՝ նյութական ռեսուրսի, հասարակության, աշխարհագրական տեղանքի, ինչպես նաև ինտելեկտուալ ներուժի ներդաշնակ և խելամիտ գործիքավորում մեկ ռազմավարական մտահաղացման մեջ՝ խաղաղ ժամանակ զսպելու, իսկ պատերազմի դեպքում ներխուժած կամ ներխուժում պլանավորող հակառակորդի մեծաքանակ ուժերի նկատմամբ ունենալ օպերատիվ-մարտավարական և տեխնոլոգիական գերակայություն, ինչպես նաև համեմատական առավելություններ՝ տարածքային պաշտպանության համակարգի և վերջինիս կիրառումը անկանոն պատերազմի մարտավարության միջոցով:

Կարևոր է արձանագրել, որ նման կոռ և համապարփակ պաշտպանական համակարգ ստեղծելու հիմքում ընկած է «պոտենցիալ հակառակորդի համար ուժի կիրառումը ոչ գրավիչ դարձնելը», այն է՝ օգուտի համեմատ մարդկային, տեխնիկական և քաղաքական/իմիջային առումով «անհամաչափ ծախսատար» դարձնելու փիլիսոփայությունը⁹⁰: Այս կոնցեպտուալ մոտեցումն արտացոլված է մի շարք փոքր

⁸⁸ Փոքր պետությունների անվտանգային երկրնորանքի մասին մասնավորապես տես՝ Jervis R., 1978, Cooperation under the Security Dilemma, World Politics 30:2.; Alford J., 1984, Security Dilemmas of Small States, the World Today 40:9; Hey J. (eds), 2003, Small States in World Politics: Explaining Foreign Policy Behaviour (Lynne Reinner); Rickli J., 2008, European Small States' Military Policies after the Cold War: From Territorial to Niche Strategies, Cambridge Review 21:3.pp.307-325.

⁸⁹ Viral D., 1971, Survival of Small States: Studies in Small Power/Great Power Conflict (Oxford University Press); Berejikian J., 2018, David versus Goliath: Risk and Weaker State Confrontation, Foreign Policy Analysis 14 (3) (pp. 326-345); Petersson M & Angstrom J., 2020, Weak party escalation: An underestimated strategy for small states?, in Military Strategy in the 21st Century (pp.128-146).

⁹⁰ Borchert H., 2001, Switzerland and Europe's Security Architecture: The Rocky Road from Isolation to Cooperation, in Reiter E. & Gartner H.(eds), Small States and Alliances (Physica-Verlag),pp.163.

պետությունների պաշտպանական հայեցակարգերի և ռազմական ռազմավարության խորքային տրամաբանության մեջ:

Եթե այս տրամաբանության հիմքի վրա կառուցված ռազմական ռազմավարություններն ու պաշտպանական հայեցակարգերը դիտարկենք մեր կողմից ձևակերպված փոքր պետությունների ուժի չափման մեթոդաբանության մեջ, ապա կստանանք սահմանափակ հնարավորությունների խելամիտ մոբիլիզացիա և արդյունավետ կիրառում՝ հիմնված տվյալ փոքր երկրի, թե հանրային մոբիլության, թե ինստիտուցիոնալ ճկունության ու թե ինտելեկտուալ ճարպկության առավելությունների վրա⁹¹: Ավելին, ուժն այս պարագայում կումուլատիվ հասկացություն է, և ոչ օբյեկտիվորեն սահմանափակ, քանի որ գործ ունենք ինտելեկտուալ ճանապարհով փոքր պետության պաշտպանական հնարավորությունների և ուժային ունակությունների ակումուլացիայի հետ: Այս առավելությունը իրենից, ըստ էության, ներկայացնում է սոցիալական կառուցակարգ, որը թույլ է տալիս տվյալ փոքր պետությանը ձգտել անվտանգային ինքնաբավության ու ռազմական նորարարությունների առումով առաջատարության՝⁹² ձևավորելով և ցուցադրելով արագ ադապտացվելու ունակություններ թե արտաքին քաղաքական ոլորտում, և թե պատերազմի դաշտում:

Այսպիսով, մեր կողմից առանձնացված երկրները՝ Էստոնիան, Իսրայելը, Ֆինլանդիան, Շվեյցարիան, Ավստրիան, Սինգապուրը, Նորվեգիան և ԱՄԷ-ն իրենց անվտանգային-պաշտպանական համակարգային տրամաբանությամբ պատկանում են հենց այդ փոքր պետությունների դասին:

⁹¹ Matthews R., & Yan N.Z. 2010, Small Country ‘Total Defence’: A case study of Singapore.

⁹² Edström H., Gyllensporre D., Westberg J., 2019, Military Strategy of Small States: Responding to External Shocks of the 21st Century. (Routledge) pp. 38.

Պաշտպանական համակարգի և զինված ուժերի դինամիկ ադապտացիայի կարևորությունը

Վերոնշյալ փոքր պետությունների ռազմական ռազմավարության, անվտանգային ու պաշտպանական մեխանիզմների շարունակական ադապտացիայի⁹³ առաջնահերթությունները բխում են երկու հիմնական խորքային շարժառիթներից:

Առաջին. աշխարհաքաղաքական: Ենթադրում է ռազմական ռազմավարության և անվտանգային համակարգի դինամիկ զարգացում, ադապտացվելով երկրի ԶՈւ և պաշտպանական դոկտրինը փոփոխվող միջազգային համակարգի և տարաշրջանային արտաքին-քաղաքական աշխարհակարգի փոփոխվող բնույթին: Միջազգային համակարգի փոփոխությունն իր հերթին կարող է բերել նոր սպառնալիքներ փոքր պետությունների համար կամ ստեղծել նպաստավոր պայմաններ ավանդական սպառնալիքների ակտիվացման համար⁹⁴:

Աշխարհաքաղաքական շարժառիթը ենթադրում է, որ ի տարբերություն մեծ պետությունների, փոքրերի առավելությունը կայանում է փոփոխվող միջավայրին վերջիններիս արագ և արդյունավետ ադապտացվելու ունակությունը⁹⁵, այս դեպքում՝ բազմաբևեռ աշխարհակարգի կանոններին և միջավայրին համահունչ: Առավել ևս, որ բազմաբևեռ աշխարհակարգն իր բնույթով ոչ թե պոլիցենտրիկ է, որը ենթադրում է համագործակցային աշխարհակարգ-միջավայր հիմնական ուժային բևեռների միջև⁹⁶, այլ մրցակցային-հակամարտային՝ իր ռազմաքաղաքական բնույթի տարբերակվածությամբ և ակտիվ ինտենսիվությամբ: Ինչպես տարիներ առաջ շեշտել է Ֆինլանդիայի վարչապետը՝ հիմնավորելով պաշտպանական ոլորտի ֆինանսական միջոցների շեշտակի ավելացումները, «Ժամանակակից միջազգային

⁹³ Քաղաքական օրգանիզմի շարունակական ադապտացիայի տեսական կոնցեպտի մասին մանրամասն տես՝ Rosenau J., 1981, *The Study of Political Adaptation* (Nicols Publishing Company).

⁹⁴ Vaicekauskaitė Z.M., 2017, *Security Strategies of Small States in a Changing World*, Journal of Baltic Security 3:2, pp. 7-12.

⁹⁵ Katzentein P., 2015, *Small States in World Markets* (Cornell University Press).

⁹⁶ Kissinger H., 2014, *World Order: Reflections on the Character of Nations and the Course of History*. (Penguin Books), p 1.

հարաբերությունները կրկին թևակոխում են մեծ տերությունների հակամարտության փուլ՝ [Ֆինլանդիայի] պես փոքր պետության համար բերելով ռազմավարական անորոշության դարաշրջան»⁹⁷: Ասել է թե՛ ներկայումս ամրապնդվող հակամարտային բազմաբևեռ աշխարհակարգը, որն, ըստ էության, եկել է փոխարինելու հետսառըպատերազմական ժամանակաշրջանում ԱՄՆ գլխավորած Եվրոատլանտյան միաբևեռ աշխարհակարգին, իր հետ բերում է որակապես նոր «խաղի կանոններ» և նոր մոտեցումների վրա հիմնված երկրների վարքագիծ:

Երկրորդ. զուտ ռազմական: Վերջին երկու տասնամյակների ընթացքում ռազմական գիտությունն ու ժամանակակից պատերազմ վարելու բնույթը ենթարկվել է հիմնարար փոփոխության: Սառը պատերազմից հետո տեղեկատվական տեխնոլոգիաների կտրուկ զարգացումն ու ռազմականացումը, ինչպես նաև ներկայումս արագորեն զարգացող Չորրորդ ինդուստրիալ հեղափոխությունն (ՉԻՀ) իր բարձր տեխնոլոգիական լուծումներով և արհեստական բանականության (ԱԲ) ռազմականացման միտումներով շարունակում է խորքային հետք թողել ռազմական արվեստի էական փոփոխման վրա: Արդյունքում, ի հայտ են եկել նոր սերնդի՝ ԱԲ բաղադրիչներ պարունակող ավտոմատացված, ռոբոտացված, ցանցակենտրոն միասնական կառավարման և մարտադաշտը իրական ժամանակում վերահսկելու և մարտը կառավարելու, ինչպես նաև և ոչ-կոնտակտային պատերազմների հայեցակարգեր, «էականորեն մեծացնելով փոքր պետությունների ՋՈւ թե պաշտպանական և թե հարձակողական բնույթի մարտական առաջադրանք կատարելու պոտենցիալն ու մասշտաբները»⁹⁸:

Անշուշտ, չփոխելով իր կլաուզեվիցյան մետաֆիզիկական նշանակությունը՝ այն է յուրաքանչյուր երկրի բանակի խաղաղ ժամանակ առաջնահերթ խնդիրն է պատրաստվել պատերազմի⁹⁹, ինչպես և այն հանգամանքը, որ «փոքր պետություններն

⁹⁷ Ֆինլանդիայի Կառավարություն 2017. Puolustusministeriö - Government's Defence Report [online] https://www.defmin.fi/en/themes/defence_policy_reports#f7a4e33a

⁹⁸ Edström H., Gyllensporre D., Westberg J., 2019, *Military Strategy of Small States: Responding to Exteral Shocks of the 21st Century*. (Routledge) .

⁹⁹ Clausewitz von C. 1997, *On War* (Translation by Graham J.J & Maude F.N.), p.141.

իրենց անվտանգության հարցում ունեն համառամիտ և ինքնաբավ լինելու, այսինքն՝ պաշտպանական և նախահարձակ լինելու ներուժ զարգացնելու բարոյական իրավունք»¹⁰⁰, քանի որ վերջիններս «առավել ակնհայտ են զգում միջազգային հարաբերությունների [և աշխարհակարգի] անարխիկ բնույթն ի համեմատ մեծ երկիրների»¹⁰¹, նրանց դրդում է շարունակական հայեցակարգային ադապտացիայի մեջ պահել սեփական ՋՈւ և պաշտպանական համակարգերը:

Հետևաբար՝ պաշտպանական համակարգի և մասնավորապես ՋՈւ դինամիկ համակարգային փոխակերպումն ու ադապտացիան փոքր պետությունների համար հաճախ ունի լայն համատեքստային նշանակություն՝ լուծելով երեք հիմնական խնդիր. ա) այն երաշխավորում է նրանց անվտանգության ու պետական անվտանգային շահերի որպես հիմնական սպասարկողի շարունակական գործառույթը, բ) կարիքի դեպքում ունակ լինելու ինքնուրույն իրականացնել լայն տարրապատկերի մարտական խնդիրներ՝ օժտված լինելով ժամանակակից տեխնոլոգիա հեն մարտ վարելու հմտությունների վրա՝ արդյունավետորեն պրոյեկտելով ուժ, գ) հանդիսանում է իր ուրույն անվտանգային համակարգային մոդելի, փորձի և նոր լուծումների, ինչպես նաև ինովացիոն զինատեսակների ու պլատֆորմների արտադրության և ռազմագիտական նոր գիտելիքների ստեղծման, ապրոբացիայի ու արտահանման աղբյուր՝ էական ներդրում ունենալով պետության արտաքին քաղաքական կշռի բարձրացման մեջ:

Իսրայելի, Ֆինլանդիայի, ԱՄԷ, Էստոնիայի, Սինգապուրի, Ավստրիայի և Շվեյցարիայի ՋՈւ և վերջիններիս համապարփակ պաշտպանության համակարգերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս մեզ պայմանականորեն դասակարգել այս փոքր պետությունները երկու հիմնական խմբերի: Առաջին խմբի ՋՈւ և պաշտպանական ռազմավարությունը հիմնված է ավանդական տարածքային տոտալ պաշտպանության, մոբիլիզացիոն ռեսուրսի խելամիտ կառուցման մոտեցման

¹⁰⁰ Krause V. & Singer D.J., 2001, *Minor Powers, Alliances and Armed Conflict: Some Preliminary Patterns*, in Reiter E. & Gartner H.(eds), *Small States and Alliances* (Physica-Verlag),pp.16-17.

¹⁰¹ Jervis R., 1978, *Cooperation under the Security Dilemma*, *World Politics* 30:2p. 173.

վրա՝ շեշտը դնելով ՁՈւ ճկուն ու շարժունակ կառուցվածքի, օպերատիվ մարտավարություն ոչ դասական մարտ վարելու հմտությունների և խորամանկությունների, ինչպես նաև տարածքային պաշտպանության դոկտրինալ լուծումների վրա (այդպիսիք են օրինակ՝ Շվեյցարիան, Ավստրիան, Ֆինլանդիան):

Երկրորդ խումբը՝ արդի ժամանակահատվածում ձևավորված տարբերակն է՝ կառուցված նոր սերնդի պատերազմներ վարելու ունակությունները զարգացնելու վրա: Այս խմբի երկրներն իրենց զինված ուժերը (ՁՈւ) զարգացնում են հիմնականում ՉԻՀ տրամաբանությունից բխող առաջատար տեխնոլոգիաների և ռազմական նորարարությունների վրա՝ «կառուցելով զորքերի միասնական ցանցակենտրոն կառավարման և ճշգրիտ խոցման միջոցների ներդաշնակեցումն ապահովող ավտոնոմ համակարգերի վրա»¹⁰²: Այդպիսիներից են օրինակ՝ Նորվեգիան և ԱՄԷ-ն: Սակայն, Սինգապուրի, Էստոնիայի և Իսրայելի օրինակը ցույց է տալիս, որ կա նաև երրորդ՝ երկու այս մոտեցումները արդյունավետ ինտեգրելու տարբերակ:

Կարևոր ենք համարում ընդգծել, որ զինված ուժերի և պաշտպանական դոկտրինի արագ և արդյունավետ ադապտացիայի լավագույն օրինակներից են Սինգապուրի և Էստոնիայի ռազմական ռազմավարությունները, որոնք պետության պաշտպանական համակարգի ողջ տրամաբանությունը կառուցում են շարունակական և արդյունավետ էվոլյուցիայի և նորարարական լուծումներ գտնելու ունակությունների վրա: Օրինակ՝ Սինգապուրը վերջին երեսունհինգ տարվա ընթացքում հաջողել է երեք անգամ հիմնովին փոխել իր պաշտպանական հայեցակարգերի ու ՁՈւ կիրառման կառուցվածքային ու համակարգային տրամաբանությունը՝ աշխարհաքաղաքական տենդենցների և ժամանակակից պատերազմների բնույթի փոփոխման հետ համահունչ: Առաջնորդվելով «փոքրերը օգնում են փոքրերին» սկզբունքով¹⁰³, 1970-ականների երկրորդ կեսից Սինգապուրի առաջին սերնդի ՁՈւ պաշտպանական համակարգի նախագծման և պրակտիկ

¹⁰² Petersson M., 2021, Small states and autonomous systems - the Scandinavian case: Journal of Strategic Studies, Vol.44, Issue 4, pp. 595-96.

¹⁰³ Raska M., 2016, Military Innovation in Small States: Creating a Reverse Asymmetry (Routledge).p. 140.

կայացման հարցում իր նշանակալի դերն է ունեցել Իսրայելի հետ Մինգապուրի ռազմա-քաղաքական համագործակցությունը, ասիմետրիկ ռազմական մարտահրավերներով շրջապատված փոքր պետության համար արդյունավետ պաշտպանական համակարգի շուրջ փորձի ու գիտելիքի փոխանակումը¹⁰⁴:

Արդյունքում, Մինգապուրի առաջին սերնդի ՋՈւ և պաշտպանական կոնցեպտը, որը կոչվում էր «թունավոր ծովախեցգետին» ('poisonous shrimp'), կառուցվում է տոտալ պաշտպանության հայեցակարգի վրա՝ կենտրոնանալով պասիվ կամ բացառման միջոցով զսպման սկզբունքի վրա: Մինգապուրի առաջին սերնդի ՋՈւ կոնցեպտը ենթադրում է, որ երկիրը, ինչպես փոքր ծովախեցգետին, կարող է տեսականորեն «կուլ գնալ», բայց «չմարսվել» ռազմական ագրեսիայի դիմած երկրի կողմից՝ վճարելով դրա համար անհամադրելի մեծ գին¹⁰⁵: Այս կոնցեպտի հիմնական թերությունը, սակայն, իր զուտ արձագանքող ու ըստ էության «պարտվողական» բնույթն է, որը ենթադրում էր ռազմական պլանի կիրառում հարձակման ենթարկվելուց հետո միայն¹⁰⁶:

Ելնելով վաղ 1990-ականների Մինգապուրի իշխանությունների որդեգրած այդ թվում՝ «գարգացիր կամ մեռիր» ('innovate or die') կոնցեպտուալ սկզբունքից՝ Մինգապուրի զինված ուժերը համապատասխանաբար անցում կատարեցին համակարգային վերափոխման երկրորդ փուլին¹⁰⁷: Երկրորդ փուլի եվոլյուցիան մոբիլիզացիոն ռեսուրսի վրա տոտալ պաշտպանության հայեցակարգը զարգացնում ու բարձրացնում է նոր մակարդակի վրա՝ իր մեջ ներառելով իրար հետ համակարգային մշտական փոխկապակցման մեջ գտնվող և միմյանց փոխընդհանուր հինգ բաղադրիչ՝ ռազմական, քաղաքացիական, տնտեսական, սոցիալական և հոգեբանական¹⁰⁸: Ստանալով «վայրենակերպ» ("procupine") անվանումը, Մինգապուրի պաշտպանական հայեցակարգը թույլ է տալիս երկրի զինված ուժերին լինել ավելի

¹⁰⁴ Ibid.

¹⁰⁵ Loo B.F., 2004, *Explaining Changes in Singapore's Military Doctrine: Material and Ideational Perspectives*, in Acharya A., & To L.L. (eds), *Asia in the New Millennium* (Marshall Cavendish Academic), p. 367.

¹⁰⁶ Ibid., p. 368.

¹⁰⁷ Raska M., 2016, *Military Innovation*, p. 93; Matthews, R., & Zang Yan, N. 2010, *Small country 'Total Defence': A case study of Singapore*, in *Defence Procurement and Industry Policy: A small country perspective* (Routledge), pp. 255-71.

¹⁰⁸ MINDEF (Singapore) 2004, *Factsheet – About Total Defence*. [online]

https://www.nas.gov.sg/archivesonline/data/pdfdoc/MINDEF_20040207001_2/MINDEF_20040207003.pdf

նախաձեռնողական՝ հեռահար հարվածեր իրականացնելու հնարավորության շնորհիվ: Սակայն դրանով Մինգապուրը չի բավարարվում:

Ամերիկյան բանակի և իր դաշնակիցների ռազմական տեխնոլոգիաների զարգացման և Աֆղանստանում ու Իրաքում կիրառման խորքային հետազոտության շնորհիվ Մինգապուրը 2005 թ-ից որդեգրում է որակապես նոր պաշտպանական կոնցեպտ՝ էականորեն ադապտացնելով իր զինված ուժերը նոր սերնդի մարտական առաջադրանքներ իրականացնելու առումով՝ ավելացնելով վեցերորդ՝ առաջատար տեխնոլոգիաների բաղադրիչը, իր տոտալ պաշտպանության դոկտրինին՝ ստեղծելով համապարփակ պաշտպանության ռազմավարություն¹⁰⁹: Տալով «Դելֆին» անվանումը, Մինգապուրի երրորդ սերնդի զինված ուժերը ոչ միայն հաջողությամբ որդեգրում են Համալիր Գիտելիքահեն Միասնական Կառավարում և Վերահսկում (Integrated Knowledge-based Command and Control) համակարգը, որը ոչ միայն պարունակում է իրական ժամանակին մոտ ավտոմատացված հետախուզահարվածային համալիրների ներդաշնակեցված միագումարում, այլև տալիս է «միասնական կառավարվող հարվածի» լայն առավելություն՝ իր մեջ ներառելով պահեստագործի և այլ տոտալ պաշտպանության բաղադրիչ հանդիսացող անձնակազմերը¹¹⁰:

Առնվազն 2014-ից սկսած, Մինգապուրի «Դելֆին» համապարփակ անվտանգահին համակարգը առավել ընդգծված է դարձրել կանխարգելիչ հարվածի (preemptive strike) իր ունակությունների և իրավունքի առանձնահատկությունը՝ հիմնավորելով ներկայիս բազմաբևեռ աշխարհակարգի հակամարտայնությամբ և ռազմավարական անորոշությամբ: Հասկանալի է որ, փոքր պետությունների մի շարք ժամանակակից մասնագետներ, ելնելով փոքր պետության էնդեմիկ խոցելիությունից, տարածքի փոքրության (ռազմավարական թիկունքի բացակայություն) և նյութական/մարդկային ռեսուրսի սակավության պատճառով, կանխարգելիչ հարվածի սկզբունքը համարում են արդարացված: Փոքր պետության

¹⁰⁹ Raud, M. 2018, *Hedgehog Meets Dolphin: Can Estonia Adopt Singapore's Secret Weapon—Defence Innovation?* [Online] <https://icds.ee/en/hedgehog-meets-dolphin-can-estonia-adopt-singapores-secret-weapon-defence-innovation/>

¹¹⁰ TEO, B. 2021, *Smarter, more Integrated Fighting Force*. [Online] https://www.mindef.gov.sg/web/portal/pioneer/article/feature-article-detail/ops-and-training/2021-Q3/23sep21_news1

պարագայում այն դասակարգում են որպես ակտիվ ինքնապաշտպանության կամ ակտիվ զսպման անհրաժեշտ միջոցառում, որը հակադրության մեջ չի մտնում ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքների հետ, քանի որ կանխարգելիչ հարվածը միտված է ինքնապաշտպանական և ոչ նվաճողական ագրեսիայի մոտիվացմանը¹¹¹:

Արդյունքում, Մինգապուրի ՁՈւ «Դելֆին» կոնցեպտը բանակը դարձրել է ոչ միայն նորարար, այլև խելամիտ այն առումով, որ տեխնոլոգիաները համադրել է կանխարգելիչ հարված հասցնելու կարողության հետ, դրանով իսկ ապահովելով ակտիվ զսպում, ունենալով արագ խորքային և գերձզգրիտ խոցումներ իրականացնելու պոտենցնալ հակառակորդի նկատմամբ, եթե վերջինս գտնվում է դեռևս հարձակում նախապատրաստելու փուլում¹¹²:

Նմանատիպ արդյունավետ ադապտացման արդյունքներ են ցույց տալիս Էստոնիայի ՁՈւ-ը: Վերջինս նույնպես հայեցակարգային առումով զարգացնում է իր ՁՈւ-ն, տարածքային պաշտպանության և ինովացիոն-տեխնոլոգիական տնտեսության հիման վրա կառուցվող տոտալ պաշտպանության համակարգը՝ ռազմական և կիբեր-ինֆորմացիոն անվտանգության ոլորտում սերտորեն համագործակցելով մի շարք այլ փոքր պետությունների, այդ թվում՝ Մինգապուրի և Իսրայելի հետ: Ձևավորելով համապարփակ պաշտպանության իր մոդելը Էստոնիան առանձին զարգացրել է կիբեր/ինֆորմացիոն անվտանգության գորքեր, որոնք ոչ միայն պաշտպանական, այլ նաև կանխարգելիչ հարձակողական և հետախուզական նպատակներով են զարգացվում: Կիբեր օպերացիաների առումով լինելով ՆԱՏՕի երկրների ամենաառաջատարներից մեկը, Էստոնիան ինտեգրել է իր կիբեր հրամանատարությունը իր իսկ ստեղծած գորքերի կառավարման ու վերահսկման միասնական համակարգի մեջ՝ տալով կիբեր տարածությանը ռազմական գործողությունների վայրի կարգավիճակ՝ ցամաքի, օդի, ջրի և տիեզերքի հետ

¹¹¹ Jun Hao, S. 2016, The Case for Pre-Emptive Warfare and its Implications for Singapore. [Online] https://www.mindef.gov.sg/oms/safti/pointer/documents/pdf/V42N1_Pre-Emptive_Warfare.pdf

¹¹² Raska, M. 2016, Military Innovation in Small States: Creating a Reverse Asymmetry (Routledge), p.138.

համահունչ¹¹³: Ավելին, այս երկիրը, հասկանալով իր ազգային տեխնոլոգիական ներուժի առանձնահատկությունները, համադրելով իր ազգային պաշտպանական կարիքների համատեքստի և միջազգային ասպարեզում իր ուրույն տեղն ունենալու խնդիրը, համարվում է ցամաքային անօդաչու մարտական սարքերի և պլատֆորմների տեխնոլոգիական համաշխարհային առաջատարներից մեկը¹¹⁴:

Ստանալով «Ոգնի» անվանումը՝ էստոնական ՋՈւ հայեցակարգը տեղական ռազմական տեխնոլոգիաները զարգացնելու և սեփական զինված ուժերում ներդնելուն մեծ առաջնահերթություն է տալիս¹¹⁵: Արդյունքում այն ոչ միայն հաջողել է Մինգապուրի և Իսրայելի հետ համատեղ ստեղծել ԱԲ պարունակող մի շարք բարձր տեխնոլոգիական ավտոնոմ զինատեսակների կամ համակարգերի արտադրություն, այլ նաև զգալիորեն բարձրացրել է արագ արձագանքման և մարտական խնդիրն առավել օպերատիվ և արդյունավետ կատարելու կարողություններ՝ մոբիլ գործողությունների ու գերձզգրիտ հարվածներ հասցնելու լայն հնարավորությունների համատեքստում: Ինչպես 2016 թ-ին նշել է երկրի պաշտպանության նախարար Ցահկնան՝ «մեր համեմատաբար փոքրաքանակ ՋՈւ պարտաստվածության և մարտական ունակության համեմատական առավելություններից պիտի լինի գերարագության, գերինովացիայի և գերձզգրիտ հարվածներ հասցնելու կարողությունների արդյունավետ համադրումը» (էստոնիայի ՊՆ):

Ավելին, տեղեկատվական տեխնոլոգիաների և ԱԲ նոր հնարավորությունները թույլ են տալիս էականորեն կրճատել տարածական, ժամանակային և տեղեկատվական տարանջատվածությունը գորքերի և կառավարման կենտրոնների միջև՝ դարձնելով պատերազմական գործողություններն առավել դինամիկ, ինտենսիվ, իրական ժամանակում կառավարվող և հետևաբար արդյունավետ՝ ըստ էության

¹¹³ Raud, M. 2018, Hedgehog Meets Dolphin: Can Estonia Adopt Singapore's Secret Weapon—Defence Innovation? [Online] <https://icds.ee/en/hedgehog-meets-dolphin-can-estonia-adopt-singapores-secret-weapon-defence-innovation/>

¹¹⁴ Global Innovation Index 2021, Estonia, p. 79. [Online] https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo_pub_gii_2021.pdf

¹¹⁵ ERKK 2021: 18

մարտական գործողությունների գերհազեցվածության և ակտիվության պատճառով վերացնելով մարտավարական և օպերատիվ դադարները:

Այսպիսով, մի կողմից ձևավորվող բազմաբևեռ աշխարհակարգը, փոքր պետությունների միջավայրը դարձնում է ավելի անկայուն և սպառնալիքներով լի, քանի որ ամեն մի բևեռ փորձում է ձևավորել իր «խաղի կանոնները»՝ ունենալով միջազգային հարաբերությունների ու անվտանգության նորմերի և արժեհամակարգի իր տեսլականը, մյուս կողմից, միջազգային համակարգի նման բազմաշերտ ու բազմազան բնույթը լայն հնարավորություններ է տալիս այն փոքր պետություններին, որոնք ունեն քաղաքական, տնտեսական, անվտանգային, նորմատիվային և աշխարհակարգային ազդեցություն ունենալու և ձևավորվող նոր աշխարհակարգի տարբեր խաղի կանոնների ձևավորման վրա ազդելու հավակնություններ:

Հայաստանի Հանրապետությունը նույնպես փոքր պետություն է: Ներկայումս գտնվելով գոյաբանական անվտանգային մարտահրավերների առջև՝ այն նույնպես ունի անվտանգության երկրնտրանքի ընդգծված հատկանիշներ, ինչպես ժամանակին ունեցել կամ շարունակում են ունենալ վերոնշյալ փոքր պետությունները: Ավելին, Հայաստանը գտնվում է բարդ ու սպառնալիքներով լի անվտանգային միջավայրում, որի աշխարհագրական չափանիշները համեմատելի և նույնիսկ համադրելի են վերոնշյալ մի շարք փոքր պետությունների հետ: Ուստի, համոզված ենք, որ ՀՀ պաշտպանական դոկտրինն և ԶՈւ արդիականացումն ու բարեփոխումները պետք է հիմնված լինեն կամ առնվազն մեծապես հաշվի առնեն վերը նշված փոքր երկրների պաշտպանական լուծումների ու փորձի վրա՝ դրա համար ցուցաբերելով համապատասխան համակարգային մոտեցում եւ անհրաժեշտ քաղաքական կամք:

Հայաստանի զինված ուժերի ադապտացվելու անբավարար ունակությունների հիմնական պատճառները

Վերլուծության այս բաժնի եզրակացությունները հիմնվում են արտերկրի առաջատար մասնագետների (Յուրիյ Պոդոյակա, Մայքլ Քոֆման, Մարկ Կանչիյան, Բոբ Համիլթոն, Ռուսլան Պուխով, Լեոնիդ Ներսիսյան, Ալեքսեյ Արեստովիչ, Վալերիյ Սոլովեյ, Անտոն Լավրով, Դուգլաս Բարրի) գնահատումների և եզրակացությունների վրա, որոնք հետևել և քննադատական վերլուծության են ենթարկել 44-օրյա պատերազմի ընթացքում ՀՀ և ԱՀ զինված ուժերի վարքագիծն ու օպերատիվ իրավիճակի փոփոխությունից ելնելով ադապտացվելու ունակությունները:

44-օրյա պատերազմի առանձնահատկությունները հերթական անգամ ցույց տվեցին պատերազմ վարելու 20-րդ դարի դասական մոտեցումների անկենսունակությունը: Դրան զուգահեռ, պատերազմը ցույց տվեց բարձր տեխնոլոգիական ռազմական և/կամ տեխնոլոգիական ոչ ռազմական միջոցների ներդաշնակ արդյունավետ կիրառումը ռազմական նպատակներում, որոնք շատ դեպքերում իրենց արդյունավետությամբ չեն զիջում, իսկ որոշ առումով նույնիսկ գերազանցում են անմիջական ռազմական ուժի կիրառման արդյունավետությունը: Այն իր մեջ ներառում է հակամարտության մեջ «հիբրիդային մեթոդների», այդ թվում՝ ռադիոէլեկտրոնային և կիբեր ոլորտում հարձակողական օպերացիաների, ինչպես նաև քողարկված տեղեկատվահոգեբանական միջոցառումների ակտիվ կիրառմամբ կամ հակառակորդի քարոզչության սխալների խելամիտ օգտագործմամբ:

Վերոնշյալ փորձագետների կարծիքով, խորքային, համալիր-համակարգային ռեֆորմների արդյունքում, Ադրբեյջանի զինված ուժերը 44-օրյա պատերազմի ժամանակ ունակ եղան ներդնելու և գործարկելու ժամանակակից ոչ կոնտակտային մարտ վարելու և իրական ժամանակում օպերատիվ հետախուզության, մարտի ու գորքերի կառավարման համակարգեր՝ ցուցադրելով մարտական իրավիճակին արագ ադապտացվելու, միևնույն ժամանակ տարբեր մարտավարություններ կիրառելու,

ինչպես նաև մարտադաշտում հակառակորդին իր կանոնները և իրավիճակ թելադրելու կարողություններ: Պատերազմը նախաձեռնելու առաջին իսկ պահից սկսած մինչև այն ավարտին հասցնելու պահը Ադրբեջանին հաջողվեց պահպանել ռազմավարական նախաձեռնություն և լինել մարտական գործողությունների դինամիկան և ռիթմը թելադրողի դերում:

Ինչ վերաբերում է պատերազմի ժամանակ ՀՀ ՁՈւ օպերատիվ վարքագծին, ապա ըստ վերոնշյալ փորձագիտական համայնքի, ՀՀ ՁՈւ կառուցվածքը, կառավարման ու վերահսկման համակարգը, գիտելիքային ու նյութատեխնիկական ունակություններն առաջին արցախյան պատերազմից հետո պատշաճ կերպով չեն զարգացել և արդիականացվել ժամանակակից համակարգերի և պատերազմների հայեցակարգերին համահունչ: Ընդհակառակը, Առաջին դարաբաղյան պատերազմի արդյունքում կուտակված փորձն ու գիտելիքը, ոչ միայն չեն կոնցեպտուալիզացվել ու ներդրվել հետպատերազմյան շրջանի բանակաշինության մեջ որպես միջավայրին ու մարտական պայմաններին համարժեք փորձ, այլև կորսվել են հատկապես մոբիլության/շարժունակության առումով: Ավելին, ըստ փորձագետների, ոչ միայն տեղի չի ունեցել հարակից պատերազմական գործողությունների վերլուծություն ու գիտելիքի կումուլացիա և դրա ադապտացում հայկական ՁՈւ միջավայրում, այլ նույնիսկ 44-օրյա պատերազմի ընթացքում ՀՀ զինված ուժերին (ներառյալ ՊԲ) չի հաջողվել ադապտացվել պատերազմի ժամանակակից կանոնների բաղադրիչներ պարունակող ընթացող ռազմական գործողություններին:

Փորձագիտական համայնքում գերակայում է տպավորությունն առ այն, որ ՀՀ ռազմական պարտությունը ոչ թե հակառակորդի ուժային գերակայության հետևանքով է, այլ ՀՀ ՁՈւ լայնածավալ, բարձր ինտենսիվությամբ մարտ վարելու անբավարար պատրաստության հետևանքով: Հայաստանը առնվազն վերջին տասնամյակի ընթացքում, աչքի առաջ ունենալով Ադրբեջանի ռազմական նախապատրաստություններին և հռետորաբանությանը, չի պատրաստվել այնպիսի պատերազմի, որը հնարավորություն կտար օգտագործելու հայկական կողմի

համեմատական առավելությունները: Ավելին՝ փորձագետները հակված էին այն մտքին, որ ՀՀ և ԱՀ զինված ուժերի տեխնոլոգիական և ռազմատեխնիկական ակնհայտ անհամաչափությունը կարող էր ունենալ շատ ավելի մեղմ հետևանքներ մարտի դաշտում, եթե հայկական կողմը, իմանալով հակառակորդի պատրաստվող հարձաման մասին, ունակ լիներ կայացնելու կանխարգելիչ հարվածի մասին քաղաքական որոշում:

Ըստ փորձագետի՝ դարաբաղյան պատերազմի ընթացքում ՀՀ զինված ուժերը օպերատիվ-մարտավարական մակարդակներում ցուցադրեցին մարտական իրավիճակային խնդիրներին ադապտացվելու, քողարկման, հակահարձակողական միջոցառումներ իրականացնելու, կարգապահության, օպերատիվ կապի և հետախուզության կիրառման, ինչպես նաև պաշտպանության ժամանակ մանևրելու խիստ անբավարար ունակություններ: Ռազմավարական մակարդակում, վերոնշյալ փորձագետները մատնանշել են պատերազմի ընդհանուր կառավարման քաղաքական, տնտեսական, բարոյամոտիվացիոն, օրենսդրական և ընդհանուր պետական համակարգի դիմակայության անբավարար աստիճան:

Ավելին, Գխավոր շտաբը (ԳՇ) դրսևորեց պատերազմը վարելու, մարտական գործողությունների դինամիկան և իրավիճակը փոխելու, հակառակորդի օպերատիվ-մարտավարական մտահղացումները կանխատեսելու, հակառակորդի մանևրելու հնարավորությունները սահմանափակելու, օպերատիվ և մարտավարական մակարդակում մարտական իրավիճակից բխող համարժեք մոտեցումներ ցուցաբերելու, ստացիոնար պաշտպանության մարտավարությունից բացի՝ այլ մարտավարական հնարքների մտահղացման, գորքերի ղեկավարման, բնակավայրերի և բնական բնագծերի պաշտպանության արդյունավետ կազմակերպման, կազմակերպված նահանջի կազմակերպման ոչ ադեկվատ կամ անբավարար մարտավարություն: Ընդհանուր առմամբ, մի շարք ռազմական փորձագետներ, վերածելով հայտնի խորհրդային ռազմական տեսաբան և մարշալ Շապոշնիկովի ԶՈւ ԳՇ-ին տրված «բանակի ուղեղ» ձևակերպումը բառախաղի, պատերազմի ժամանակ ՀՀ

ԳՇ վարքագիծը բնութագրել են որպես «մահացած ուղեղ» կամ «ուղեղի կաթված» (brain-dead).

44-օրյա պատերազմի անհաջողությունների պատճառներից են .

Ա) բարոյապես հնացած խորհրդային հայեցակարգային փիլիսոփայության վրա կառուցված ՀՀ ԶՈւ մտածելակերպային պարադիգման, բարոյապես հնացած կառուցվածքն ու անբավարար արդյունավետություն ունեցող օպերատիվ կառավարումը, ինչպես նաև ռուսաստանյան ավանդական ռազմական մտքի ծիրին մեջ կառուցված ԶՈւ տարատեսակ ստորաբաժանումների միաբնույթ/սահմանափակ մարտավարությամբ կիրառումն ու մարտական իրավիճակից բխող ժամանակակից մարտավարական հնարքներ որդեգրելու ունակության բացակայությունը:

Բ) ԶՈւ ընդհանուր անձնակազմի մարտական/օպերատիվ պատրաստվածության ցածր մակարդակը, ցածր հագեցվածությունն ու սահմանափակ ունակությունները, որն արդյունք է անորակ վարժանքների, դրանց պրակտիկ (դաշտային) պարապմունքների անբավարար լինելու, կամ ցածր նորմատիվների կամ այդ նորմատիվների արդյունավերտության չափման ոչ ադեկվատ մեխանիզմի:

Գ) Ենթակայության տակ գտնվող տարբեր տիպի զորամիավորումների միջև մարտական լիարժեք ներդաշնակման անբավարար մակարդակը, կոորդինացված մարտ վարելու ունակությունների անբավարար մակարդակը՝ ելնելով տեխնոլոգիական հագեցվածության, ավտոմատացված, ինչպես նաև ժամանակակից կրակի կառավարման համակարգերից մինչև կապի և իրական ժամանակում հետախուզության, դիտարկման, տվյալների օպերատիվ մշակման և իրավիճակային արձագանքի տեխնիկական/տեխնոլոգիական հնարավորությունների սղությունից կամ դրանց իսպառ բացակայությունից, ինչպես նաև միջին և բարձր կադրային սպայական անձնակազմի ժամանակակից մարտ վարելու, համապատասխան սպառազինության, կապի և նավիգացիոն միջոցների սակավությունն ու համապատասխան գիտելիքի ու հմտությունների անբավարար մակարդակը:

Ուստի, Հայաստանի Հանրապետությունն այլ տարբերակ չունի, քան նախագծելու և իրականացնելու ՁՈւ խորքային, արմատական այն է՝ համալիր-համակարգային բարեփոխումներ՝ ներդնելով ժամանակակից նորմատիվներ և չափանիշներ: Համոզված ենք, որ այս հարցում պետք է հիմնվել նմանատիպ ռազմաքաղաքական խնդիրներին լուծում տված ու համեմատելի միջավայրում գտնվող հաջողակ փոքր պետությունների փորձի վրա՝ ներգրավելով համապատասխան մասնագետների, ստեղծելով այդ փոքր երկրների հետ երկարաժամկետ ռազմական համագործակցության իրավապայմանագրային և դիվանագիտական բազա:

ՁՈւ նոր կառուցվածքի կոնցեպտուալ փիլիսոփայությունը

Ինչպես նշել է ամերիկյան բրիգադային գեներալ և ռազմական տեսաբան Մքմասթերը, ժամանակակից պետության «Ձինված ուժերը չպետք է նպատակ ունենան մարտնչելու հերոսաբար: Նրանք պետք է մարտնչեն պրոֆեսիոնալ և խելամիտ՝ իրականացնելով իրենց առջև դրված ռազմավարական տեսանկյունից ամենաառաջնահերթ մարտական խնդիրը, այն է՝ ապահովել իրենց երկրի համար հաղթանակ մարտի դաշտում»¹¹⁶: Դրա համար անհրաժեշտ է ունենալ այնպիսի զինված ուժեր, որոնք ունակ կլինեն դինամիկ համալիր փոխակերպման՝ արտացոլելով արդի ռազմական գիտության և ինտելեկտուալ, նորարարական մարտ վարելու համակարգային ներդաշնակեցման կարողություն:

Նման ՁՈւ ունենալու համար նախ և առաջ պետք է սկսել. ա) ՁՈւ կառուցվածքի կոնցեպտուալ և փիլիսոփայական վերափոխումից՝ ձևավորելով հստակ տեսլական՝ թե կոնկրետ ինչ ֆունկցիոնալ դեր է ունենալու ԳՇ-ն որպես զորքերի կազմակերպչական և վերահսկողական կենտրոնական օրգան և ինչ ռազմավարական

¹¹⁶ McMaster H.R. 2017, *Essential Guide to Military Ethics: Army Professionalism, The Military Ethic, and Officership in the 21st Century* (The Professional Ethic and the State Symposium Report).

և օպերատիվ խնդիրներ է դնելու ՋՈւ առջև; բ) լայնածավալ կադրային բարեփոխումից՝ նորմատիվային տեսանկյունից հստակ պատկերացնելով, թե ինչպիսի որակներ ունեցող սպաներ և ընդհանրապես ինչպիսի զինվորական անձնակազմ ենք ցանկանում ունենալ Հայաստանի ռազմաքաղաքական անվտանգային մարտահրավերներին դիմակայելու և հաղթահարելու համար:

Փոքր պետությունների ռազմական ռազմավարությունն ու ՋՈւ կառուցվածքների համեմատական վերլուծությունը հուշում է, որ մեր պարագայում ՀՀ զինված ուժերը պետք է ունենան այնպիսի կառուցվածք, որը հետագայում դյուրին լինի պահել մշտական ադապտացիայի և արդիականացման գործընթացի մեջ՝ ժամակակալից ռազմական գիտության, ռազմական տեխնոլոգիաների և ժամանակակից պատերազմներ վարելու նորարարությունների և որպես մարտադաշտ հիբրիդային ոլորտների զարգացման հետ համահունչ:

Կառուցվածքային բարեփոխումների առումով՝ ՀՀ ՊՆ և ՋՈւ ռազմավարական առաջնային խնդիրը պետք է լինի խորհրդային ռազմական կառուցվածքային տրամաբանությունից և ՌԴ ավանդական կառուցվածքային մոտեցումներից վերջնական հրաժարումն ու դրանց արդյունավետ փոխարինումը ժամանակակից, ՀՀ անվտանգության պահանջներին և մարտահրավերներին հարմարեցված կառուցվածքի՝ օգտագործելով այլ փոքր պետությունների ՋՈւ կառուցվածքային մոդելներն ու լուծումները: Մեր այս կարծիքը բխում է այն եզրահանգումից, որ մեծ տերությունների ՋՈւ կառուցվածքային հաջողված մոդելներն իրենց բարդ բյուրոկրատական համակարգերով առավել համապատասխանեցված են այդ երկրների համեմատաբար մեծ ՋՈւ բազմազանության և մեծաքանակ զորքերի և դրանք սպասարկող բարդ լոգիստիկայի կառավարման տրամաբանությունից: Ավելին, մեծ տերությունների ՋՈւ կառավարման համակարգի բազմաշերտ և բարդ կառուցվածքը անհնար է նաև այդ երկրների գլոբալ անվտանգային շահից բխող առանձնահատկություններից և առաջնահերթություններից, ինչը համեստ օգտակարություն կարող է ունենալ Հայաստանի համար:

Ռազմավարական տեսանկյունից, ակհայտ է, որ իր ներկայիս կառուցվածքային տեսքով, ինչպես նաև ԽՍՀՄ ՁՈւ ժառանգած նորմատիվներով և ՁՈւ ստորաբաժանումների կիրառման ավանդույթներով ու տրամաբանությամբ կառավարվող ՀՀ զինված ուժերը ունակ չեն արդյունավետ և արագ ադապտացվել Հայաստանի պես փոքր պետության անվտանգային միջավայրին և իրականացնել բազմաբնույթ զսպման գործառույթ՝ ՀՀ պաշտպանական և անվտանգային կարիքներին համապատասխան: Ընդհանուր առմամբ, հնացած խորհրդային դոկտրիններից հեռանալու ու անվտանգության առումով շոշափելի և չափելի հաջողությունների հասած փոքր պետությունների չափանիշներին, նորմատիվներին, կառուցվածքին, կառավարման համակարգին համապատասխան որակապես նոր ՁՈւ ստեղծելու և ազգային ռազմաարդյունաբերական համալիրի (ՌԱՀ) առավել հստակ և աշխարհում մրցունակ «որմնախորշ» (niche) զբաղեցնելու խնդիրներ կան:

Կարծում ենք, որ ՀՀ զինված ուժերը պետք է ունենան այնպիսի կառուցվածքային համակարգ, որը կհամապատասխանի առավել շարժունակ (մոբիլ), բարձր մանևրականությամբ, արագ արձագանքման կամ արագ մարտական բացազատման, արագ հայելային (վերա)դիսլոկացիայի, կոնվենցիոն և ոչ դասական մարտավարությունը համադրող, տարբեր տիպի ստորաբաժանումների և գորամիավորումների օպերատիվ և մարտավարական մակարդակում ներդաշնակ գործելու, իրական ժամանակում մարտադաշտի և օպերատիվ-մարտավարական մակարդակում կառավարող, իրական ժամանակում արբանյակային, օդային և ռադիոլոկացիոն, ինչպես նաև մարտավարական/գորային հետախուզական տվյալն օրեպատիվ և արդյունավետ համադրող, վերլուծող և ընդգրկուն որոշումներ կայացնելու, ոչ կոնտակտային և գերճշգրիտ մարտ վարելու պահանջներին: Այլ կերպ ասած, Պաշտպանություն և Զսպում սկզբունքի ժամանակակից արդյունավետ կիրառման տրամաբանությունը ենթադրում է, որ ՁՈւ կառուցվածքը պետք է ենթադրի գորքերի դասավորվածություն տարածքային/տերիտորիալ սկզբունքի վրա, սակայն որոնք պետք է լինեն գերշարժունակ, գտնվեն կենտրանացված պլանավորման ենթակայության տակ (centralized planning), սակայն կիրառման ընթացքում ունակ

լինեն գործել մարտական առաջադրանքի կատարման ապակենտրոնացված (decentralized execution) սկզբունքով:

Ավելին, զինված ուժերը պետք է ունենան այնպիսի կառուցվածքային տրամաբանություն, որն առավելապես ունակ լինի ապահովելու նորարար, բարձր տեխնոլոգիական և ավտոմատացված պլատֆորմների և համակարգերի ներդրումը, տարբեր գորամիավորումների հետ բարձր ներդաշնակեցումը, փորձարկումն ու գործնական կիրառումը:


Եվ վերջապես, ՁՈւ կառուցվածքի արդյունավետությունը պետք է հիմնված լինի հինգ անկյունաքարային փոփոխականների առավել արդյունավետ չափման և գնահատման մեխանիզմի վրա, որոնք են. (ա) լոգիստիկա, (բ) զենք/զինամթերք, (գ) պատրաստվածություն, (դ) մանևրականություն և շարժունակություն, (ե) մոտիվացիա:

Ելնելով այս բազմաշերտ և բարձր չափանիշից՝ մենք ընտրել ենք ավստրիական և էստոնական ՁՈւ կառուցվածքների սինթեզված տարբերակն ու մարտավարական մակարդակում ռուս-ուկրաինական պատերազմի դասերը (lesson learned), ինչպես նաև այլ նորարարական բաղադրիչները ինտեգրումը որպես ՀՀ ՁՈւ նոր կառուցվածքին հարմար օրինակ-մոդել: Հատկապես ավստրիական կառուցվածքային և ռազմական կառավարման մոդելի յուրահատկությունը կայանում է նրանում, որ այն իրենից ներկայացնում է պրուսական դասական (որի մասն է կազմում նաև խորհրդային/ռուսականը) և անգլոսաքսոնական ռազմական համակարգերի առավել արդյունավետ համադրումը: Ջորջերի կառավարման ընդհանուր փիլիսոփայության տեսանկյունից, անգլոսաքսոնական մոդելը պրուսական մոդելից տարբերվում է ավելի շուտ գորքերի գործողությունների կոորդինացնող, այլ ոչ պրուսականի պես խիստ կենտրոնացված օրգանի (ԳՇ) կառավարման ֆունկցիայով՝ աչքի ընկներով գորքերին մարտական առաջադրանքի իրականացման հարցում որոշակի ինքնուրույնություն տալու հատկանիշներով: Այսպիսով, ավստրիական մոդելը իր մեջ պարունակում է պրուսական դպրոցի խիստ կենտրոնացված կառավարման բաղադրիչ, որը, միևնույն

ժամանակ, հավասարակշռված է զորքերի և զորամիավորումների «ազատ մարտավարության»¹¹⁷ դիալեկտիկ սկզբունքով:

Ավելին, Ավստրիայի ԶՈւ համեմատական առավելությունը կայանում է նրանում, որ չլինելով ՆԱՏՕ-ի անդամ՝ այն ունի ամբողջական մուտք թե դեպի ռազմատեխնիկական, թե դեպի ռազմական տեխնոլոգիաներ, և թե մարտ վարելու կամ մարտի կառավարման ժամանակակից համակարգեր՝ Գերմանիայի, ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի միջոցով, իսկ ռազմական տեխնոլոգիաների առումով՝ սերտ համագործակցում է հարևան Շվեյցարիայի, Իտալիայի, և այլ տերությունների հետ:

Գծապատկեր 1. ԶՈւ կառուցվածքի առաջարկվող մոդելի տրամաբանությունը



¹¹⁷ «Ազատ մարտավարություն»-ը որպես ռազմական տեսական սկզբունք հակադրված է «փակ մարտավարության» սկզբունքին: Այն ենթադրում է մարտավարական շղթայի հրամանատարությանը որոշումներ կայացնելու և նախաձեռնողականություն ցուցադրելու համեմատական ազատություն՝ տրված օպերատիվ և ռազմավարական հրամանատարության կողմից: Սկզբունքի պրակտիկ ձևավորման և կիրառման ռետրոսպեկտիվ արդյունքների մասին տես՝ Foley R., 2004, *German Strategy and the Path to Verdun* (Cambridge).

Այսպիսով, ռազմավարական օղակում առաջարկվում է Գլխավոր շտաբը ենթարկել կառուցվածքային արդիականացման՝ ներդնելով ՋՈւ Գլխավոր հրամանատարության կոնցեպտը և, օրինակ, ցամաքային զորքերի կառավարման կառուցվածքային ներդաշնակեցում կատարելով ներդնել Օպերատիվ հրամանատարություն կոնցեպտը, մինևույն ժամանակ՝ հրաժարվելով կորպուսների տրամաբանությունից:

Օպերատիվ օղակում առաջարկվում է ցամաքային/համագորային գունդ/դիվիզիա կառուցվածքային մոդելներից ամբողջությամբ անցում կատարել առանձին բրիգադների կոնցեպտին, որը նոր գորամիավորումներին կտա շարժունակություն, արագ ծավալվելու և մասամբ մշտական պատրաստության մեջ գտնվելու հնարավորություն: Մարտական իրավիճակներում ժամանակակից ռազմագիտական տրամաբանության շրջանակներում այս առանձին բրիգադները կստանան ինքնուրույն գործելու շառավիղ՝ ժամանակակից մարտ վարելու պայմաններում մարտական առաջադրանքն առավել արդյունավետ և օպերատիվ կատարելու նպատակով:

Մարտավարական գումարտակ-վաշտ օղակում առաջարկվում է ինտեգրել ավստրիական լեռնագրոհային և եգերական ստորաբաժանումների կոնցեպտները ռուս-ուկրաինական գումարտակամարտավարական խմբերի (ԳՄԽ) կոնցեպտի հետ: Ավստրիական լեռնագրոհային «եգերական» ստորաբաժանման կոնցեպտը որոշակի նմանություն ունի, օրինակ, թուրքական (լեռնային) «կոմանդոս» ստորաբաժանումների կոնցեպտի հետ, որի խնդիրն է արդյունավետ մարտ վարել բարդ ռելիեֆային, լեռնային, որոշ դեպքերում՝ քաղաքային կամ գիշերային իրավիճակներում՝ հակառակորդի վերահսկողության տարածք կամ թիկունք ներթափանցման և ակտիվ քողարկում իրականացնելու միջոցով:

Վերջին պատերազմների վերլուծությունը ցույց է տալիս, որ հակամարտող կողմերը հաճախ հրաժարվում են պասիվ պաշտպանական և ստացիոնար ինժեներատեխնիկական համակարգերից՝ առավելությունը տալով օջախային, բարձր

մանրականությունն ապահովող և, միննույն ժամանակ, հակառակորդի մանրականությունը սահմանափակող պաշտպանական տրամաբանությանը: Ընդհանուր առմամբ, ժամանակակից պատերազմներում նպատակահարմար է դառնում մարտավարական օդակի տարբեր հարվածային ուժերի ինտեգրված միասնական կիրառումը՝ գերշարժունակության և տեխնոլոգիական միջոցների համադրմամբ՝ հակառակորդի համար անսպասելի էֆեկտ ստեղծելու և նրա գործողությունները, մատակարարումն ու օպերատիվ-մարտավարական մտահղացումները սահմանափակելու կամ խափանելու նպատակով:


Ավստրիական լեռնագրոհային ստորաբաժանման կոնցեպտի ինտեգրումը ռուս-ուկրաինական Գումարտակային մարտավարական խմբի (ԳՄԽ) հետ հնարավորություն է տալիս լինելու ակտիվ նախահարձակ կամ հակահարձակ գործողությունների տրամաբանության մեջ՝ հաճախ չմտնելով հակառակորդի հետ ուղիղ կոնտակտի մեջ. արագ ներթափանցել հակառակորդի թիկունք, իրականացնել խորքային մանեւրներ կամ սրընթաց առաջընթացի և ներթափանցման հետևանքով ոչնչացնել նրա լոգիստիկ և թիկունքային ապահովումը՝ նվազեցնելով վերջինիս ոչ միայն կրակային և օպերատիվ-մարտավարական հնարավորությունները, այլև հասցնելով հոգեբանական բարդ իրավիճակ՝ ստեղծելով շրջապատման և մշտական ավիացիոն, հրթիռահրետանային կրակային ազդեցության տակ գտնվելու շարունակական սպառնալիք: Այս սինթեզը հատկապես հետաքրքիր է զուգահեռաբար կրակի խտության և ճշգրիտ, կառավարվող հարվածի ժամանակակից հնարավորությունների բարձրացման, տարբեր նշանակության ԱԹՄ-ների առնվազն դասակի մակարդակ և բարձր մասսայականացման և միասնական հետախուզակրակային համակարգի ցանցակենտրոն կառավարման գործադրման համատեքստում:

Այսպիսով, չնայած ներկայիս ռազմական գիտությունը Գումարտակային մարտավարական խումբը համարվում է «ժամանակավոր զինված զորամիավորում»՝ ստեղծված պատերազմի ժամանակ մարտական գործողություններ իրականացնելու

համար»¹¹⁸, մեր կարծիքով, ավստրիական լեռնագերային կոնցեպտի հետ ԳՄԽ կոնցեպտի ինտեգրումը՝ որպես բրիգադի հիմնական համագորային միավորում, հնարավորություն կտա այն վերաիմաստավորել որպես մշտական/հիմնական ստորաբաժանում՝ մեկ աստիճան բարձրացնելով դասական գումարտակ հասկացությունը:

Այս համադրումը կենթադրի արագ տեղաշարժվող, իր մեջ տարբեր զորատեսակներ պարունակող (մեքենայացված/մեխանիզացված հետևակային, տանկային, հրետանային, ՌԷՊ, հակաօդային, հակատանկային և ԱԹՍ), կրակային բարձր հնարավորություններով, ինքնուրույն գործելու հնարավորությամբ օժտված, ինքնաբավ մարտավարական զորամիավորում՝ մոտ 850-900 հոգի ընդհանուր անձնակազմի թվաքանակով:

Գծապատկեր 2. Լեռնագրոհային ԳՄԽ մոդել՝ ադապտացված ՀՀ ՁՈւ համար



Ռազմական տեխնոլոգիաների հարցում, կարծում ենք, որ առաջնահերթ է անցկացնել ազգային ինտելեկտուալ ռեսուրսի խորքային և որակական ինվենտարիզացիա: Որից հետո տրամաբանական ենք համարում ՊՆ կից և ՁՈւ հետ սերտորեն կապված մի շարք ՌԱՀ մաս հանդիսացող հետևյալ գործակալությունների ստեղծումը. Պաշտպանական տեխնոլոգիական գիտության և ապագա համակարգերի

¹¹⁸ Федоренко А., Дюков А., Дашенко С., 2020, Состав и Назначение Батальонной Тактической Группы [Военный Институт РФ].cc 7-13.

գործակալություն, Պաշտպանական և ինովացիան տեխնոլոգիաների ներդրումների գործակալություն, Կիրառական գիտությունների և նորարարական լուծումների էքսպերիմանտալ լաբորատորիա: Այս գործակալությունները ոչ միայն կհանդիսանան, օրինակ, նույն Սինգապուրի, Իսրայելի, Շվեդիայի կամ Էստոնիայի հետ ռազմական տեխնոլոգիաների գծով ռազմավարական համագործակցության ողնաշարը, այլ կունենան ազգային ոլորտը որոշակիորեն կարգավորող գործառույթ: Վեր հանելով ազգային պաշտպանության պահանջարկների համատեքստում տեխնոլոգիական ՌԱՀ-ի դերն ու հստակ ձևակերպելով աշխարհում այս ոլորտում մրցունակ լինելու այդ «որմնախորշը»՝ այս գործակալությունների ուսերի վրա կլինի ոչ միայն ոլորտների զարգացումն ու չափելի արդյունքի՝ արտադրության ստեղծման ընթացքի կառավարումը, այլ նաև ոլորտի ռազմական հատվածի կարգավորումը Հայաստանում: Օրինակ՝ նույն Պաշտպանական և ինովացիան տեխնոլոգիաների ներդրումների գործակալությունը կարող է լինել մի պլատֆորմ, որը ոչ միայն դրամաշնորհներ է առաջարկում Հայաստանում գործող ոլորտային կազմակերպություններին՝ ելնելով ՌԱՀ պահանջարկից, այլ նաև տալիս է կրթաթոշակ՝ ԱՄՆ, Իսրայելի, Շվեյցարիայի, Մեծ Բրիտանիայի, Չինաստան, Սինգապուր կամ այլ ռազմական տեխնոլոգիաներում առաջատար ԲՈՒՀ-երում ուսանելու համար, կրկին՝ ելնելով ոլորտում այդ «որմնախորշը» զբաղեցելու և դրան համապատասխան մասնագետներ պատրաստելու պահանջարկից:

Էականորեն կարևոր է կադրային ռեֆորմի հստակ ձևակերպումը: 2020 թ-ի պատերազմն ու ներկայումս ընթացող ռուս-ուկրաինական պատերազմը ցույց տվեցին ժամանակակից ռազմական գիտելիքների և օպերատիվ մակարդակում խորքային, հաճախ ռազմական արվեստի ոչ դասական մարտավարությունների կիրառման առավելությունները, ինչի հետևանքով հնարավոր է լինում խախտել հակառակորդի ռազմավարական նախաձեռնության պահպանումը: Ելնելով ժամանակակից ռազմարվեստի մտածելակերպի և խորքային գիտելիքների մշտական զարգացման դինամիկայի յուրահատկությունից՝ վստահ ենք, որ ՀՀ զինված ուժերին պետք են որակապես նոր համագորային բարձր և միջին օդակի հրամանատարական կազմ,

որոնք, ինչպես որակում է ամերիկյան գեներալ և տեսաբան Մքմասթերը՝ «գիտնական-գեներալների կոհորտ», որը գտնվում է ժամանակակից ռազմարվեստի զարգացման շարունակական ուսուցման և կրթման պարադիգմայի մեջ: Այլ կերպ ասած՝ ՀՀ զինված ուժերի համագորային որակապես նոր հրամանատարները պետք է ունակ լինեն ոչ միայն վարելու արդյունավետ բարձր տեխնոլոգիական և գիտելիքահեն ռազմական գործողություն, այլև պետք է կարողանան օպերատիվ մակարդակում գործել ազատ մարտավարության սկզբունքի հիման վրա՝ իրենց իսկ պրակտիկ որոշումներով և մարտական խնդիրը լուծելու ուրույն կոգնիտիվ և գիտելիքահեն հմտություններով, իրենց ներդրումն ունենան համաշխարհային ռազմական գիտության զարգացման գործում՝ ստեղծելով տարբերակվող հայկական ռազմական դպրոցի հիմքերը:

Այս առումով, կարևոր ենք համարում ապագա համագորային հրամանատարների մասնագիտական հմտությունները էապես բարձրացնել և մասնագիտական մտածելակերպը զարգացնել՝ հիմնարար ռազմական կրթության ստացումն ու գիտական աշխատանք կատարելու շարունակականության միջոցով՝ ՆԱՏՕ-ի անդամ երկրների, Իսրայելի, Ճապոնիայի, Սինգապուրի, Չինաստանի, Շվեյցարիայի, Շվեդիայի, Ավստրիայի, Ուկրաինայի առաջատար ռազմական գիտակրթական հաստատություններում: Կարևորվում է նաև անգլերեն լեզվի, որպես ժամանակակից ռազմագիտության և ռազմարվեստի համաշխարհային լեզվի, բարձր մակարդակի տիրապետման մասսայականացումը ՀՀ զինված ուժերում: Անգլերեն լեզվի մասնագիտական իմացությունը հնարավորություն կտա համագորային և ոչ միայն, հրամանատարներին իրենց ուշադրության կենտրոնում մշտապես պահել ռազմարվեստի զարգացման և ռազմագիտության զարգացման ժամանակակից միտումները:

Ինչ վերաբերում է ցածր և միջին սպայական անձնակազմի պատրաստությանը, ապա ուշադրության ենք դարձնում ավստրիական բանակի ԶՈւ ենթասպաների (non-commissioned officer) «ռազմական առաջնորդության» կոնցեպտը¹¹⁹, որի նպատակն է

¹¹⁹ Homan K., van den Doel T., 2010, Preparing the Austrian Forces for the 21st Century. [Online] https://www.bundesheer.at/pdf_pool/publikationen/17_paf21_10.pdf

«աճեցնել» երկրի նկատմամբ բարձր պատասխանատվության զգացում ունեցող, իրենց մասնագիտությունն ու մասնագիտական գիտելիքը սիրող ՋՈւ ապագա առաջնորդների, հրամանատարների և մասնագետների: Ռազմական առաջնորդության կոնցեպտը ենթադրում է երիտասարդ սպաների մասնագիտական ձգտումների, մարդկային որակների և բնավորության համապարփակ վերլուծություն՝ տվյալ սպայի կրթությունը և դրված առաջադրանքը ոչ դասական կրեատիվ մասնագիտական մոտեցմամբ լուծելու ունակությունների զարգացում, յուրաքանչյուր սպայի «ուժեղ և թույլ» կողմերի բացահայտում և դրանց բարելավում կրթության և զանազան առաջադրանքների միջոցով: Պետք է նշել, որ ՋՈւ մարդկային կապիտալի մեջ որակական ներդրման այս մոտեցումը բխում է ավստրիական բանակի ժամանակակից՝ զինվորի և սպայի նկատմամբ ստեղծված վերաբերմունքի սկզբունքից, որը փոխել է գերմանա-ավստրիական զինվորի ավանդական պատկերը՝ «որտեղ մենք ենք՝ այնտեղ մարտ ենք վարում» սկզբունքից տեղափոխելով «բարդ մարտահրավերը պետք է լուծել համապարփակ կրթությամբ» մոտեցմամբ¹²⁰:

Այն հիմնված է խորքային մասնագիտական և մարտական պատրաստվածության (այդ թվում՝ տեխնոլոգիական) ստեղծված առաջադրանքը լուծելու համար ինքնուրույն, ոչ դասական մոտեցումների վրա: Այս՝ որակապես նոր, մոտիվացված, ռազմական կարիերայի հանդեպ դրական առումով հավակնոտ, մարդկային և մասնագիտական բարձր որակներ ցույց տվող, ժամանակակից մտածելակերպ ունեցող արական և իգական սեռի երիտասարդ ենթասպաների կոհորտը կարող է լինել զինված ուժերը և հանրությունը կապող ամուր օղակներից մեկը՝ ներգրավվելով այդ թվում տարածքային պաշտպանության պատրաստության գործում որպես ակտիվ և բանիմաց սպայակազմ:

ՋՈւ կադրային ռեֆորմի այս մոտեցումները մենք բնութագրում ենք «զարգացիր և զարգացրու» տրամաբանության մեջ:

¹²⁰ Gruber T.P., Meyer B. 2008, Education and Training of Austrian Soldiers: Austrian Case. RPF/HSFK Research paper. Pp.14.

Կառավարում, վերահսկում և կապ որպես համալիր միասնական համակարգ

Ժամանակակից զինված ուժերի արդյունավետության, շարունակական ադապտացիայի և ռազմական անվտանգային ժամանակակից մարտահրավերներին համարժեք և արդյունավետ դիմակայելու ամենակարևոր նախապայմանը ժամանակակից՝ այն է ամբողջությամբ թվայնացված, ցանցակենտրոն, ինֆոկոմունիկացիոն, լայն առավելություններ ապահովող, մարտն ու զորքերի իրական ժամանակում կառավարման ու ուղղորդման միասնական համակարգն է: Այս առումով, ՀՀ ԶՈւ համար ամենացցուն օրինակները կարող են լինել Սինգապուրի, Էստոնիայի և ԱՄԷ ցանցակենտրոն C4 (command, control, communications, computers) տարբերակների կառուցման, ներդրման և պրակտիկ արդյունավետության օրինակները: Սինգապուրն այս առումով թերևս զորքերի և մարտի կառավարման ամենաառաջադեմ և ամենաներառական տարբերակներից է իր համալիր-գիտելիքահեն (integrated-knowledge based) մոտեցմամբ:

Դասական առումով, ուղղահայաց ցանցակենտրոն իրավիճակը զգալիորեն բարձրացնում է ոչ միայն ընդհանուր կառավարման մակարդակը՝ զորքերի ուղեղային կենտրոնին տալով մարտական իրավիճակի, սեփական և հակառակորդ զորքերի գործողությունները իրական ժամանակին մոտ գնահատելու հնարավորություն, այլև տեղեկատվական տեխնոլոգիաների շնորհիվ օպերատիվ և մարտավարական նշանակության (արբանյակային, օդային, ռադիոլոկացիոն, համագորային հետախուզության) ինֆորմացիայի ստացում իրական ժամանակում, գնահատում և արագ որոշումների կայացում: Ավելին, այն ըստ էության առնվազն գումարտակ-բրիգադ մակարդակի հետախուզահարվածային համալիրները միավորում է մեկ ընդհանուր ցանցակենտրոն հետախուզակրակային համակարգի մեջ, առավել արդյունավետ դարձնելով ավիացիա-ԱԹՍ, ավիացիա (ՀՕՊ)-ՌԷՊ-ԱԹՍ, ԱԹՍ-հրետանի, ցամաքային զորքեր-ԱԹՍ-հրետանի-ավիացիա իրական ժամանակում

կապակցվածությունն ու համալիր կորդինացված կիրառումը ինչպես նաև ժամանակի և տարածության մեջ զուգահեռ համահարթեցված աշխատանքը:

Ցանցակենտրոն կառավարման ուղղահայացությունը նաև հնարավորություն է տալիս ապահովելու առնվազն վաշտի և բարձր մակարդակի ստորաբաժանման մասնակցություն մարտական իրավիճակը գնահատելու, մարտ վարելու և իր մարտավարական կամ օպերատիվ իրավիճակում կառավարմանը և որոշումներ կայացնելու հարցում մասնակցություն ունենալու համար: Այլ կերպ ասած՝ ինչպես նշում է ցանցակենտրոն պատերազմի տեսության հայրերից ամերիկյան ծովակալ Օուենսը (1996), տեղեկատվական ցանցայնացումը ենթադրում է տարբեր ինքնակառավարվող համակարգերի մեկ միասնական կառավարման և ուղղորդման համակարգի, այն է՝ «համակարգերի-համակարգի» (system-of-systems) ստեղծումը, ինչը մարտական կազմակերպման, պլանավորման և մտահղացման իրագործման ընթացքում ադապտացման առավել արդյունավետ և առաջատար լուծում է:

Ենթադրում ենք, որ Հայաստանի համար առավել նպատակահարմար է ուղղահայաց *C4ISTAREW* (*Command, Control, Communications, Computers, Intelligence, Surveillance, Target Acquisition, Reconnaissance, Electronic Warfare*)¹²¹ մեկ միասնական կառավարման համակարգին ձգտելը: Ուստի, արդարացված ենք համարում հատուկ կապի և GPS տեղորոշման միջոցների հետ ներդաշնակ աշխատող կապի և հետախուզական արբանյակի հետ զուգահեռ նախագծել *C4ISTAREW* կոնցեպտ և դրա հիման վրա ստեղծել ձևակերպված պլան և որդեգրել իրագործման գործընթացի ճանապարհային քարտեզ, պատրաստել համապատասխան անձնակազմ *Մինգապուրում, Էստոնիայում, Շվեյցարիայում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, իրականացնել ՋՈւ նոր կառուցվածքի հետ համահարթեցում և ներդաշնակեցում:*

¹²¹ «Կառավարում, Վերահսկում, Կոմունիկացիա, Համակարգիչներ, Հետախուզություն, Մշտադիտարկում, Նշանառություն, Շրջադիտարկում, Էլեկտրոնային Պայքար»:

Ձուգահեռ ցանցակենտրոն C4ISTAREW համակարգը, օրինակ, թույլ կտա մարտավարական մակարդակում գործող լեռնագրոհային ԳՄԽ հետախուզային վաշտի նշանառուին միասնական ցանցի մեջ գտնվող էլեկտրոնային սարքավորմամբ ոչ միայն իրականացնելու օպերատիվ նշանառություն իր իսկ գումարտակային հրետանու համար, այլև՝ իրականացնելու դրա միջոցով ավիացիոն և հեռահար հրետանու նշանառություն իրական ժամանակով՝ ուղիղ աշխատելով նրանց հետ, ինչպես նաև իրականացնելու հրթիռի կամ հրետանային արկի իրական ժամանակում նպատականշում:

C4ISTAREW համակարգի ներդրումը հնարավորություն կտա նաև արդյունավետ ներդաշնակեցնել ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերը ՀՀ ՁՈւ հետ: Այստեղ կարևոր ենք համարում ընդգծել, որ ՀՀ ՁՈւ կոնցեպտուալ բարեփոխումների հետ համամունչ անհրաժեշտ են նման մոդելի և փիլիսոփայության բարեփոխումների անցկացումը որպես մեկ միասնական համապարփակ ռազմավարական մտահղացում: Ուստի, ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի կոնցեպտի նմանատիպ որակական վերափոխմանը, որը սահմանապահ զորքերը կվերածի արագ արձագանքման ուժերի՝ բրիգադ-գումարտակ-վաշտ մոդելով, զուգահեռ ներդնելով ավտոմատացված կրակի, հեռահար կառավարման, վաղ ահազանգման համակարգեր, հնարավորություն կտա հանել զինվորին կամ սահմանապահին խրամատի կամ դիրքի միջից: Ավելին, սա հնարավորություն կտա ՀՀ սահմանի վերահսկողությունը կազմաերպելու ինովացիոն լուծումների և ցանցակենտրոն կառավարման համակարգի միջոցով, իսկ պատերազմի սպառնալիքի կամ ռազմական գործողությունների դեպքում արդյունավետ կինտեգրի ՀՀ ՁՈւ գործողությունների հետ, միասնական ցանցակենտրոն համակարգով կառավարելով բոլոր զորատեսակներն, զորամիավորումներն ու ծառայությունները որպես մեկ օրգանիկ մարմնի կոորդինացված և ներդաշնակեցված բաղադրիչներ:

Այս առումով, արբանյակային մշտադիտարկման համակարգի և հատուկ ցանցաէլեկտրոնային կապի ստեղծումը, դրան զուգահեռ GPS տեղորոշման միջոցների

ներդրումը առնվազն վաշտ-գումարտակ-բրիգադ օդակով ունի էական և որոշիչ նշանակություն բոլոր դեպքերում ՁՈւ կիրառման արդյունավետությունը բարձրացնելու համար: Այն թույլ կտա ինտեգրվել մարտի համընդհանուր կառավարման համակարգում և իրենց նախատեսված հատվածներում որոշումների վրա ազդելու օպերատիվ հնարավորությամբ: Բացի այդ, արբանյակային և տեղորոշման միջոցներով հազեցումը կապահովի վաշտ-դասակ-գումարտակ օդակով ցամաքային միավոր-ավիացիա-ՌԷՊ կապի և օպերատիվ ու համատեղ արագ որոշում կայացնելու լայն հնարավորություններ:

Շահանակակից բանակային կապի և տեղորոշման նման ինտեգրված համակարգի ստեղծման համար, GPS համակարգի հետ ներդաշնակեցման պայմաններում ՀՀ զինված ուժերին անհրաժեշտ է ունենալ տիեզերական արբանյակ՝ նախատեսված հատուկ կապի, մշտադիտարկման, հետախուզության և կորորդինացիայի նպատակներով:

Տարածքային պաշտպանության համակարգի որդեգրում և իրագույյար մարտավարության սկզբունքների ներդրում

Ակնհայտ է, որ փոքր պետությունները, ելնելով օբյեկտիվ հանգամանքներից, ունակ չեն դասական (ոչ կոնվենցիոն) առումով բավարար ուժ կուտակել՝ իրենցից թվաքականով և ռազմատեխնիկական հազեցվածությամբ առավելություն ունեցող հակառակորդի ուժերին արդյունավետ դիմակայելու համար: Սակայն, փոքր պետության կողմից տարածքային պաշտպանության համակարգի և դրա ածանցյալ «ոչ կանոնավոր մարտ վարելու հայեցակարգի ներդրումը տալիս է հակառակորդի քանակապես մեծ կոնվենցիոն ուժերի և մարտավարության նկատմամբ շոշափելի համեմատական առավելություն»¹²²: Տարածքային պաշտպանության համակարգի և ոչ

¹²² Fabian S., 2015: *Irregular Warfare: The Future Military Strategy for Small States* (CreateSpace Independent Publishing Platform), p. 331.

կանոնավոր մարտավարության համադրումը արդյունավետ նախագծման, ներդրման և կիրառման արդյունքում, գործելով երկրի ՁՈւ հետ համահունչ կամ ինքնուրույն՝ կարող է անհամեմատ «մեծ կորուստներ հասցնել հակառակորդի ներխուժած մեծաքանակ զորքերին, խարխալել նրա լոգիստիկան, հասցնել մարդկային և տեխնիկական կորուստներ անսպասելի իրավիճակներում հակառակորդի թիկունքում՝ թողնելով խիստ բացասական բարոյահոգեբանական ազդեցություն»¹²³:

Տեսական առումով՝ Մինգապուրի, Էստոնիայի, Թայվանի կամ Ֆինլանդիայի տարածքային պաշտպանության կայացման փորձը, իսկ գործնական առումով Ուկրաինայի նմանատիպ համակարգի՝ ռուսական զորքերի դեմ գործելու արդյունավետության վերլուծությունը, թույլ է տալիս հաստատել այն ռազմագիտական եզրույթը, որ տարածքային պաշտպանության և ոչ կանոնավոր մարտ վարելու հայեցակարգի համադրումը էական դեր կարող է գրավել փոքր պետությունների ռազմական ռազմավարության մեջ և դասական զինված ուժերի հետ ներդաշնակեցմամբ զգալիորեն բարձրացնել հավանական հակառակորդի նկատմամբ սեփական ուժերով ռազմավարական զսպման գործոնը, իսկ ագրեսիայի դեպքում՝ հակառակորդի ուժերին անհամաչափ վնաս հասցնելու հնարավորությունները: Այս առումով, շվեյցարական ակտիվ պահեստագործի փիլիսոփայությունը պնդում է. «պատերազմ թույլ չտալու լավագույն միջոցը հասարակության մասսայական պատրաստակամությունն է ցուցադրել դիմադրություն»¹²⁴: Այս մոտեցումն իր հերթին ենթադրում է զսպում այն տրամաբանության վրա, որ հավանական հակառակորդն իր զին-օգուտ հարաբերակցության հաշվարկներում կգա այն եզրահանգմանը, որ ագրեսիա կիրառելու դեպքում, հավանաբար, ստիպված կլինի ենթադրյալ օգուտի համեմատ անհամաչափ մեծ զին վճարել, ինչն էլ կստիպի հետ կանգնել ուժի կիրառման տարբերակից:

¹²³ Ibid.,p. 337.

¹²⁴ Borchert H., 2001, Switzerland and Europe's Security Architecture: The Rocky Road from Isolation to Cooperation, in Reiter E. & Gartner H.(eds), Small States and Alliances (Physica-Verlag),pp.165.

Նույն այս տրամաբանության վրա հիմնվելով՝ Էստոնիայի ազգային պաշտպանության զարգացման 2013-2022 թթ. պլանը շեշտում է «Էստոնական հանրության արտաքին ագրեսիայի դեպքում ներդաշնակեցված և համընդհանուր դիմադրության կարողությունների ստեղծման և զարգացման առաջնահերթությունը»։ Այս առումով, Էստոնիան վերջին տարիներին ոչ միայն ավելացրել է իր պարտադիր ծառայության համար զորակոչվողների թվաքանակը, այլև զգալիորեն զարգացրել է ակտիվ ռեզերվի իր համակարգը՝ տարածքային սկզբունքի հիման վրա։

Ֆիննական «նահանգային զորքերը» (*Maakuntajoukot*), Էստոնական «պաշտպանության լիգան» (*Esti Kaitseliit*), սինգապուրյան Տոտալ պաշտպանության կոնցեպտի «հանրային դիմադրությունը» կամ, օրինակ, ուկրաինական «ազգային դիմադրության ուժերը» (*сили національного спротиву*), ըստ էության, նույն տարածքային պաշտպանության կոնցեպտի տարբեր ինստիտուցիոնալ և համակարգային օրինակներն են։ Նշենք, որ տարբեր երկրների տարածքային պաշտպանության համակարգերը միմյանց հետ ունեն թե նմանություններ, և թե տարբերություններ, ինչն իր հերթին բխում է տվյալ երկրի ռեսուրսների, ռամաքաղաքական պոտենցյալի և առաջնահերթությունների, ինչպես նաև հնարավոր և առկա մարտահրավերների բնույթից։

Դասական առումով, օրինակ, ըստ ֆիննական մեկնաբանության, տարածքային պաշտպանությունը հանդիսանում է «համապետական, ռազմական հատուկ միջոց, որն ուղղված է խաղաղ կամ արտակարգ ժամանակաշրջանում ռազմական սպառնալիքներին հակազդելուն, ինչպես նաև արտակարգ իրավիճակների ժամանակ բնակչության, տարածքի, շրջակա միջավայրի և սեփականության պաշտպանության հարցում օժանդակելուն»¹²⁵։ Ֆիննական մոդելը ենթադրում է տարածքային պաշտպանության ուժերի ստեղծում ողջ Ֆինլանդիայի տարածքում, որոնք որպես «նահանգային զորքեր» հանդես կգան որպես թեթև հետևակ, որը օժանդակ ուժ հանդիսանալով հիմնական ԶՈՒ համար, ոչ միայն կարող է հակառակորդի ուժերի

¹²⁵ Ֆինլանդիայի վարչապետի գրասենյակ 2009, Finnish Security and Defence Policy Report . [Online] https://www.files.ethz.ch/isn/156933/Finland_English-2009.pdf

նկատմամբ ջլատող գործողություններ իրականացնել, այլ՝ նախ և առաջ աջակցություն ցուցաբերել հենց սեփական թիկունքում՝ իրականացնել ռազմավարական նշանակության օբյեկտների, կոմունիկացիաների ու ժեղացված հսկողություն, սահմանների վերահսկողություն սահմանապահ զորքերի հետ միասին կամ նույնիսկ նրանց փոխարեն, իրականացնել հերթապահություն շրջանային ադմինիստրացիայի մարմիններում կամ ներգրավվել հակառակորդի դիվերսիոն խմբերի որոնման, հայտնաբերման և վնասազերծման գործողություններում:

Սակայն, ըստ ուկրաինական մեկնաբանության՝ «տարածքային պաշտպանությունը հիմնվում է տարածքայնության, մասսայականության, կարճ ժամանակի ընթացքում ձևավորման և ծավալման, տարածքային պաշտպանության ստորաբաժանումների գործողություններին կազմ ու պատրաստ լինելու, կենտրոնացված կառավարման և ապակենտրոնացված և վերահսկվող ինքնակառավարման պայմաններում գործելու, ինչպես նաև տարածքային պաշտպանության ուժերի, մարտավարությունների և միջոցների ակտիվ, վճռական և շարունակական կիրառումն ապահովող տարածքային պաշտպանության նպատակներին հասնելու համար, ներդաշնակ և կոորդինացված գործելու, ինչպես նաև երկրի ԶՈՒ տարածքային պաշտպանության ուժերի և միջոցների հետ շարունակական համադրման և հոգեբանական ու բարոյական գործոնների բազմակողմանի օգտագործման սկզբունքների վրա»¹²⁶:

Ի վերջո, մեծամասամբ հիմնված լինելով էստոնական տարածքային պաշտպանության և իսրայելական համընդհանուր դիմադրության ժամանակակից փիլիսոփայությունների վրա՝ Ուկրաինայի կողմից տարածքային պաշտպանության, կամ ինչպես ուկրաինական համակարգն է կոչվում՝ ազգային դիմադրության հիմնական մոտիվացիան կառուցված է այն սկզբունքի վրա, որ «յուրաքանչյուր Ուկրաինայի քաղաքացու դիմադրություն ցույց տալու պատրաստակամությունը հանդիսանում է կարևոր գործոն՝ զսպելու ռուսական ագրեսիան: Զինված,

¹²⁶ Ուկրաինայի Վերին Ռադա 2022, «Закон України про основи національного спротиву» (Відомості Верховної Ради (ВВР), 2021, № 41, ст.339). [Online] <https://zakon.rada.gov.ua/laws/show/1702-20#Text>

պատրաստված և դիմադրություն ցույց տալու պատրաստ ազգը ունակ է հետ մղել հակառակորդի հարձակվելու կամ զինված առաջխաղացման ցանկությունը»¹²⁷: Հետևաբար, այս համակարգի անկյունաքարային խնդիրն է ստեղծել այնպիսի մի միջավայր, որտեղ «հակառակորդի յուրաքանչյուր գորամիավորում զգա իրեն չափազանց «անհարմար» վիճակում՝ ոչ միայն առաջնագծում, այլ նաև յուրաքանչյուր բնակավայրում, տարածքում, որտեղ իրենք ոտք են դրել»¹²⁸:

Հանդիսանալով համաժողովրդական դիմադրության հիմնական գործիք՝ ուկրաինական և էստոնական տարածքային պաշտպանության առաջնային մարտական առաջադրանքն է կազմակերպված դիմադրության օջախների ստեղծումը ու հակառակորդի ուժերի առաջխաղացման խոչընդոտումը՝ ունակ լինելով կիրառելու անհատական զինատեսակների լայն շառավիղ կամ ունենալու դիմադրության զինամիջոցներ, ստեղծելու և կիրառելու գիտելիքներ: Այս տիպի ստորաբաժանումները ենթադրվում է, որ պետք է կիրառվեն ՁՈւ հրամանատարության կողմից մտահղացված հետախուզադիվերսիոն, ինֆորմացիոն-հոգեբանական կամ այլ հատուկ օրեպացիաների իրականացման համար: Սրանից ելնելով՝ թե էստոնիայի, և թե Ուկրաինայի պարագայում, տարածքային պաշտպանության դիմադրության շարժման ոչ կանոնավոր մարտավարության կոնցեպտի ներդրումը, դրան վերաբերող գիտելիքների փոխանցումն, իսկ պատերազմի դեպքում հակառակորդի թիկունքում հատուկ օպերացիաների կառավարումը պատկանում է այդ երկրների ՁՈւ Հատուկ օպերացիաների ուժերին, որոնք թե՛ էստոնիայի, և թե՛ Ուկրաինայի պարագայում կենտրոնացած են ոչ միայն դասական հետախուզադիվերսիոն, այլև ժամանակակից ոչ կոնվենցիոն, ոչ կանոնավոր պատերազմների և մարտավարությունների մեթոդաբանության զարգացմամբ: Որպես օրինակ կարող ենք մատնանշել Ռուսաստանի 2022 թ. փետրվարի 23-ի ռազմական ներխուժման հետևանքով ռուս-ուկրաինական պատերազմի ժամանակ Կիևի, Խարկովի և Սումի շրջաններում

¹²⁷ Ուկրաինայի ՁՈւ 2022, *Усе, що треба знати про тероборону та національний спротив*. [Online] <https://armyinform.com.ua/2022/01/01/use-shho-treba-znaty-pro-teroboronu-ta-nacziionalnyj-sprotyv/>

¹²⁸ Ibid.

տարածքային պաշտպանության գորամիավորումների հատուկ գործողությունների արդյունավետությունը, որը հարձակումներ գործելով ռուսական գորամիավորումների թիկունքային շարասյունների և լոգիստիկայի վրա՝ զգալի ազդեցություն էր թողել այդ ուղղություններով ռուսական բանակի առաջխաղացման տեմպերը կասեցնելու վրա:

Ինչպես Էստոնիայի, Ուկրաինայի կամ Մինգապուրի պարագայում, այնպես էլ Հայաստանում միայն զինված ուժերի արդյունավետ և էֆեկտիվ բարեփոխումը բավարար չէ: Տարածքային պաշտպանության համակարգի ներդրումը ենթադրում է ՀՀ քաղաքացու, յուրաքանչյուր հայ մարդու մտածելակերպի փոփոխություն, սեփական երկրի նկատմամբ պատասխանատվության զգացման ձեւավորում, գիտակցության ամրապնդումն առ այն, որ Հայաստանի անվտանգությունն ու պաշտպանությունը ՀՀ բոլոր քաղաքացիների պարտականությունն է: Այս առումով մեծ աշխատանք ունեն անելու թե լրատվամիջոցները, և թե պետական կառավարման մարմինները, սակայն նախ և առաջ՝ ՀՀ կրթական համակարգը: Տարածքային պաշտպանության տեսանկյունից ՀՀ կրթական համակարգի խնդիրն է քաղաքացուն փոքր տարիքից պատրաստել պետության, իր պետականության ինքնիշխանության և անվտանգության նկատմամբ, ինչպես նաև զարգացման և բարգավաճման համար անհատական և կոլեկտիվ պատասխանատվություն վերցնելու զգացումը:

Ենթադրում ենք, որ Հայաստանի պարագայում տարածքային պաշտպանության կոնցեպտի որդեգրումը, հարմարեցումն ու ներդրումը ինստիտուցիոնալ առումով կարող է հիմնվել աշխարհագրի գաղափարի վրա՝ առավել զարգացնելով այն, տալով համակարգային առումով տարածքային պաշտպանության սկզբունքներից բխող լայն առարկայական հնարավորություն: Այս առումով, կարևոր ենք համարում «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում 2020 թ-ի հոկտեմբերի 28-ին աշխարհագրին վերաբերող «Պաշտպանության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի¹²⁹ հետ զուգահեռ մշակել և ներկայացնել լրացում՝ «ազգային դիմադրության

¹²⁹ ՀՀ ԱԺ 2020, «Պաշտպանության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին». [Online] <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=147113>

հիմքերի մասին», որը ոչ միայն կլրացնի աշխարհագրի հայեցակարգը, այլև լրացուցիչ ուղենիշեր կմտցնի այս համակարգի կառուցվածքի, կազմակերպման, նպատակների, գործառույթների բաժանման և նշանակության մասով: Նաև կարևոր ենք համարում համապատասխան առանձին դոկտրինի համատեղ մշակումը ՊՆ և կառավարության կողմից, որը կլինի այս ոլորտում ընդգրկուն՝ ներառելով ոչ միայն տարածքային պաշտպանության գլխավոր գերծոնները, այլև իր մեջ հստակ կներառի աշխարհագրին ոչ կանոնավոր դիմադրություն ցույց տալու հմտությունների գիտելիքների տրամադրման կարգավորումները:

Կառուցվածքային և կազմակերպչական առումով, չնայած որ հանրությանը տարածքային պաշտպանությանը պատրաստելը ենթադրում է համապատասխան ենթակառուցվածքների և ճկուն ու տրամաբանական համակարգի ստեղծում երկրի ղեկավարության և ՋՈւ կողմից, այն նախ և առաջ մեծ աշխատանք և ջանք է ենթադրում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: ՋՈւ և տեղական ինքնակառավարման մարմինների յուրահատուկ ինտեգրումը ոչ միայն ենթադրում է, օրինակ, ռազմահայրենասիրական միջոցառումների խրախուսումը տվյալ շրջաններում, այլ նախ և առաջ ենթադրում է հստակ կառուցվածքային և գործառնական պարտականությունների սահմանում:

Այսպիսով, տարածքային պաշտպանության մեջ մտնում է միմյանց հետ ներդաշնակեցված երեք բաղադրիչ. ռազմական, քաղաքացիական և ռազմաքաղաքացիական:


Տարածքային պաշտպանության կամ, Հայաստանի պարագայում, նորացված աշխարհագրի **ռազմական բաղադրիչն** իր մեջ ներառում է ռազմական կառավարման մարմիններ, տարածքային կամավորական անձնակազմին պատրաստող ՋՈւ համապատասխան ստորաբաժանման անձնակազմ, համապատասխան ռազմական պատրաստության ենթակառուցվածքներ, տրանսպորտային միջոցներ և զինապահեստներ:

Քաղաքացիական բաղադրիչը ներառում է պետական ինստիտուտներ, տարածքային կառավարման՝ մարզային եւ համայնքային մարմիններ, որոնք ներգրավվում են տարածքային պաշտպանության գործում:

Ռազմաքաղաքացիական բաղադրիչն ինտեգրում է վերոնշյալ երկու բաղադրիչները՝ ներառելով բուն աշխարհագրի կամավորական մարտական գործառնությունները, որոնք կազմավորվում են համապատասխան մարզային կամ համայնքային տարածքներում, ինչպես նաև դրանց համապատասխան շտաբներն ու քաղաքացիական մատակարարման ենթակառուցվածքները:

Այս համակարգի առավելությունը կայանում է նրանում, որ պատերազմի դեպքում, տարածքային պաշտպանության աշխարհագրային ստորաբաժանումները ձևավորվում են երկրի ողջ տարածքով: Յուրաքանչյուր մարզ, շրջան, համայնք ունի տարածքային պաշտպանության իր աշխարհագրային ստորաբաժանումներն ու ենթակառուցվածքները՝ կազմակերպված, ԶՈւ հետ ներդաշնակեցված և մեկ համընդհանուր համակարգի կողմից կառավարվող, որի բնակչության մի մասը շատ կարճ ժամանակում ունակ կլինի արագ ներկայանալ հավաքագրման կետեր՝ պատրաստ իրականացնելու իրենց առջև դրված առաջադրանքն իրենց բնակչության միջավայրում: Այն, ըստ էության, ստեղծում է իրենց ամենօրյա կյանքով ապրող թե արական, և թե իգական սեռի քաղաքացիների ցանց, որոնք ամեն պահի կարող են վերածվել մարտական ստորաբաժանման՝ ունենալով ոչ կանոնավոր մարտ վարելու գիտելիքներ՝ տիրապետելով թե զենքին և զինատեսակներին, և թե կապի միջոցներին ու մարտական տեխնիկային:

Գծապատկեր 3. Մեր կողմից առաջարկվող ՀՀ ՏՊ կառուցվածքի և բաղադրիչների հիմնախառն սխեման:



Մարզային և համայնքային ղեկավարների և ՏԻՄ անդամների ներգրավումը միտված է ապահովելու տեղերում պաշտպանական համակարգի գործընթացի օպերատիվություն և արդյունավետ կառավարում: Այն ոչ միայն վերաբերում է տարածքային պաշտպանության տեղական կամավորական ստորաբաժանումների օպերատիվ ծավալմանը, այլև ճգնաժամային իրավիճակներում սեփական դերի, տեղի և անելիքների հստակ պատկերացմանը՝ քաղաքացիական բնակչության կազմակերպման և ապահովման առումով:

Հատկանշական է, որ արդյունավետ տարածքային պաշտպանությունը ենթադրում է նաև ԶՈւ տարածքային պաշտպանության հրամանատարության ստեղծում ԶՈւ-ին կից որպես հատուկ մարմին, որն իր տարածքային կառավարման շտաբներն է ստեղծում մարզերում: Այն ենթադրում է ԶՈւ առանձին սպայական կազմի հավաքագրում և համապատասխան պատրաստություն կոնկրետ այս գործառույթի

իրականացման համար, որն էլ դառնում է աշխարհագրային համակարգի հիմքը՝ կամավորներին վարժեցնող անձնակազմն ու հրամանատարային կորիզը: Կամավորներ ներգրավելու և ակտիվ պահեստագործի կարգավիճակում լինելու հանգամանքը պետք է գրավիչ և առավելություններ տվող երևույթ հանդիսանա: Այն կարող է ենթադրել մի շարք արտոնություններ կրթության կամ տրանսպորտից օգտվելու բնագավառում, կամ մարզերում գյուղատնտեսական արտոնությունների ստեղծման ձեռով: Բացի այդ, տարածքային պաշտպանության տարիքային նորմատիվների կամ գորահավաքների ընթացքում պլանային պարապմունքներն իրականացնելու արդյունքում ֆինանսական կամ կարիերային խրախուսում:

Համակարգերի, սպառազինությանների ձեռքբերման և արտադրության ռազմավարության տրամաբանություն

ՀՀ ՊՆ և ԶՈւ սպառազինության ձեռքբերման տրամաբանության անկյունաքարային սկզբունքը պետք է կապակցված լինի հեռանկարում ռազմական գործողությունների բնույթի և մարտավարական հնարավոր առաջադրանքների ձևակերպման և իրականացման հետ: Սրա հետ մեկտեղ պետք է հաշվի առնվեն ՀՀ ԶՈւ նոր կառուցվածքի, տարածքային պաշտպանության համակարգի ներդաշնակեցման և որակապես նոր կառավարման համակարգի համգամանքները, ինչպես նաև ռազմական գիտության զարգացման և գործնական ռազմական գործողություններում հաշվարկելի առկա միտումները:

Այս հայեցակարգային մոտեցումն իր հերթին կբխեցնի համապատասխան վերլուծության ու գնահատականի՝ թե ինչ դասի և չափանիշների զինատեսակների ձեռքբերման կարիք կա զինված ուժերում: Այլ կերպ ասած՝ նոր և ժամանակակից զինատեսակների ձեռքբերման անհրաժեշտությունը պետք է բխի ոչ միայն ԶՈւ հնարավոր պոտենցիալ կիրառման ռազմավարական մտահաղացումից, այլ նաև այն սկզբունքից, թե հնարավոր կլինի արդյոք այդ զինատեսակները արդյունավետորեն

ինտեգրել և համակցել բարեփոխումների ընթացքում՝ ա) ԶՈւ վերափոխվող կառուցվածքի, բ) այդ կառուցվածքին համապատասխան միասնական ցանցակենտրոն կառավարման համակարգի և միասնական հետախուզահարվածային ավտոնոմ համակարգի ներդրման հետ: Միևնույն ժամանակ, զինատեսակների ձեռքբերումը, արտադրությունն ու այդ զինատեսակերի համակարգային ինտեգրումը պետք է կառուցված լինի ապագայում բարձր տեխնոլոգիական մարտ վարելու կարողությունների պրոյեկտման տրամաբանության մեջ:

Բացի այդ, վստահ ենք, որ այս ոլորտում ՊՆ և ԶՈւ բարեփոխումների արդյունքում սպառազինության ձեռքբերման միջնորդավորված վատ և կոռուպցիոն ավանդույթը հիմնովին կվերանա: ՀՀ զինված ուժերը ժամանակակից զենք և սպառազինություն ձեռք կբերեն արտադրող կամ աղբյուր հանդիսացող տվյալ երկրի զինված ուժերից՝ ուղիղ գործարքի մեջ մտնելով նրանց հետ: «Ձեռք բերենք այն, ինչ առաջարկում կամ տալիս են» սկզբունքը կփոխարինի «գտնել և ձեռք բերել այն, ինչ մեր կարիքներին իրականում պետք է» սկզբունքով:

Հասկանալի է, որ ժամանակակից ռազմական տեխնոլոգիաների ձեռք բերումը կապված է զգալի նյութա-ֆինանսական ռեսուրսների ներդրման հետ: Այս տեսակետից պետք է փորձել առաջնորդվել իսրայելական և շվեյցարական կորպորատիվ բանակի տրամաբանությամբ, այն է՝ «բանակը ոչ միայն պետք է պաշտպանի երկիրը, այլև կարող է պահել ինքն իրեն» սկզբունքով՝ նկատի ունենալով ՌԱՀ և ՌԳՀ մրցունակ արտադրանքի շուկաներում համապատասխան «որմնախորշի» զբաղեցման միջոցով: Ուստի, բանակում նյութաֆինանսական ներդրման տրամաբանությունը պետք է նմանվի բիզնես-ներդրման հետ, որի խնդիրը կլինի որոշ ժամանակ անց ցույց տալ հստակ, մրցունակ և կիրառելի արդյունք: Ավելին, ժամանակակից պատերազմների վերլուծությունը ցույց տվեց, որ ավելի արդյունավետ է շեշտը դնել ոչ թե ստացիոնար կամ քիչ շարժունակ, բարոյապես հնացող, ոչ ժամանակակից կրակի կառավարման հնարավորություններով, բայց մատչելի զինատեսակների մեծաքանակ ձեռք բերման

տրամաբանության վրա, այլ գերշարժունակ, գերճշգրիտ, բուսական ընթացքում բացազատման և/կամ դիրքի արագ փոխման, թվային կրակի կառավարման հնարավորությամբ ժամանակակից, բայց համեմատաբար քիչ քանակի, ավելի թանկ զինատեսակների ձեռք բերման ակնհայտ առավելության վրա, որը ոչ միայն կլինայի կյանքեր, այլ նաև կապահովի հակառակորդի ուժերի նկատմամբ առավել էֆեկտիվ կրակային ներազդեցություն: Հետևաբար, գնումների գործընթացն ու ռազմավարությունը պետք է հիմնված լինի կարճաժամկետ (առնվազն մեկ տարի) և միջնաժամկետ (երեք տարի) պլանի կազմման և նրա արդյունավետ իրականացումը վերահսկելու համակարգային մեխանիզմների ներդրման վրա՝ համադրելով արտաքին ծագում ունեցող ռազմական տեխնոլոգիաների ձեռքբերման և ներդրման գործընթացը տեղական տեխնոլոգիական ներուժի զարգացման խնդիրների հետ: Ըստ էության, այն պետք է համապատասխանի Պաշտպանության և Զսպման կոնցեպտի ժամանակակից չափանիշներին:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարծում ենք, որ ՀՀ զինված ուժերը առաջնահերթությունը պետք է տան ժամանակակից ոչ կոնտակտային և գերճշգրիտ բնույթի տեխնոլոգիական մարտ վարելու պլատֆորմների և կոմպոնենտների ձեռքբերմանը, որը հնարավորություն կտա ստեղծել ժամանակակից հետախուզահարվածային համալիրներ՝ իրական ժամանակում կամ իրական ժամանակին մոտ թիրախի հայտնաբերման և հեռահար ճշգրիտ կրակային ազդեցության նպատակով: Այնպիսի հետախուզա-հարվածային համալիրներ, որոնք ունակ են ցուցադրել բարձր շարժունակություն և մանրականություն, ինչպես նաև ունակ են ապահովելու տարբեր գորամիավորումների համակարգերի և պլատֆորմների միջև արդյունավետ կապակցվածություն՝ իրական ժամանակին մոտ գործելու, ինչպես նաև օժտված են հարվածային համակարգի արձակված զինամթերքի իրական ժամանակում լազերային նպատականշումն ու կորեկցիա իրականացնելու հնարավորությամբ: Այս առումով առաջնահերթություն կարող է տրվել կոնկրետ թիրախներին կամ շարժվող թիրախներին հեռահար հարվածներ հասցնելու միջոցներին (կառավարվող (ինքնագնաց) հրթիռա-հրետանային միջոցներ, և այլն), և

դրանց տեխնիկական հնարավորությունների (կրատի կառավարման թվային/կոմպյուտերային և թիրախի հայտնաբերման թվային համակարգեր) ԱԲ/ԱԹՄ ինքնակառավարվող համակարգերի հետ համակցումը, ինչպես նաև բարձր շարժունակության և ինքնուրույն/ավտոնոմ գործող լեռնամարտավարական բրիգադների և դրանց հիմնական օպերատիվ-մարտավարական բաղադրիչ հանդիսացող գումարտակա-մարտավարական խմբերի հետ մեկ միասնական կառավարման և ուղորդման ինտեգրվելու հնարավորությունը:

Ժամանակակից ինքնագնաց կրակի կառավարման և տեղորոշման թվային համակարգերով հագեցված հրթիռա-հրետանային համակարգերի անհրաժեշտության հետ մեկ տեղ, Պաշտպանության և Զսպման հնարավորությունների բարձրացման նախնական առաջնահերթություն ենք համարում ՀՀ ԶՈւ կողմից դյուրատար «կրակեցիր-մոռացար» սկզբունքով գործող ինքնակառավարվող չորրորդ (Չինաստան, Շվեդիա, Մեծ Բրիտանիա) և հինգերորդ (Ֆրանսիա, Իսրայել) սերունդների հակատանկային համակարգերի ձեռք բերումը, որը զգալիորեն կչեզոքացնի հակառակորդի տրահատեխնիկական գերակայությունը:

Ի վերջո, ձեռք բերվող տեխնոլոգիաների ողջ ներկայակալը պետք է հնարավոր լինի ինտեգրել ներդաշնակեցված *CAISTAREW միասնական կառավարման և վերահսկման համակարգի հետ:*

Առաջնահերթություններից ենք համարում թվային պաշտպանված ռադիոկապի համակարգերի (դասակ և բարձր մակարդակի), ռազմատիեզերական կապի համակարգի (ալիքի) ներդրումը:

Հեռահար, բարձր ճշգրտություն ունեցող, կառավարվող արձակված հրթիռ/հրետանային արկը ընթացքում կառավարելու հնարավորությունը նախատեսող հրթիռահրետանային միջոցների ձեռքբերում, հետախուզահարվածային համալիրների ստեղծում, դրանց ներդաշնակեցում նոր կառուցվածքային և ցանցակենտրոն միասնական կառավարման հետախուզա-կրակային համակարգերի մեջ: Հրթիռահրետանային ստորաբաժանումների հագեցում սեփական

հետախուզության, այլ զորատեսակների հետ ուղիղ օրեպահիվ կապի, GPS տեղորոշման, իրական ժամանակին մոտ մարտադաշտը դիտարկելու և գնահատելու համալիր միջոցներով:

Այս համատեքստում, պակաս կարևոր չենք համարում ավանդական հրետանա-ականանետային միջոցների ապահովումը կրակի կառավարման և տեղորոշման թվային համակարգերով, ինչպես նաև ծանր (82; 120մմ) ականանետային համակարգերի «անիվների վրա դնելը»՝ շարժունակությունն ապահովելու համար՝ դրանք ինտեգրելով ինքնագնաց պլատֆորմների հետ՝ լեռնամարտավարական գումարտակամարտավարական ստորաբաժանումների մոբիլության բարձրացման համատեքստում:

Կարևորում ենք նաև տարածքային պաշտպանության համակարգի անձնակազմի իրեգուլյար մարտավարության հետ համահունչ տեխնոլոգիական մարտ վարելու (օրինակ՝ ԱԹՍ միջոցների մասսակայանացում) ունակության բարձրացումը և ցանցակենտրոն կառավարման համակարգի շրջանակներում գործելու հնարավորությունը:

Ռազմագիտական համալիրի ստեղծում

Ռազմագիտական համալիրի (ՌԳՀ) ռազմավարական նպատակը Հայաստանում ռազմական նշանակության գիտական պոտենցիալի ստեղծումն է, այնուհետև գիտելիքի արտադրության և արդյունավետ պրակտիկ ներդրման համակարգայնացումն է, դրա փորձարկմանն ու արտահանմանը ուղղված ՊՆ և ԶՈւ քայլերի գիտատեխնիկական սպասարկումն ու ադապտացիայի ապահովումը:

ՌԳՀ ստեղծումը ենթադրում է Հայաստանում ռազմական գիտության պրոֆեսիոնալ հետազոտության և զարգացման համար մեկ կառուցվածքային մտահղացման շրջանակներում ինտեգրել ՀՀ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական

ակադեմիան, ՌԱՀ գիտահետազոտական հաստիք, Դրաստամատ Կանայանի անվան Հետազոտական ինստիտուտը: Ամենակարևորը, սակայն, ՀՀ ԶՈւ Ռազմական համալսարանի հիմնելն է՝ ՀՀ ԶՈւ, ինչպես և այլ երկրների ԶՈւ միջին և բարձր սպայական անձակագրի ռազմական բարձրագույն կրթության ստանալու, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական անձանց կողմից գիտահետազոտական գործունեություն ծավալելու համար:

Ռազմական համալսարանի առանցքային խնդիրն է լինելու ավանդական և ժամանակակից ռազմական գիտության խորքային հետազոտությունը, նոր կոնցեպցիաների զարգացումն ու դրանց պրակտիկ ներդրումը ՀՀ զինված ուժերում, ինչպես նաև ռազմական գիտելիքի ստեղծումը, կիրառումն ու արտահանումը: Այս առումով ՌԳՀ-ն ինստիտուցիոնալ առումով կապված կլինի առաջարկվող ՌԱՀ տեխնոլոգիական և ինովացիոն գործակալությունների հետ:

Գաղտնիք չէ, որ ժամանակակից ռազմական գիտության, ինչպես նաև, ռազմական տեխնոլոգիաների ու մարտ վարելու ժամանակակից արվեստի և արհեստի լեզուն հիմնականում անգլերենն է: Ուստի, ՌԳՀ-ի և ռազմական համալսարանի խնդիրն է՝ նպաստել և համակարգային հիմքի վրա դնել ՀՀ ԶՈւ նոր սերնդի միջին ու բարձր սպայակազմի անգլերեն լեզվի իմացությունը, մասնագիտական անգլերեն լեզվով ժամանակակից գրականությանը հասանելի դարձնել և արդի ռազմագիտական դիսկուրսին նրանց տեղյակ ու մասնակից դարձնել:

Ներկայումս ռազմական արվեստն ու գիտությունը գտնվում են սրընթաց զարգացման մեջ: Աշխարհում արագորեն զարգացող Չորրորդ ինդուստրիալ հեղափոխության պայմաններում բարձր տեխնոլոգիաների, մասնավորապես՝ Արհեստական բանականության և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը պաշտպանական համակարգերում մշտապես նորարարական մոտեցումներ ու լուծումներ է ի հայտ բերում՝ մոդիֆիկացնելով և զարգացնելով ռազմական արվեստն ու մարտ վարելու մարտավարություններն ու մոտեցումները: ՀՀ ԶՈւ միջին, բարձր, ինչու չէ նաև ցածր օղակի սպայակազմը, պրակտիկ կրթության և հմտությունների

կատարելագործումից բացի պետք է գտնվի աշխարհում տեսական ու նոր բնույթի մարտավարությունների ու մարտ վարելու նորարարական/տեխնոլոգիական կոնցեպտների վերաբերյալ գիտելիքների շարունակական կուտակման մեջ: Դա հնարավոր է միայն ռուսերեն և հատկապես անգլերեն լեզվով աղբյուրների, վերլուծությունների ու մասնագիտական գրականության հետևողական ընթերցմամբ և գիտական աշխատանքներով:

Այս առումով, ինչպես շեշտել է ՌԴ ԳՇ պետ Գերասիմովը, «ռազմական գիտության առանձնահատկությունը նրա՝ պրակտիկայի նկատմամբ առաջանցիկ դերն է: Այն է՝ ժամանակակից ռազմական գործողությունների հնարավոր բնույթի որոշումը, ռազմական և ոչ ռազմական բնույթի միջոցների համակարգի ձևավորումը՝ անդադար, նպատակասլաց հետազոտությունների իրականացման միջոցով»¹³⁰:

Բխեցնելով այս տրամաբանությունից՝ Հայաստանում ռազմական գիտության խնդիրն է ներկա և ապագա պատերազմների կանխատեսմամբ, նոր բնույթի ռազմական գործողությունների օպերատիվ-մարտավարական արվեստի տեսական հիմնավորմամբ և պրակտիկ ներդրմամբ զինված ուժեր ունենալը:

Առաջարկություններ

Խորքային և համապարփակ բարեփոխումներ և նորարարական-ռազմատեխնիկական և կառուցվածքային արդիականացումն իրականացնելու համար յուրաքանչյուր պետական համակարգում ենթադրվում է նախ համակարգային մտածելակերպի էվոլյուցիա. երևույթ, որը ստատիկ չէ և գտնվում է մշտական դինամիկայի և շարունակականության մեջ՝ պայմանավորված արտաքին և ներքին զարգացումների ռեֆլեկսիայից և շարունակական մասնագիտական, համակարգային

¹³⁰ Герасимов В., 2019, Развитие военной стратегии в современных условиях. Задачи военной науки. [Online] <http://www.avnrf.ru/index.php/vse-novosti-sajta/1149-razvitie-voennoj-strategii-v-sovremennykh-usloviyakh-zadachi-voennoj-nauki>

կոզնիտիվ աշխատանքից: Այդ էլ հանդիսանում է դինամիկ ռազմավարական ադապտացիայի շարժիչ ուժը: Առաջին հերթին պետք է ընդունել ու գիտակցել, որ Հայաստանի Հանրապետության անվտանգությունն ապահովելու և ժամանակակից բարդ և կոնֆրոնտացիոն միջավայրային աշխարհակարգում սպառնալիքները զսպելու կամ չեզոքացնելու համար պետք են համապարփակ, հիմնարար և համակարգային փոփոխություններ թե՛ կառավարման համակարգի ողջ տրամաբանության, և թե՛ համակարգի արդյունավետության գնահատման համատեքստում:

- Կարևոր ենք համարում մեր կողմից մատնանշած փոքր պետությունների փորձի ուսումնասիրության և քննության հիման վրա ՀՀ Կառավարության և ՀՀ ԱԺ կողմից համատեղ շարունակական ադապտացիայի և համապարփակ նորարարության ռազմավարության ստեղծումը, որը հնարավորություն կտա ներդնել նոր չափանիշներ և նորմեր պետության տարբեր ոլորտների զարգացման համար, այդ թվում՝ անվտանգային համակարգի:
- Այս ռազմավարությունից բխեցնելով՝ կարևորում ենք ՀՀ արտաքին քաղաքականության կոնցեպտի և սպառնալիքների գնահատման փաստաթղթի մշակումը՝ անվտանգային միջավայրի ռեգուլյար մոնիթորինգի (security environment regular monitoring) սկզբունքի հիման վրա:
- Բխեցնելով այս ռազմավարությունից՝ առաջնահերթ ենք համարում կադրային քաղաքականության կոնցեպտի ստեղծումը, որը հիմնված կլինի մեր կողմից մատնանշած փոքր պետությունների փորձի ուսումնասիրության վրա:
- Անչափ կարևոր ենք համարում ՀՀ ԶՈՒ ռազմական դոկտրինի խորքային թարմացումն ու մի շարք անկյունաքարային բաղադրիչների, այդ թվում՝ ռազմավարական ինքնաբավության, նոր կառուցվածքի, ինովացիայի և կանխարգելիչ հարվածի՝ որպես ակտիվ պաշտպանության/զապման միջոցի դոկտրինալ որդեգրմամբ:
- Զուտ պաշտպանական ոլորտում նախ կարևորում ենք Չափորոշիչների կիրառման և արդյունավետ գնահատման կոնցեպտի ստեղծումը, որը հնարավորություն կտա վերահսկելու և գնահատելու առկա նորմերից

վերոնշյալ ժամանակակից չափորոշիչներին անցումն ու դրանց արդյունավետ ներդրումը՝ ՁՈւ մարտունակության բարձացումն ու մարտական առաջադրանք կատարելու արդյունավետությունը կտրուկ բարձրացնելու համար: Պատկերավոր ասած՝ գործիքի ստեղծում, որը կկառավարի և կվերահսկի խորհրդային/ռուսական ռազմական դոկտրիններից անցումը ժամանակակից՝ ՆԱՏՕ-ի չափորոշիչներին համապատասխանող համակարգերին:

- Առաջարկում ենք ստեղծել փուլային պլան՝ ՁՈւ խորքային բարեփոխումները կառավարելու, այդ բարեփոխումները սկսելու և ավարտին հասցնելու և չափելի արդյունքները գնահատելու համար՝ առաջարկված ՁՈւ կառուցվածային տրամաբանությունից ելնելով:
- Կարևոր ենք համարում ՀՀ աշխարհագրին վերաբերող օրենսդրության վերանայումը, համալրումն ու դրա հիման վրա տարածքային պաշտպանության և ասիմետրիկ մարտավարության դոկտրինի ստեղծումը:
- Դրա և ՁՈւ համապարփակ և հիմնարար ռեֆորմների հետ համահունչ կարևորում ենք ինֆորմացիոն-սեմանտիկ և կիբեր օպերացիաների ռազմավարության մշակումը:
- Հիմնական համակարգերի, սպառազինությանների ձեռքբերման և արտադրության ռազմավարությունից բխեցնելով՝ կարևորում ենք ՀՀ ռազմական ինովացիոն և տեխնոլոգիական գործակալությունների ստեղծումն ու ընդհանուր կառավարումը որպես ՀՀ ՌԱՀ հիմք:
- Սրան զուգահեռ ՀՀ ՌԱՀ ոլորտի գործունեությունը ընդհանուր համակարգելու և ռազմավարական տեսլականն, ինչպես նաև արված աշխատանքն այդ ուղղությամբ չափելու համար առաջարկում ենք մշակել Օպերատիվ ինքնաբավության կոնցեպտ, որը կներդաշնակեցնի տեղական արտադրանքի ստեղծումը ձեռք բերվող միջոցների հետ՝ նպատակ ունենալով, օրինակ, ստեղծել ռազմամթերքի մի շարք տեսակների տեղական արտադրություն և մոդիֆիկացիա, ինչն էլ իր չափով կմոտեցնի Օպերատիվ ինքնաբավության ռազմավարական նպատակին:

- Կարևորում ենք ռազմագիտական համայնքի հասկացության կոնցեպտուալիզացումն ու վերակառուցումը՝ ՀՀ ՁՈւ ռեսուրսկտորիզացիայի հետ համահունչ: